# 21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

4 (68)

ԵՐԵՎԱՆ

2016

# 21-ՐԴ ԴԱՐ
## տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **4 (68), 2016**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ալեքսանդր Գասպարիշվիլի**
*Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)*
**Ալեքսանդր Կորնիլով**
*Նիժնի Նովգորոդի Ն.Ի. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր (Նիժնի Նովգորոդ, ՌԴ)*
**Աշոտ Թավադյան**
*ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**Արամ Սաֆարյան**
*Բանասիրական գիտությունների թեկնածու*
**Արթուր Աթանեսյան**
*ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.*
**Բաբկեն Վարդանյան**
*«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական*
**Գագիկ Հարությունյան** *(համակարգող)*
*«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.*
**Զավեն Եկավյան**
*Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)*
**Էդուարդ Լ. Դանիելյան**
*«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.*
**Կարեն Վ.Կարապետյան**
*Տնտեսագիտության դոկտոր (Մոսկվա, ՌԴ)*
**Հրանուշ Հակոբյան**
*ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.*
**Միհրան Դաբաղ**
*Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)*
**Մուշեղ Լալայան**
*ՀՀԿ փոխնախագահ*
**Սամվել Մանուկյան**
*IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.*
**Սեյրան Օհանյան**
*ՀՀ Պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ*
**Սերգեյ Գրինյան**
*Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)*
**Վահագն Ագլյան**
*«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ*
**Վարդան Աթոյան**
*«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ*
**Վարդան Հարությունյան**
*«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.*

# 21-ՐԴ ԴԱՐ

**տեղեկատվական-վերլուծական հանդես**

**Թիվ 4 (68), 2016թ.**

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Գլխավոր խմբագիր*
**Գագիկ Հարությունյան**

*Գլխավոր խմբագրի տեղակալներ*
**Վահագն Ագլյան**
**Վարդան Աթոյան**

*Պատասխանատու խմբագիր*
**Խոնարհիկ Քարաուղլանյան**

*Պատասխանատու քարտուղար*
**Լուսինե Բաղրամյան**

**Աննա Ժամակոչյան**
**Արեստակես Սիմավորյան**
**Վահրամ Հովյան**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

***Գագիկ Հարությունյան***
«Գունավոր հեղափոխություններ» ……..……...…... 4

***Գագիկ Տերտերով***
Տեղեկատվական և դեինդուստրիալիզացված հասարակություններ ……..……..…..... 16

***Վարդան Աթոյան***
Պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցությունը ազգային անվտանգության համատեքստում ……..…...……...…. 25

***Հրայր Փաշայան, Լիանա Բալայան***
Ղարաբաղյան հակամարտությունը 1994թ. հրադադարի և 2016թ. ապրիլյան պատերազմի համատեքստում ……... 40

***Վահագն Աֆյան***
Իրան-Վրաստան հարաբերություններն ու Հայաստանի գործոնը ……..…….. 55

***Դավիդ Սարկիսյան***
Ռուս-գերմանական հարաբերությունների հեռանկարները .....…. 69

***Կարեն Գրիգորյան***
ԵԱՏՄ-ին ՀՀ ինտեգրման մի շարք հիմնահարցեր …..…... 83

***Հայկ Թորոսյան***
Անվտանգության ոլորտում ՀՀ-ԵՄ հարաբերությունների խորացման հնարավորության մասին …..... 90

***Ստեփան Ստեփանյան***
Որոշումների ընդունման առանձնահատկությունները բանակցային գործընթացում ……..……..... 100

***Դավիթ Առաքելյան***
«Ռազմավարական ընտրություն» տեսությունը և ռուս-չինական հարաբերությունները Կենտրոնական Ասիայում ……..……..……. 107

***Վաչիկ Բրուտյան***
Մանկավարժական մարդաբանությունը մանկավարժական և մարդաբանական գիտությունների համակարգում …... 118

# «ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

## *Գագիկ Հարությունյան*[*]

*Բանալի բառեր* ՝«գունավոր հեղափոխություններ», թիրախ հասարակություններ, «ազդեցության գործակալներ», տեխնոլոգիաներ։

Տեղեկատվական տարածքում այսպես է ընդունված անվանել այս կամ այն երկրում նախապես պլանավորված զանգվածային բողոքների շարքը, որն ավարտվում է տիրող քաղաքական վարչակազմի տապալմամբ։ Այդ գործընթացներում լայնորեն կիրառվում են տեղեկատվական–հոգեբանական ազդեցության գործողությունները և դրանցից բխող էֆեկտները [1, 2]։ Դասական «գունավոր հեղափոխություններ» են համարվում, մասնավորապես.

- «Բուլդոզերային հեղափոխությունը» Հարավսլավիայում, 2000թ.,
- «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում, 2003թ.,
- «Նարնջագույն հեղափոխությունն» Ուկրաինայում, 2004թ.,
- «Կակաչների հեղափոխությունը» Ղրղզստանում, 2005թ.,
- «Արժանապատվության հեղափոխությունն» Ուկրաինայում, 2013-2014թթ., որն ավելի հաճախ ուղղակի անվանում են «Եվրամայդան»։

Վերը ներկայացվածների շարքին են դասվում նաև «Լոտոսի հեղափոխությունը» Եգիպտոսում և Թունիսի իշխանափոխությունը՝ 2011թ. սկսված «Արաբական գարնան» համատեքստում։ Որոշ հետազոտողներ «գունավոր» են համարում 1990-1991թթ. Ռուսաստանում կատարված «Ազատական հեղափոխությունը»։

Եղել են նաև նման հեղափոխությունների անհաջող (այս կամ այն չափով) փորձեր Բելառուսում (2006թ.), Հայաստանում (2008թ.), Մոլդովայում (2009թ.), Ռուսաստանում (այսպես կոչված «Բոլոտնայա»[1] հեղափոխությունը» 2011-2013թթ.) և Չինաստանում (2011թ.)։ «Հասմիկների հեղափոխության» ժամանակ Շանհայում ակտիվիստներին հաջողվեց անգամ ժամանակավորապես զավթել հեռուստակայանը և ուղիղ եթերում ներկայացնել իրենց նպատակները։

---

[*] «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն։

[1] Անվանումը կապված է Մոսկվայի *«Болотная»* («Ճահճային») հրապարակի հետ, որտեղ տեղի էին ունենում հիմնական իրադարձությունները։

Ինչպես տեսնում ենք, «գունավոր հեղափոխությունները» կամ դրանց իրագործման փորձերը բավական հաճախ են կատարվում, դրանք կազմում են մեր ժամանակաշրջանի քաղաքական զարգացումների մի մասը: Անշուշտ, մարդկության պատմության ընթացքում եղել են հեղափոխություններ («ֆրանսիական», «անգլիական», «ռուսական» կամ «չինական»), որոնք պայմանավորված էին սոցիալ–տնտեսական կացութաձևի և ըստ այդմ՝ քաղաքական համակարգի փոփոխության անհրաժեշտությամբ: Սակայն վերը բերված ցուցակի «գունավոր» հեղափոխությունները միանգամայն այլ բնույթ են կրել և այլ նպատակներ հետապնդել: Այս նոր տիպի հեղափոխությունները հիմնականում պայմանավորված են աշխարհաքաղաքական-աշխարհատնտեսական գործոններով և հանդիսանում են որոշ տերությունների քաղաքականության շարունակությունն այսպես կոչված «փափուկ ուժի» միջոցներով: Միևնույն ժամանակ, «գունավոր հեղափոխությունների» իրագործումը կամ դրանց փորձը ենթադրում է որոշակի նախապայմաններ, որոնցից առանձնացնեք հետևյալները:

***Գունավոր հեղափոխությունների արտաքին դրդապատճառները և նախապայմանները.*** Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ փլուզումից հետո ամենաբարձր քաղաքական մակարդակով բազմաթիվ հայտարարություններ եղան Սառը պատերազմի ավարտի մասին: Սակայն շատ չանցած աշխարհաքաղաքական-աշխարհատնտեսական ավանդական հակասություններն ընդհանրական Արևմուտքի, Ռուսաստանի և գերտերություն դարձած Չինաստանի միջև նոր թափ ստացան: Ակնհայտ է, որ գլոբալ հարթությունում ընթանում է նոր՝ Երկրորդ սառը պատերազմը, որի զինանոցը համալրվել է տեղեկատվական–հոգեբանական պատերազմների հայեցակարգերով, զենքերով ու դրանց կիրառման մեթոդաբանությամբ, որոնք լայնորեն կիրառվում են ստեղծված իրադրությունում: Ավելին, ներկայիս բազմակենտրոն աշխարհակարգի պայմաններում այդ գործընթացներում կարևոր դերակատարում են ձեռք բերել ինչպես ռազմատնտեսական առումով ոչ այնքան առաջատար երկրները, այնպես էլ մեծ ռեսուրսների տիրապետող ոչ պետական կառույցները: Նման բազմապլան հակամարտություններում որպես հակառակորդներին թուլացնելու, իսկ որոշ դեպքերում՝ անցանկալի վարչակազմերին տապալելու միջոց սկսեցին օգտագործվել նաև այդ երկրների հասարակությունները, որոնցում առկա են հիմնախնդիրներ, հիմնականում՝ կապված մարդու իրավունքների կամ ընտրական օրենքների խախտման հետ: Այս խնդրում անհրաժեշտ է դասակարգել և տարբերել կիրառվող մոտեցումները.

1. «Գունավոր հեղափոխության» փորձը կատարվում է «պայմանական հակառակորդի» երկրում, բայց ոչ այդ երկրի վարչակազմը տապալելու նպատա-

կով, քանի որ դա ակնհայտորեն իրատեսական չէ: Տեղի ունեցած իրադարձությունների նպատակն է դրանք ԶԼՄ-ում լայնորեն լուսաբանելը (համապատասխան մեկնաբանություններով), ինչը բացասաբար է ազդում պայմանական հակառակորդի միջազգային հեղինակության վրա: Արդյունքում, օրինակ, վատանում են տվյալ երկրի տնտեսական ցուցանիշները (այսպես կոչված «էֆեկտների» հետևանքը): Ի լրումն՝ հակառակորդ երկրում ստեղծված «ակտիվ բողոքող» խմբավորումները լրացուցիչ խնդիրներ են առաջացնում այդ երկրի ներքին քաղաքական դաշտում: Նման հեղափոխությունների օրինակ կարող են հանդիսանալ «Բոլոտնայա» հեղափոխությունը» Ռուսաստանում և «Հասմիկների հեղափոխությունը» Չինաստանում:

2. «Գունավոր հեղափոխությունը» կատարվում է ոչ թե «պայմանական հակառակորդի» երկրում, այլ իրագործվում է, օրինակ, վերջինիս ազդեցության տակ գտնվող պետությունում: Վերջինը, դուրս գալով «պայմանական հակառակորդի» ազդեցության ոլորտից, թուլացնում է նրա՝ տվյալ տարածաշրջանում քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում ունեցած դիրքերը: Նման ռազմավարության առավել ակնհայտ արտահայտություն պետք է համարել 2003թ. «Վարդերի» հեղափոխությունը Վրաստանում և 2004թ. և 2013թ. հեղափոխություններն Ուկրաինայում: Դրանց անթաքույց նպատակն էր քաղաքակրթական, քաղաքական և տնտեսական առումով «պոկել» այդ երկրները Ռուսաստանից: Կարևոր հանգամանք է, որ նման համատեքստում «հեղափոխություն» իրագործած հասարակությունները կարող են հայտնվել նաև բավական անբարենպաստ պայմաններում: Օրինակ, Վրաստանը պատերազմ հայտարարեց Հարավային Օսիային և, կարելի է ասել, վերջնականորեն կորցրեց այդ տարածքը, Ուկրաինան կորցրեց Ղրիմը, իսկ Դոնբասում և Լուգանսկում ստեղծվեց անորոշ իրավիճակ (նկատենք նաև, որ այս երկրի համախառն ներքին արտադրանքը 2014-2015թթ. նվազել է մոտ 2.5 անգամ): Այսինքն՝ այս տիպի հեղափոխությունների միակ նպատակը երկարատև լարվածության ստեղծումն է «պայմանական հակառակորդի» և «թիրախ» հանդիսացող երկրի միջև, իսկ վերջինի շահերը ներազդողները որևիցե կերպ հաշվի չեն առնում: Այլ խոսքով՝ գործում է «որքան վատ, այնքան լավ» հայտնի քաղաքական սկզբունքը:

3. «Գունավոր հեղափոխությունների» իրագործման ռազմավարական նպատակն է ձևավորել տարածաշրջանային «անկայունության գոտի» հակառակորդ և անգամ դաշնակից երկրների շուրջը: Արդյունքում՝ այդ տարածաշրջանի հետ առնչություններ ունեցող երկրներն ընդհարվում են բազմաբնույթ հիմնախնդիրների հետ: Նման լայնածավալ գործողությունների

համախումբ է հանդիսանում «հեղափոխությունների» շարքը Մեծ Մերձավոր Արևելքում, որի հետևանքով անկառավարելի զարգացումներ և ռազմական գործողություններ ծավալվեցին Սիրիայում, Իրաքում և Լիբիայում, անկայուն իրավիճակում հայտնվեցին տարածաշրջանի մի քանի այլ երկրներ: Ստեղծված իրավիճակն անմիջական սպառնալիք է ընկալվում ոչ միայն Ռուսաստանի, այլև Չինաստանի կողմից, քանի որ տարածաշրջանում տիրող ծայրահեղականությունը և քաոսը կարող են (և որոշ դեպքերում դա արդեն կատարվում է) «արտահանվել» նաև այդ երկրների տարածք: Լրջագույն հիմնախնդիրների առջև են կանգնած նաև ԱՄՆ եվրոպական դաշնակիցները՝ ի դեմս տարածաշրջանը լքող և դեպի Եվրոպա ուղևորվող միլիոնավոր միգրանտների, ինչը նույնպես կարելի է ընդունել որպես «զսպաշապիկ»՝ արդեն յուրայինների համար:

Վերոնշյալ դիտարկումների առիթով նկատենք, որ հակառակորդի հասարակությունում խառնակչություններ հրահրելը նոր երևույթ չէ, այդ միջոցը կիրառվել է նաև անցյալում: Արդի մոտեցումների տարբերությունը միայն այն չէ, որ ընդհանրացվել և համակարգվել է անցյալի փորձը: Կարևոր է այն հանգամանքը, որ նման հեղափոխական գործընթացները ծրագրվում և իրագործվում են ընդհանուր գլոբալ ռազմավարության և տոտալ «սառը» պատերազմի համատեքստում, որոնցում որպես կարևորագույն, իսկ հաճախ՝ նաև որոշիչ գործոն օգտագործվում են տեղեկատվական-հոգեբանական գործողությունները: Այդ առումով արդի քաղաքական և տեղեկատվական զարգացումները նպատակահարմար է դիտարկել և քննարկել «մեկ փաթեթով»:

Միևնույն ժամանակ, եթե անցյալում որևէ երկրում անկայուն վիճակ ստեղծելու նպատակով գործողություններ ձեռնարկելու համար բավական էին ընդամենը հատուկ և դիվանագիտական ծառայություններից ստացված տեղեկությունները, ապա արդի ժամանակաշրջանում ներազդող կողմը ձգտում է ունենալ որքան հնարավոր է համապարփակ տեղեկատվություն «թիրախ» հասարակության մասին: Առանձնահատուկ ուշադրություն են դարձվում հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգեբանական իրավիճակի և արժեքային համակարգին վերաբերող ուսումնասիրություններին: Ակնհայտ է, որ միայն այդ բնույթի գիտելիքներ ունենալու պարագայում է հնարավոր արդյունավետ կազմակերպել և օգտագործել հասարակության «հեղափոխական ներուժը»: Նման գիտելիքները թույլ են տալիս բացահայտել հասարակության «կրիտիկական ենթակառուցվածքները», ինչը նպաստում է գործողությունների արդյունավետության բարձրացմանը: Այսպիսով, «թիրախ» հասարակության վերա-

բերյալ անհրաժեշտ գիտելիքներին տիրապետելը կարելի է ընդունել որպես գլխավոր նախապայման արտաքին «փափուկ» միջամտություն կազմակերպելու տեսանկյունից:

***Գունավոր հեղափոխությունների ներքին նախապայմանները.*** Գունավոր հեղափոխությունները, միևնույն ժամանակ, կարող են իրագործվել ոչ բոլոր երկրներում: Եթե հասարակությունում գաղափարախոսական, գիտատեխնոլոգիական, սոցիալական և տնտեսական ոլորտներում գործում են հնարավորինս արդյունավետ օրենքներ և կանոններ, ապա հեղափոխական գործընթացները նման երկրներում կարելի է պատկերացնել միայն տեսականորեն: Անշուշտ, պետք է նաև քաջ գիտակցել, որ իդեալական հասարակություններն առայժմ հնարավոր են զուտ ուտոպիստական պատկերացումների հարթությունում:

Այլ պարագաներում, եթե հասարակությունում առկա են խոշոր հիմնախնդիրներ և չեն նշմարվում դրանց լուծումներ տալու միտումներն ու հեռանկարները, ապա նման երկրները (եթե, իհարկե, դրանցում ենթադրվող փոփոխությունները համընկնում են ներազդող կողմի ռազմավարական ծրագրերին) նվազագույնը կարող են վերածվել թիրախի՝ ակտիվ գործողություններ կատարելու համար: Այս հանգամանքն անհրաժեշտ է ընդունել որպես ներքին բնույթի *հիմնական նախապայման* կոնկրետ երկրում գունավոր հեղափոխություն իրագործելու տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, ոչ բոլոր հասարակություններն են պատրաստ, չնայած առկա օբյեկտիվ բնույթի դժվարություններին, դիմել ծայրահեղ քայլերի և փոխել իշխող ոչ արդյունավետ վարչակազմը: Այս համատեքստում հեղափոխություն կազմակերպողների համար առաջնային խնդիրն է՝ թիրախ հանդիսացող հասարակությունում ձևավորել անհրաժեշտ ուժեր և ենթակառուցվածքներ, որոնք կարող են աջակցել և հարկ եղած պարագայում՝ նաև ակտիվ մասնակցություն ցուցաբերել հեղափոխական գործընթացներին: Որպես այդպիսիք հանդես են գալիս տարաբնույթ միջազգային կառույցներից ֆինանսավորվող *ՀԿ-ները և ոչ պետական կազմակերպությունները (ՈՊԿ):* Փորձագետների գնահատականներով, հետխորհրդային հանրապետություններում վերջինների թիվը կազմում է մի քանի տասնյակ հազար: Միայն Ուկրաինայում միջազգային հիմնադրամներից և ՈՊԿ-ներից պատկառելի դրամաշնորհներ ստացող մասնագետների թիվը հասնում է 40 հազարի: Հենց այս մարդիկ են ակտիվ մասնակցություն ունենում «կլոր սեղանների» նիստերին, ցույցերին, հանրահավաքներին, նստացույցերին, բողոքի զանգվածային այլ գործողություններին, դառնում «հեղափոխական» շարժման կազմակերպիչներ և առաջնորդներ: Պատահական չէ, որ նման կառույցները որոշ երկրնե-

րում օրենսդրորեն ստանում են «գործակալի» կարգավիճակ, ինչը որոշ չափով սահմանափակում է նրանց գործունեության հնարավորությունները:

Հեղափոխության պատրաստման գործում կարևոր դերակատարում ունեն նաև այսպես կոչված *«ազդեցության գործակալները»:* Այդպես են անվանում քաղաքական ընտրանու և հասարակական կարծիքի վրա ազդեցություն ունեցող անձանց կամ ընդհանրապես քաղաքական որոշակի ուժերին, որոնք հանդիսանում են այլ երկրների շահերի պաշտպանը սեփական երկրում: Պետք է հաշվի առնել, որ նման անձանց հավաքագրումը չի ենթադրում կիրառել այն միջոցները, որոնք հաճախ ցուցադրվում են «լրտեսական» կինոֆիլմերում: Քննարկվող խնդրի համատեքստում նման անձնավորությունները կարող են լինել ընդամենը համակիրները քաղաքական–գաղափարախոսական այն ուղղության, որը վարում է հեղափոխության կազմակերպիչ երկիրը կամ կազմակերպությունը: Նման անձինք կամ քաղաքական ուժերը հարկ եղած պարագայում ավելի հակված են կատարել ոչ թե այն, ինչը բխում է սեփական երկրի շահերից, այլ այն, ինչը համապատասխանում է նրանց ներշնչված աշխարհայացքային պատկերացումներին կամ կոնկրետ այն խորհուրդներին, որոնք նրանք ստանում են օտարերկրյա կառույցներից: Նման անձինք ներքին քաղաքական դաշտում համարվում են ազգային շահերի, այլ ոչ թե հայրենիքի դավաճաններ, իսկ ներազդող երկրներում նրանց տրվում է ավելի բարեհունչ անվանում՝ «ժողովրդավարության մրրկահավեր»:

Միևնույն ժամանակ, չպետք է կարծել, որ գունավոր հեղափոխություն կատարողները բոլորն են այս կամ այն երկրի գործակալ կամ դրամաշնորհներ ստացող ՀԿ-ների անդամ: Բողոքի գործողություններում որոշակի մաս են կազմում հենց տվյալ երկրի շարքային քաղաքացիները (հիմնականում՝ երկրի մայրաքաղաքի բնակիչները, որտեղ ընթանում են գլխավոր զարգացումները), որոնք ցանկանում են տեսնել իրենց երկիրն ավելի արդար և բարգավաճ: Սակայն այդ հատվածը հայտնվում է լավ մշակված տեղեկատվական–հոգեբանական ազդեցության տակ և այդպիսով հեղափոխությունում իր վրա է վերցնում «ժողովրդի» գործառույթները: Ինչպես ցույց են տալիս ուկրաինական իրադարձությունները, հեղաշրջումից բավական կարճ ժամանակ հետո այդ բողոքող բնակչությունը, տեսնելով հեղափոխության հետևանքները, սկսեց հիասթափություն ապրել:

Կարևորագույն դերակատարում է ենթադրվում օտարերկրյա կառույցներից, ինչպես նաև նշված ՀԿ-ներից (վերջինների մեջ քիչ չեն «մամուլի և խոսքի ազատության» համար պայքարողները) աջակցություն ստացող ԶԼՄ-ի համար: Տեղեկատվական ազդեցության առումով ուշագրավ է այն հանգամանքը, որ

գրեթե բոլոր հեղափոխությունները (բացի սերբական «Բուլդոզերայինից», ինչը, թերևս, կարելի է ընդունել որպես այդ երկրի՝ 1999թ. ռմբակոծությունների ենթարկվելուց հետո «ուժի ցուցադրության» քաղաքականության շարունակություն) կրում են գրավիչ անուններ՝ «Վարդերի», «Կակաչների», «Նարնջագույն» և այլն: Նման անունները, համապատասխան լրատվական լուսաբանման պարագայում, վերածվում են յուրատեսակ բրենդների, ինչն էլ իր հերթին նպաստում է հեղափոխական շարժման նոր համախոհների առաջացմանը:

Եթե փորձենք ընդհանրացնել վերը դիտարկված հանգամանքները, ապա կարելի է ընդունել, որ ծրագրված հեղափոխությունների իրագործման համար ներքին բնույթի նախապայմաններ են հանդիսանում.

- թիրախ հանդիսացող հասարակություններում ներքին հիմնախնդիրների առկայությունը;
- թիրախ հանդիսացող երկրներում ներազդող կողմի շահերը ներկայացնող կառույցների, որոնց թվում՝ տեղեկատվական ռեսուրսների տիրապետողների, անհրաժեշտ և բավարար, այսպես կոչված «կրիտիկական» քանակի առկայությունը:

Սակայն վերջինի առիթով նկատենք, որ նշված բնույթի կառույցների գործունեության համար ենթադրվում են նաև որոշակի նպատակային ֆինանսավորման հնարավորություններ:

***Գունավոր հեղափոխությունների ֆինանսավորումը.*** Համարվում է, որ արդի ժամանակաշրջանում «հեղափոխությունների» էպիկենտրոնը «Արևելաեվրոպական դեմոկրատական կենտրոնն» է (*WschodnioEuropejskie Centrum Demokratyczne, WECD*), որի գրասենյակը գտնվում է Վարշավայում: Կազմակերպությունը ստեղծվել և ֆինանսավորվում է «Արևելյան Եվրոպայում դեմոկրատիայի աջակցության ինստիտուտ»-ի (*Institute for Democracy in Eastern Europe, IDEE*) կողմից:

*WECD*-ի պաշտոնական կայքում ասվում է, որ կենտրոնն իրագործում է ուսումնակրթական նախագծեր՝ հասցեագրված առաջին հերթին լրագրողներին, ուսուցիչներին, տարածաշրջանային մամուլի հրատարակիչներին և ՀԿ ակտիվիստներին: Բացի գլխավոր ծրագրերի իրագործման հետ կապված աշխատանքից, *WECD-ը* համագործակցում է մի քանի անկախ գիտական, հետազոտական և վերլուծաբանական խմբերի, ինչպես նաև մշակութային կենտրոնների հետ՝ սատարելով տեղեկատվամշակութային բնույթի հրատարակչական գործունեությանը: Կազմակերպության խնդիրներ են հայտարարվում «ժողովրդավա-

ության գաղափարի տարածումը, քաղաքացիական նախաձեռնություններին և ոչ կառավարական ծրագրերին աջակցությունը, բաց հասարակության կառուցումը, կրթությունը մարդու իրավունքների և դեմոկրատական ազատությունների բնագավառում, աջակցությունը սոցիալական և հասարակական փոփոխություններին հետկոմունիստական տարածքում»:

Որոշ հետազոտողներ նշում են, որ հեղափոխությունները և ընդհանրապես բողոք արտահայտող շարժումները հաճախ ֆինանսավորվում են Ջ.Սորոսի «Բաց հասարակություն» հիմնադրամի, Միջազգային հանրապետական ինստիտուտի և Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (երկուսն էլ՝ ԱՄՆ), Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի և մի շարք այլ կազմակերպությունների կողմից: Օրինակ, համաձայն ԶԼՄ-ում տեղ գտած տվյալների, միայն հիշատակված այս վերջին կազմակերպությունը սերբական հեղափոխության վրա ծախսել է մոտ $100 մլն: Այս առիթով նկատենք, որ աշխարհաքաղաքական նպատակներին հասնելու համար «գունավոր հեղափոխությունները» և նման այլ համահունչ գործողությունները տնտեսապես անհամեմատ ավելի ձեռնտու են, քան ցանկացած պատերազմական գործողություն, ինչն էլ ավելի գրավիչ է դարձնում դրանց կիրառումը:

Սակայն անգամ վերը ներկայացված իրողությունները դեռևս բավարար չեն, որպեսզի «թիրախ» երկրներում և հասարակություններում տեղի ունենան զանգվածային ցույցեր, անկարգություններ և դրանց հաջորդող իշխանափոխություններ: Դեռևս նախահեղափոխական Ռուսաստանում բոլշևիկները մանրակրկիտ մշակում էին հեղափոխություն կատարելու մեթոդները, իսկ նրանց կուսակցությունում շրջանառության մեջ էր դրված «պրոֆեսիոնալ հեղափոխական» հասկացությունը: Սակայն բոլշևիկները կարող էին միայն երազել, որ կգան ժամանակներ, երբ հեղափոխական գործունեությունը կվերածվի տեխնոլոգիական գործընթացի և «պրոֆեսիոնալ հեղափոխականները» «կարտադրվեն» հազարներով:

***«Գունավոր հեղափոխությունների» տեխնոլոգիաները.*** Ամերիկացի Ջին Շարփը երիտասարդ տարիներին տարված էր բոլշևիկյան առաջնորդներից մեկի՝ Լև Տրոցկու պերմանենտ (շարունակական) հեղափոխությունների գաղափարախոսությամբ և Մեծ Բրիտանիայից Հնդկաստանի անկախության շարժման առաջնորդ, քաղաքականության մեջ ոչ բռնի միջոցների կիրառման ջատագով Մահաթմա Գանդիի փիլիսոփայությամբ: Թերևս, այս երկու խիստ անհամատեղելի գաղափարախոսությունների (Լև Տրոցկին հայտնի էր իր անհանդուրժողականությամբ և դաժանությամբ) ազդեցությունն էր պատճառը, որպեսզի նա

1973թ. հրապարակի իր «Ոչ բռնի գործողությունների քաղաքականությունը» բավական ծավալուն աշխատությունը (որում, ի դեպ, տեղ են գտել նաև բռնի գործողությունների տեխնոլոգիաները) [3]: Գրքում մանրամասն ներկայացված է 198 մեթոդ, որոնց միջոցով կարելի էր վարել քաղաքական պայքարը, որոնք, ըստ իրենց տեսակի, դասակարգված են հետևյալ երեք խմբերի.

1. *Ոչ բռնի բողոք և համոզում*
2. *Հրաժարում սոցիալական, տնտեսական և քաղաքական համագործակցությունից*
3. *Ոչ բռնի միջամտություն:*

Շարփի ներկայացրած ոչ ուժային գործողություններից շատերը (հանրահավաքներ, ցույցեր, ստորագրահավաքներ, գործադուլներ, հացադուլներ և այլն) բավական սովորական երևույթներ են ցանկացած բողոքի ակցիայի ժամանակ, բայց կան նաև «նորույթներ»: Օրինակ, «Խորհրդանշական հասարակական գործողություններ» ենթաբաժնում խորհուրդ է տրվում ոչ միայն մոմեր և ջահեր վառել, այլև հանրահավաքների ժամանակ մերկանալ (այս միջոցը տարածում է գտել կանանց իրավունքների համար պայքարող կազմակերպությունների շրջանակներում): Հատուկ ուշադրություն է դարձվում նաև ցույցերի «գեղարվեստական ձևավորմանը». համարվում է, որ բողոքներն առավել արդյունավետ են, եթե ուղեկցվում են երգերով, պարերով և թատերական ներկայացումներով: «Եվրամայդանի» ցույցերի ժամանակ ակտիվորեն օգտագործվում էին «սիրով գրոհելու» հնարքները. թող բոլորն իմանան, թե Մայդանում որքան շատ գեղեցիկ աղջիկներ կան, ծաղիկներ: Իսկ երեկոյան հավաքվածները մոմեր էին վառում և երգում երկրի օրհներգը: Ընդհանրապես, «Մայդանում» երաժշտական բաղադրիչը լայնորեն էր օգտագործվում. բավական է ասել, որ այդ օրերին սկսված ռոք-համերգն ընթացավ 14 օր անընդհատ: «Մայդանի երգերը» հիմնականում կրում էին քաղաքական բնույթ: Օրինակ, «հեղափոխության» հիմնը դարձավ երկու երգ՝ «Նարնջագույն երկինք» և «Միասին մենք շատ ենք»: ԶԼՄ-ում «մատուցվում» էր այն թեզը, թե Մայդան են դուրս եկել հարյուր հազարավորներ, եթե ոչ միլիոններ:

Սակայն նույն Մայդանում գործի էին դրվում ոչ միայն «գեղեցիկ միջոցներ»: Օրինակ, հայտարարվում և անգամ «ցուցադրվում» էր, որ Մայդանի դեմ են «մռայլ և չար զինվորները, պառավներն ու ծերուկները, խուլիգաններն ու ավազակները, որոնք աջակցում են իշխանությանը փողի համար»: Հետևողականորեն ձևավորվում էր թշնամու կերպար՝ բութ, քրեական անցյալով սադրիչներ, որոնք փողով ծեծում են բողոքի հանրահավաքներում հավաքված կանանց ու երեխաներին: Բռնության պատկերներին հաջորդում էին նաև բռնության գործողու-

թյուններ. կազմակերպված անկանոն հրաձգությունից զոհվեցին ինչպես ցուցարարներ, այնպես էլ իրավապահեր: Հետագայում, երկրի հարավ-արևելքում քաղաքական ճգնաժամի խորացմանը զուգընթաց, ի հայտ եկավ թշնամու նոր կերպար՝ ռուս զինվորական «ահաբեկիչները»:

Սակայն Շարփի բոլոր հրահանգները չէ, որ կարելի է համարել «ոչ բռնի»: «Հոգեբանական միջամտություն» ենթաբաժնի 158-րդ կետում որպես միջոց առաջարկվում է նաև «ինքնախեղդվելը» և «ինքնահրկիզվելը»: Նման միջոցը հիշեցնում է «շահիդների» պահվածքը, և այդպիսով «ինքնահրկիզումը» կամ «ինքնախեղդումը» կարելի է որակել որպես «հոգեբանական ահաբեկչություն»: Իսկ «համոզելը» կամ մարդկանց հոգեբանորեն ինքնասպանության դիմելուն նախապատրաստելը պետք է որակել որպես բռնություն անձի նկատմամբ:

Ակնհայտ է նաև, որ շարփյան մեթոդների կիրառումը ենթադրում է նաև «պրոֆեսիոնալ հեղափոխականների» ուսուցում և պատրաստում: Այդ նպատակով ստեղծվել են անգամ հատուկ կառույցներ: Օրինակ, Բուլղարիայում հիմնվել էր Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի քաղաքական ակադեմիա, որը հատուկ դասընթացներ էր կազմակերպել սերբական ընդդիմադիրների համար: Իսկ Ավագ լրագրողների բալկանյան ակադեմիան ֆինանսական և տեխնիկական աջակցություն էր տրամադրում սերբական ընդդիմադիր մամուլին: Ստեղծվել են նաև հատուկ համակարգչային խաղեր: Օրինակ, հայտնի է «Ավելին, քան ուժն է» խաղը, որը մշակված է Ոչ ուժային հակամարտության միջազգային կենտրոնի ջանքերով և որը, մասնավորապես, մատչելի ձևաչափով սովորեցնում է ընդդիմության ակտիվիստներին, թե ինչ եղանակներով է պետք փոխել քաղաքական իրադրությունն իրենց երկրներում:

Բոլոր պարագաներում, Շարփի «խորհուրդների» արժեքն այն է, որ նա կարողացավ համախմբել և համակարգել գոյություն ունեցող բողոքի մեթոդները, տալ դրանց տեսական հիմնավորումները և վերածել դրանք քաղաքական տեխնոլոգիայի: Հատկանշական է, որ հետագայում Շարփը հիմնեց Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտը («գրավիչ անվանում»), որը, մասնավորապես, ֆինանսավորում են ամերիկյան Ժողովրդավարության ազգային հիմնադրամը և Միջազգային հանրապետական ինստիտուտը, որոնք հետևողականորեն աջակցում են «գունավոր հեղափոխություններ» իրականացնող կազմակերպություններին:

Սակայն, ինչպես հայտնի է, բողոքներ են կազմակերպում ոչ միայն ազատական գաղափարախոսության կրողները, այլև նրանց ընդդիմախոսները: Այդպիսի բողոքներից ամենահայտնին, թերևս, 2011թ. սկիզբ առած «Գրավիր Ուոլ-սթրիթը» *(Occupy Wall-Street)* շարժումն էր, որի նպատակն էր «բացահայտել» և «տապալել» ներկայիս «ոչ արդարացի կապիտալիզմը» և «գլոբալ տնտեսական

համակարգը» [4, 5]: Շարժման հիմնադիրը կանադական մի ՀԿ էր, որը հանդես էր գալիս «սպառողական» արժեքների դեմ և պարբերաբար նախաձեռնում էր «Օր առանց առևտրի», «Մի շաբաթ առանց հեռուստատեսության» տիպի միջոցառումներ: Այդ ՀԿ-ի «Գրավիր Ուոլ-սթրիթը» կոչին արագ արձագանքեցին բազմաթիվ արհմիություններ, կազմակերպություններ և ուղղակի տասնյակ հազարավոր մարդիկ: Շարժմանը հարեց նաև հայտնի *Anonimous* ցանցահեն խումբը, որն իրեն բնորոշ ձևով «օգնեց» շարժմանը և հաքերային հարձակումներ կատարեց բանկերի և բորսաների էլեկտրոնային համակարգերի վրա: Հատկանշական է նաև, որ 2011թ. *CBS* հեռուստակայանի և «Նյու Յորք Թայմս» թերթի կազմակերպած հարցումներից հետևում է, որ ամերիկացիների 43%-ը դրական է ընդունում այդ շարժումը, իսկ դեմ է արտահայտվում ընդամենը 27%-ը:

Արդյունքում՝ ոչ միայն ԱՄՆ-ում, այլև բազմաթիվ այլ երկրներում տեղի ունեցան երթեր, հանրահավաքներ և բողոքի զանգվածային ակցիաներ: Իսկ արդեն 2016թ. նախագահական ընտրությունների կապակցությամբ Միացյալ Նահանգներում սկսվեցին բողոքի ակցիաներ, որոնց կարգախոսն էր «Կորչե՛ն օլիգարխները, կեցցե՛ն ազնիվ ընտրությունները»: Կազմակերպիչները (որոնց թվում էր նաև այլախոհական հայացքներով հայտնի, անվանի քաղաքագետ Նոամ Չոմսկին) շարժմանը բավական բարեհունչ անուն դրեցին՝ «Ժողովրդավարական գարուն»: Այսինքն՝ ամեն ինչ արվում է Ջին Շարփի դեղատոմսերով...

Եվ այսպես, կարելի է ամրագրել, որ Շարփի տեխնոլոգիաներն այսօր լայնորեն օգտագործվում են ինչպես նպատակային–քաղաքական «գունավոր հեղափոխություններում», այնպես էլ տարաբնույթ բողոքի երթերի և հանրահավաքների ընթացքում, որոնց թիվը շարունակաբար աճում է ողջ աշխարհում: Ավելին, երբեմն նման տեխնոլոգիաները կիրառում են հենց այն երկրների քաղաքական տեխնոլոգները, որտեղ տեղի են ունենում նման բողոքները. այդպիսով փորձ է կատարվում առանց լուրջ հետևանքների «պարպել» հասարակությունում կուտակված լարվածությունը:

***Հունիս, 2016թ.***

## Աղբյուրներ և գրականություն


1. *Нарочницкая Н.А.,* Оранжевые сети. От Белграда до Бишкека, М., Изд-во: СПб., 2008.
2. *Людмила Гундарева,* Как готовят цветные революции, НВО, #19 (902), 2016.
3. *Дж. Шарп,* «198 методов ненасильственной борьбы», http://www.aeinstein.org/wp-content/uploads/2013/10/The-198-Methods-of-Nonviolent-Action-Russian-.pdf
4. *Гагик Арутюнян, Сергей Гриняев,* Состоится ли «захват Уолл-стрит»?, «21-й ВЕК», №1, с. 5, 2012.

5. *Гагик Арутюнян, Сергей Гриняев*, Революции оптом: достраивание нового миропорядка и сценарии глобального управления, http://noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=5617.

## «ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

***Գագիկ Հարությունյան***

Ամփոփագիր

Քննարկվել են «թիրախ» հասարակություններում «գունավոր հեղափոխություններ» կատարելու ներքին նախապայմանները, նման հեղափոխություններ կազմակերպող կողմերի աշխարհաքաղաքական դրդապատճառները, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրները: Ներկայացվել և վերլուծվել են «գունավոր հեղափոխություններ» իրագործելու տեխնոլոգիաները:

## «ЦВЕТНЫЕ РЕВОЛЮЦИИ»

***Гагик Арутюнян***

Резюме

Обсуждены внутренние предпосылки совершения «цветных революций» в обществах-«мишенях», побудительные геополитические причины организаторов подобных революций, а также источники их финансирования. Представлены и проанализированы технологии совершения «цветных революций».

## “COLOR REVOLUTIONS”

***Gagik Harutyunyan***

Resume

The internal prerequisites in societies “targeted” by “color revolutions” are discussed in the article, along with geopolitical reasons of those who organize such revolutions and the financing sources. The technologies to implement “color revolutions” are presented and analyzed.

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԴԵԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Գագիկ Տերտերով****

*Բանալի բառեր՝* տեղեկատվական հեղափոխություններ, տեղեկատվական հասարակություններ, հետինդուստրիալ հասարակություններ, տեղեկատվական տոտալիտարիզմ, դեինդուստրիալիզացված հասարակություններ:

Տեղեկատվական հեղափոխությունների և մարդկային հասարակության պատմական զարգացման միջև գործում է «հակադարձ–դրական» կապը: Միևնույն ժամանակ, եթե գրերի ստեղծումից (առաջին տեղեկատվական հեղափոխություն) մինչև տեխնոլոգիզացված տպագրության (երկրորդ տեղեկատվական հեղափոխություն) ժամանակաշրջանը տևել է 30 հարյուրամյակ, ապա հեռագրի, հեռախոսի և ռադիոյի գյուտերը (երրորդ տեղեկատվական հեղափոխություն) կատարվեցին Գուտենբերգի հայտնագործությունից ընդամենը 4 դար հետո: 19-րդ դարից զարգացումներն ավելի սրընթաց բնույթ են ընդունում. Ա.Պոպովի և Գ.Մարկոնիի հայտնագործություններից հետո հասարակությունը համակարգչային–համացանցային դարաշրջան (չորրորդ և հինգերորդ տեղեկատվական հեղափոխություններ) թևակոխեց ընդամենը մեկ դարի ընթացքում: Կարելի է ամրագրել, որ մինչև 15-րդ դարը մարդկության տեխնոլոգիական առումով առաջատար հատվածը կուտակել էր գիտելիքների կրիտիկական կոնցենտրացիա, ինչը թույլ տվեց, որպեսզի հետագայում հասարակությունների զարգացումը սկսի ընթանալ արագացումով՝ ենթարկվելով ոչ գծային օրինաչափությունների:

Տեղեկատվական տեխնոլոգիաների նման ոչ գծային զարգացումը զուգորդվում էր գիտական մտքի առաջընթացի հետ, և ձևավորվում էին ոչ միայն նոր բնագիտական-տեխնիկական, այլև հասարակագիտական-քաղաքական ուղղություններ՝ գաղափարախոսություն, սոցիոլոգիա և այլն: Այդ համատեքստում, մասնավորապես, փորձեր էին արվում մարդկային պատմության տարբեր փուլերում հասարակությունները դասակարգել համաձայն դրանց ամենաբնորոշ հատկանիշների: Թերևս, տրամաբանական էր, որ 20-րդ դարի երկրորդ կեսին գիտական-հասարակագիտական հանրությունը, տպավորված տեղեկատվական

* Փորձագետ:

հեղափոխությունների արդյունքում կատարված փոփոխություններից, փորձեց բնութագրել հասարակությունները՝ որպես չափանիշ ընդունելով դրանցում տեղեկատվական բաղադրիչի զարգացման աստիճանը: Մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաները լավագույն ձևով ստեղծող, մշակող և լայնորեն կիրառող հասարակություններն ստացան «տեղեկատվական» և «հետինդուստրիալ» անվանումները:

## *Տեղեկատվական և հետինդուստրիալ հասարակություններ*

Տեղեկատվական հասարակություն հասկացությունն առաջին անգամ կիրառել և, գլխավորը, գիտականորեն մեկնաբանել է Տոկիոյի Տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր Յու.Հայաշին 1969թ. «Ճապոնական տեղեկատվական հասարակություն. թեմաներ և մոտեցումներ» աշխատությունում: Ճապոնիայի կառավարության պատվիրած այդ հետազոտության նպատակն էր ուսումնասիրել նոր զարգացող համակարգչային տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա:

Հայաշին տեղեկատվական հասարակությունը բնութագրում էր որպես մի հասարակություն, որտեղ համակարգչայնացումը հնարավորություն է ընձեռում մարդկանց օգտվել տեղեկատվության հուսալի աղբյուրներից, ձերբազատել նրանց տաղտուկ աշխատանքներից, ապահովել արտադրության ավտոմատացման բարձր մակարդակ: Նման պայմաններում անխուսափելիորեն պետք է փոխվի նաև բուն արտադրական պրոցեսը. նրա արգասիքը՝ ապրանքը, պետք է դառնա «տեղեկատվապես ավելի ծավալուն»: Այդպիսով ենթադրվում էր, որ ապրանքի արժեքի և գնագոյացման մեջ պետք է աճեն նորարարության, ինչպես նաև դիզայնի ու մարքեթինգի մասնաբաժինները:

Համաձայն «տեղեկատվական հասարակության» հայեցակարգի մեկ այլ ջատագովի՝ Յ.Մասուդայի, «հասարակության զարգացման շարժիչ ուժն է լինելու ոչ թե նյութական, այլ տեղեկատվական աշխատանքի արդյունքի՝ ապրանքի ստեղծումը»: Ըստ Մասուդայի, ի տարբերություն ինդուստրիալ հասարակության, որի բնորոշ արժեքն ապրանքների սպառումն է, տեղեկատվական հասարակությունում առաջնային նշանակություն է ձեռք բերում ժամանակի գործոնը: Մասնավորապես, ենթադրվում էր, որ նման հասարակությունում բնակչությունը, ծանրաբեռնված չլինելով տաղտակալի աշխատանքով, բավականաչափ ժամանակ է ունենալու առնչվել մշակութային արժեքների հետ և այդպիսով հարստացնելու է իր հոգևոր աշխարհը: Ավելին, «տեղեկատվական հասարակության» հայեցակարգի հիմնադիր հայրերը համոզված էին, որ նման հասարակությունում չեն լինելու դասակարգեր և հակասություններ, տիրելու է համերաշխություն, իսկ պետական մարմինները պետք է լինեն սակավաթիվ և ունենան խիստ

փոքր աշխատակազմ... Պետք է ընդունել, որ հայեցակարգի հեղինակների մտահղացումները և դրանց վրա հենված դրույթները հիմնականում կրում էին ռացիոնալ և իրատեսական բնույթ, սակայն օժտված լինելով վառ երևակայությամբ (ինչը բնորոշ է ստեղծագործ անհատականություններին)՝ նրանք երբեմն տարվում էին նաև ուտոպիստական գաղափարներով... Նկատենք, որ նման մոտեցումները երբեմն բնորոշ են նաև արդի հետազոտողներին: Օրինակ, որոշ եվրոպական հետազոտողներ կարծում են, թե ներկայիս սոցիալական ցանցերի հիման վրա ապագայում ձևավորվելու է այսպես կոչված ինտելեկտուալ *net*-վերնախավ, որն էլ պետք է իրականում ղեկավարի գլոբալ հանրությունը [1]:

«Տեղեկատվական հասարակության» հայեցակարգի ստեղծմանը գրեթե զուգահեռ՝ 20-րդ դարի 70-ական թվականներին շրջանառության մեջ մտավ նաև «հետինդուստրիալիզմի» կոնցեպտը, որի հիմնադրույթները համահունչ էին Հայաշիի և Մասուդայի գաղափարներին: Այդ հայեցակարգի հեղինակ է համարվում ամերիկյան սոցիոլոգ Դանիել Բելը, որը 1973թ. հրատարակեց «Հետինդուստրիալ հասարակության գալիքը. սոցիալական կանխագուշակման փորձ» աշխատությունը, որում ներկայացված էին նման հասարակության հատկանիշները և դրանց զարգացման հեռանկարները [2]:

Դ.Բելը, մարդկային հասարակության պատմությունը բաժանելով երեք մասի՝ ագրարային, ինդուստրիալ և հետինդուստրիալ, ինդուստրիալ հասարակությունը մեկնաբանում էր որպես մի հասարակություն, որը կազմակերպվում է ապրանքարտադրության և արտադրամիջոցների շուրջ: Դ.Բելը շեշտում է, որ ինդուստրիալ հասարակությունն ընդգրկում է երկրներ, որոնք կարող են ունենալ տարբեր անցյալ ու ներկա և անգամ հակադիր քաղաքական համակարգեր: Սակայն, անկախ այս հանգամանքներից, առաջնայինը հասարակության ինդուստրիալ բնույթն է, որը կանխորոշում է նրա սոցիալական կառուցվածքը, ներառյալ սոցիալական շերտերը:

Սոցիալական կառուցվածքն իր հերթին, ըստ Բելի, հանդիսանում է առաջնային գործոն, այն «վերլուծաբանորեն տարանջատվում է» հասարակության քաղաքական ու մշակութային չափումներից և հարթություններից: Համաձայն Բելի, 20-րդ դարի կեսերին սոցիալական կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները վկայում են այն մասին, որ ինդուստրիալ հասարակությունն էվոլյուցիոն կարգով ձգտում է հետինդուստրիալի, որն էլ պետք է դառնա որոշիչ սոցիալական ձև 21-րդ դարի համար, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Ռուսաստանում (Բելը նկատի ուներ ԽՍՀՄ-ը) և Արևմտյան Եվրոպայում:

Հետինդուստրիալ փուլին բնորոշ է անցումն ապրանքարտադրությունից ծառայությունների արտադրության, և այդ ծառայություններն առաջին հերթին

կապված են առողջապահության, կրթության, գիտական հետազոտությունների և կառավարման հետ: Հետինդուստրիալ հասարակության այդ բնութագիրն իր հերթին սերտորեն առնչվում է մասնագիտությունների բաշխման հետ, քանի որ նման հասարակությունում տեղի է ունենում մտավորականության, պրոֆեսիոնալների և «ինժեներատեխնիկական խավի» քանակական և որակական աճ:

Սրան զուգահեռ՝ կարևորվում է նաև առկա գիտելիքների բնույթը: Եթե ինդուստրիալ հասարակությունում մարդիկ կազմակերպվում և համախմբվում են ապրանքներ արտադրելու համար, ապա հետինդուստրիալ հասարակությունում առանցքային նշանակություն են ձեռք բերում գիտելիքները: Ըստ Բելի, գիտելիքներն անհրաժեշտ են ցանկացած հասարակության համար, սակայն հետինդուստրիալ հասարակության բնորոշ գիծը հենց գիտելիքների բնույթն է: Այդ համատեքստում շեշտվում է, որ որոշումների ընդունման և փոփոխությունների ուղղորդման համար որոշիչ են դառնում հատկապես տեսական գիտելիքները: Նման մոտեցումը ենթադրում է տեսության և տեսական գիտելիքների առաջնություն էմպիրիկ գիտելիքների հանդեպ: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է գիտելիքահեն հասարակություններում, որոնցում զարգացումն ուղղակի անհնար է պատկերացնել առանց կանխատեսումներ կատարելու, ապագայի հնարավոր սցենարներ մշակելու և սպասվող գործընթացները նախապես պլանավորելու: Այդ ամենի համատեքստում խիստ կարևորվում է նաև կանխատեսման մեթոդների և մոդելների ստեղծումը:

Բելի վրա մեծ տպավորություն էր գործել անգլիացի ականավոր տնտեսագետ Ջ.Մ. Քեյնսի այն տեսակետը, համաձայն որի՝ անհրաժեշտ է, որպեսզի կառավարությունը, հատկապես ճգնաժամային իրավիճակներում, ակտիվ մասնակցություն ունենա տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում: Նկատենք, որ այդ մոտեցումը սկզբունքորեն հակասում էր ազատական ուղղվածություն ունեցող և շուկայի դերը բացարձակացնող տնտեսագետների հայացքներին: Մինչդեռ Քեյնսի մոտեցումների հիմնավորված լինելու վկայությունն են այն գործնական միջոցառումները և դրանց արդյունքները, որոնք 20-րդ դարի երեսնական թվականներին իրագործեց ԱՄՆ նախագահ Ֆ.Ռուզվելտը տնտեսությունը դեպրեսիայից դուրս բերելու նպատակով: Այդ և նմանատիպ այլ գործառույթները, համաձայն Բելի, ապացուցում են այն թեզը, համաձայն որի՝ տեսական տնտեսագիտական հայեցակարգերը կարող են որոշիչ դեր կատարել պետական կառավարման մեջ և երկրի տնտեսական գործընթացներում:

Բնագիտական և հասարակագիտական գիտությունների, տեխնիկայի և տնտեսության բնագավառների միավորումը հնարավոր է գիտահետազոտական աշխատանքների և դրանց հաջորդող կամ զուգահեռաբար կատարվող փորձա-

բարական-կոնստրուկտորական աշխատանքների իրականացման պարագայում: Վերջիններս, Բելի կարծիքով, պետք է ավելի և ավելի կարևոր դեր խաղան ապագային միտված հասարակություններում: Հետինդուստրիալ հասարակությունում տնտեսության զարգացմանը վերաբերող հիմնական որոշումները պետք է ընդունի կառավարությունը, սակայն դրանք պետք է հիմնվեն պետության կողմից հովանավորվող գիտական հետազոտությունների, մշակումների և վերլուծությունների վրա:

Եվ վերջապես, Բելը համարում էր, որ հետինդուստրիալ հասարակության հիմնական բնութագրիչներից են նորաստեղծ ինտելեկտուալ տեխնոլոգիաները, որոնք օգտագործվում են ղեկավարման ժամանակ որոշումներ ընդունելիս: Նա համոզված էր, որ 20-րդ դարի վերջին նման տեխնոլոգիաները մարդկության կյանքում պետք է կատարեն նույնքան կարևոր դեր, որքան կատարել են մեխանիկական տեխնոլոգիաները նախորդ մեկուկես դարում: Ինտելեկտուալ տեխնոլոգիաները ենթադրում են ինտուիտիվ դատողությունների փոխարեն օգտագործել ալգորիթմներ, կարող են գործածվել համակարգչային ծրագրերի կամ հրահանգների տեսքով՝ հիմնված լինելով որոշակի մաթեմատիկական բանաձևերի վրա:

Միևնույն ժամանակ, Բելը, ավելի իրատես լինելով, քան Հայաշին և Մասուդան, գտնում էր, որ գործնականում անհնար է հասնել նման նպատակների, և դրանք ուտոպիստական են, քանի որ մարդն էությամբ իռացիոնալ է և դիմադրում է ռացիոնալին: Սակայն մարդկության առաջխաղացումն այդ ուղղությամբ հնարավոր է, քանի որ, այնուամենայնիվ, մարդուն ռացիոնալիզմի գաղափարը նույնպես խորթ չէ: Եթե ինտելեկտուալ տեխնոլոգիաներում «վարպետի» դերը կատարում է որոշումների ընդունման տեսությունը, ապա «գործիքի» դերը կատարում է համակարգիչը:

Բելի թեզերից շատերն իրագործվել են տեխնոլոգիական առումով զարգացած երկրներում: Մասնավորապես, Միացյալ Նահանգներում քաղաքական (ներքին և արտաքին), տնտեսական որոշումները ներկայում զգալի չափով ընդունվում են փորձագիտական եզրակացությունների հիման վրա: Այդ եզրակացություններն իրենց հերթին մշակվում են այսպես կոչված «ուղեղային կենտրոններում» (դրանց թիվն ԱՄՆ-ում կազմում է մոտ 2000), որոնք զգալի ազդեցություն ունեն ոչ միայն սեփական կառավարությունների, այլև հասարակական կարծիքի վրա [3]: Նկատենք նաև, որ ներկայում առաջատար երկրներում կիրառվում են կանխատեսման տասնյակ մեթոդներ, որոնք կարևորագույն գործնական նշանակություն ունեն ռազմաքաղաքական, տնտեսական, հասարակական և այլ ոլորտներում ընթացող զարգացումների պլանավորման համար:

Դրանցից շատերը մշակվել են վերոհիշյալ ՈւԿ-ներում: Այդ ուղղությամբ աշխատանքները ներկայում էլ ընթանում են մեծ թափով: Կանխատեսումների այն մեթոդները, որոնք հենված են փորձագետների հարցումների վրա, ենթադրում են մեծ թվով տարբեր ոլորտների մասնագետների առկայություն, ինչը հնարավոր է միայն գիտելիքահեն տեղեկատվական հասարակություններում: Օրինակ, Հարավային Կորեայում պարբերաբար իրականացվում են հետազոտություններ գիտատեխնոլոգիական զարգացման հեռանկարները պարզելու ուղղությամբ: Այդ հետազոտությունները կատարվում են այսպես կոչված «Ֆորսայթ»[1] մեթոդի միջոցով, դրանց մասնակցում է տարբեր բնագավառների ավելի քան 10 հազար մասնագետ [4]:

## *«Տեղեկատվական տոտալիտարիզմ»*

Տեղեկատվական հասարակության գաղափարախոսության շրջանակներում ի հայտ եկան այն հիմնախնդիրները, որոնք այսօր հասարակության համար առանձնակի հրատապություն են ներկայացնում և վերաբերում են տեղեկատվության, նրա հաղորդման, մշակման ու պահպանման տեխնիկական միջոցներին: Օրինակ, Բելի աշխատություններում կարևորվում են պետության այն օրենսդրական նախաձեռնությունները, որոնք երաշխավորում են ազատորեն օգտվել տեղեկատվական շտեմարաններից: Միևնույն ժամանակ, անթույլատրելի են համարվում քաղաքական և ոստիկանական այն հետապնդումներն անձի նկատմամբ, որոնցում կիրառվում է տեղեկատվական տեխնիկան՝ նկատի ունենալով, մասնավորապես, գաղտնալսումները հատուկ ծառայությունների կողմից: Այս համատեքստում հատկանշական է, որ Բելի մեկ այլ համախոհ՝ ֆրանսիացի սոցիոլոգ Ժ.Էլյուլը ենթադրում էր, որ կենտրոնացված բյուրոկրատական պետությունը պետք է վերանա, քանի որ տեղեկատվական հասարակությունը պետք է իրագործի սոցիալիստական, անարխիստական և պացիֆիստական գաղափարներ: Սակայն պետք է փաստել, որ արդի զարգացումներն ընթանում են միանգամայն այլ ուղղությամբ. գաղտնալսումները և տեղեկատվական մանիպուլյացիոն տեխնոլոգիաների կիրառումն ընդունել են զանգվածային բնույթ, ինչը թույլ է տալիս որոշ երկրներում ձևավորված իրողությունները որակել *«տեղեկատվական տոտալիտարիզմ»:*

Ուշագրավ է նաև այն, որ եթե Բելը տեղեկատվական հասարակությունում տարանջատում է սոցիալական կառուցվածքը քաղաքական և մշակութային համակարգից, ապա Զբիգնև Բժեզինսկին «Երկու դարերի միջև. Ամերիկայի դերը տեխնոտրոն դարաշրջանում» աշխատությունում նոր տեխնոլոգիական դարա-

[1] *Foresight (անգլ.)* – կանխատեսում:

շրջանի գալուստը համարում է լրացուցիչ հնարավորություն՝ կազմալուծելու ԱՄՆ հակառակորդներին, մասնավորապես Խորհրդային Միությանը՝ համապատասխան քաղաքականություն վարելու պարագայում: Ինչպես հայտնի է, այս խնդիրն ամերիկացիները կարողացան հետագայում իրականացնել՝ ի թիվս այլ միջոցների լայնորեն կիրառելով նաև տեղեկատվական ազդեցության մեթոդները [5]:

## *Տեղեկացված «դեինդուստրիալիզացված հասարակություններ»*

Հայտնի է, որ ԽՍՀՄ տրոհումը գրեթե բոլոր հետխորհրդային հանրապետություններում հանգեցրեց գիտատեխնոլոգիական ենթակառուցվածքների փլուզմանը: Օրինակ, Հայաստանում փակվեցին հարյուրավոր գործարաններ, կոնստրուկտորական բյուրոներ և տարաբնույթ հետազոտական կառույցներ: Ռուսաստանում փակվել են հազարավոր հետազոտական կազմակերպություններ, իսկ հայրենիքը լքած առաջատար գիտաշխատողների և տեխնոլոգների թիվն անցնում է մի քանի հարյուր հազարից: «Ուղեղների արտահոսքը» զգալի չափեր է ընդունել նաև Հայաստանում: Հատկանշական է, որ ԽՍՀՄ փլուզման հետևանքով Ռուսաստանի ընդհանուր տնտեսական կորուստները գերազանցեցին Հայրենական պատերազմի տարիներին կրած կորուստները:

Այս ամենի առնչությամբ նկատենք նաև, որ ԽՍՀՄ-ում տնտեսությունը պլանային բնույթ էր կրում: Ընդունված էր դրանք անվանել հնգամյա պլաններ, որոնք մշակում էին այսպես կոչված Պետպլանները: Այդ առումով դրանք բավական համահունչ էին տնտեսության կառավարման վերաբերյալ Դանիել Բելի թեզերին: Սակայն պլանավորված տնտեսությունը հենվում էր բացարձակացված պետական և սոցիալիստական սկզբունքների վրա, ինչը, թերևս, նպատակահարմար էր հասարակության մոբիլիզացիա պահանջող հետհեղափոխական և պատերազմական-հետպատերազմական ծանր իրավիճակներում: Սակայն տնտեսության նման կազմակերպումը խիստ անարդյունավետ էր խաղաղ պայմաններում, և այդ հանգամանքը ԽՍՀՄ փլուզման պատճառներից մեկը հանդիսացավ: Հետխորհրդային շրջանում ստեղծված վուլգար ազատականության պայմաններում պլանավորման մշակույթը համարվեց «սոցիալիզմի ատավիզմ» և մոռացության մատնվեց, ինչն էլ, իհարկե, ծանր հետևանքներ ունեցավ տնտեսությունում:

Վերոնշյալի համատեքստում հետխորհրդային հանրապետությունները կարելի է բնութագրել որպես *«դեինդուստրիալիզացված»*: Այստեղ պետք է շեշտել, որ հետխորհրդային իրողությունների պարագայում *«դեինդուստրիալիզացված»* եզրն օգտագործվում է ոչ այն համատեքստում, երբ բնութագրվում է զարգացած երկրների տնտեսությունում ծանր արդյունաբերության մասնաբաժնի նվազման երևույթն ի հաշիվ տեղեկատվական բաղադրիչ ունեցող ճյուղերի զարգացման:

Միևնույն ժամանակ, ԽՍՀՄ պարագայում պետք է հաշվի առնել, որ չնայած խորհրդային հասարակությունն իրոք «գիտելիքներ արտադրող» էր և գուցե այդ չափանիշով կարող էր համարվել «տեղեկատվական», սակայն այդ տերությունում տեղեկատվության աղբյուրները գտնվում էին վարչական և գաղափարախոսական վերահսկողության տակ: Այսինքն՝ ԽՍՀՄ քաղաքացիների գերակշռող մասը բավականաչափ իրազեկված չէր ինչպես իրենց, այնպես էլ այլ հասարակական համակարգ ունեցող երկրների և հասարակությունների վերաբերյալ:

Հակասություններն առկա են նաև այսօր ազատականության ուղին ընտրած հանրություններում, որտեղ տեղեկատվության տարածման և հասանելիության առումով սահմանափակումներ կարծես թե չկան: Սակայն գերակայող դիրք գրաված տեղեկատվության աղբյուրները՝ տարաբնույթ խոշոր մեդիա-միավորումները, իրենց լսարանին տրամադրում են խիստ որոշակի ուղղվածության տեղեկատվություն, որը նույնպես չի նպաստում իրականությանը համապատասխանող պատկերացումներ կազմել և՛ սեփական, և՛ այլոց հասարակությունների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, արդի ժամանակաշրջանում տեղեկատվական հաղորդակցման նոր միջոցները՝ ինտերնետ, սոցիալական ցանցեր և այլն, գրեթե համատարած տարածում են գտել անգամ ոչ բարձր տեխնոլոգիական մակարդակ ունցող երկրներում: Սակայն նման հասարակությունները հնարավոր է՝ բավական *տեղեկացված* լինեն, բայց ոչ *տեղեկատվական*, քանի որ վերջինի գլխավոր հատկանիշը նոր տեղեկատվության և գիտելիքների արտադրությունն է: Այս իրողությունները հրատապ են հետխորհրդային հասարակությունների համար: Օրինակ, հաղորդակցման նոր միջոցների՝ համացանցի և սոցիալական ցանցերի ընձեռած հնարավորություններից լայնորեն օգտվող հայկական հասարակությունն ավելի քան տեղեկացված է և այդ չափանիշներով առաջնային դիրքեր է գրավում համապատասխան վարկանիշային ցուցակներում: Սակայն նոր տեղեկատվության և գիտելիքների «արտադրության» նվազումը թույլ չի տալիս մեր հասարկությունն անվանել «տեղեկատվական», և այն իր ցուցանիշներով ավելի ադեկվատ է *«դեինդուստրիալիզացված»* հասարակություններին:

***Հունիս, 2016թ.***

## Աղբյուրներ և գրականություն

1. *Берд А., Зондерквист Я.,* Netokratia. Новая правящая элита и жизнь после капитализма. Стокгольмская школа экономики, СПб, 2005.
2. *Белл Д.,* Грядущее постиндустриальное общество, М., 1999.
3. *П. Диксон,* Фабрики мысли, М., АСТ, 2004.

4. *Гагик Арутюнян,* Распад «системы» и формирование будущего, Ереван, НОФ «Нораванк», 2011.
5. *Գագիկ Տեր Հարությունյան*, «Տեղեկատվական հասարակություն. խնդիրներ և հեռանկարներ», Գլոբուս. Տեղեկատվական անվտանգություն, թիվ 3, էջ 3, 2008։

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԴԵԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Գագիկ Տերտերով***

Ամփոփագիր

Հոդվածում Յու.Հայաշիի և Դ.Բելի դասական հայեցակարգերի համատեքստում դիտարկվել են «տեղեկատվական հասարակությունների» էվոլյուցիայի որոշ հիմնախնդիրներ։ Ցույց է տրվել, որ աշխարհաքաղաքական կատակլիզմների արդյունքում, ինչպիսին էր ԽՍՀՄ փլուզումը, «տեղեկատվական հասարակությունները» կարող են կազմալուծվել և այդպիսով դասվել «դեինդուստրիալիզացված» հասարակությունների շարքին։

## ИНФОРМАЦИОННЫЕ И ДЕИНДУСТРИАЛИЗОВАННЫЕ ОБЩЕСТВА

***Гагик Тертеров***

Резюме

В статье в контексте классических концепций Ю.Хаяши и Д.Белла рассмотрены некоторые проблемы эволюции «информационных обществ». Показано, что в результате геополитических катаклизмов, каковым был распад СССР, «информационные общества» могут распасться и перейти в разряд «деиндустриализованных» обществ.

## INFORMATION AND DEINDUSTRIALIZED SOCIETIES

***Gagik Terterov***

Resume

In the context of classical concepts of Yujiro Hayashi and Daniel Bell, some problems of “information societies” are reviewed in the article. It is demonstrated that in the aftermath of of geopolitical cataclysms, such as collapse of the USSR, the “information societies” may well disintegrate and thus be classified as “deindustrialized societies”.

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

***Վարդան Աթոյան****

*Բանալի բառեր* ՝փորձագիտական հանրություն, ուղեղային կենտրոններ, վերլուծական աշխատանք, մտավոր ներուժ, պետական կառավարում, հանրային քաղաքականություն, Ազգային անվտանգության խորհուրդ:

21-րդ դարի հարափոփոխ գործընթացներում առավելություն են ստանում այն պետությունները, համակարգերն ու կառույցները, որոնք ընդունակ են ժամանակին արձագանքել փոփոխություններին, արագ հարմարվել նոր մարտահրավերներին, յուրացնել նոր «խաղի կանոնները»՝ հստակեցնելով սեփական նպատակները, հաշվարկելով ու ճիշտ օգտագործելով իրենց տնտեսական, քաղաքական, տեղեկատվական և ինտելեկտուալ ռեսուրսները:

Նման պայմաններում պետության անվտանգության և բնականոն զարգացման ապահովումն առաջ է քաշում արտաքին և ներքին բազմաբնույթ գործընթացների մշտադիտարկման, հնարավոր սպառնալիքների բացահայտման, գնահատման և համապատասխան լուծումների որոնման խնդիրը, որը պահանջում է գաղափարների և առաջարկությունների առաջքաշման, որոշումների նախապատրաստման և ընդունման արդյունավետ մեխանիզմների ներդնում: Այդ առումով արտերկրի առաջավոր փորձը ցույց է տալիս, որ նման մեխանիզմների արդյունավետությունը կախված է հանրային քաղաքականության տարբեր սուբյեկտների ներգրավվածության աստիճանից և հենվում է փորձագիտական մշակումների, այդ թվում՝ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և կանխատեսման գործուն համակարգի ստեղծման վրա:

Պետք է նշել, որ քաղաքական վերնախավի (իշխանություն, պետություն) հետ ինտելեկտուալների (գիտնականներ, փորձագետներ) փոխհարաբերությունների խնդիրները կարևորվել են բոլոր ժամանակներում և բազմակողմանիորեն հետազոտվել հին հունական մտածողների աշխատանքներից սկսած մինչև մեր

* «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ՀՊՏՀ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.:

օրերը: Այսպես, դեռևս Պլատոնի «Պետություն» երկխոսության մեջ փիլիսոփաներին է տրվում առաջնային դեր «իդեալական պետության» կառավարման գործում:

Հայրենական պատմագիտությունից ևս հայտնի է Հայոց իշխանական մարմինների հետ ինտելեկտուալների փոխգործակցության մասին: Անտիկ հեղինակների վկայությամբ, Տիգրան Մեծի պալատներում ապրում և ստեղծագործում էին հույն երևելի փիլիսոփաներ և մտածողներ, որոնցից էր հայտնի հռետոր, փիլիսոփա և քաղաքական գործիչ Մետրոդորոս Սկեպսիացին, որը Հայոց արքայի անմիջական խորհրդականներից մեկն էր [1]:

Ինչպես ճշմարտացիորեն նշում է ռուսաստանցի հետազոտող Ս.Տուրոնոկը՝ պետական կառավարման կատարելագործման համաշխարհային փորձը հաստատում է, որ պետության տեղեկատվական-վերլուծական ապահովումն անհրաժեշտ է դիտարկել որպես բոլոր մակարդակներում գործունեության արդյունավետության բարձրացման ռազմավարական ուղղություններից մեկը՝ պետական, ճյուղային, տարածաշրջանային, միջազգային և այլն: Հաշվի առնելով ասվածը՝ արհեստավարժ վերլուծաբանի անձը վեր է ածվում քաղաքական որոշումների մշակման և ընդունման գործընթացի անքակտելի և առանցքային տարրերից մեկի: Աշխարհի զարգացած երկրների մեծամասնությունում պետական իշխանության բարձրագույն մակարդակում, պետության ղեկավարի վարչակարգում կարելի է հայտնաբերել վերլուծաբանների և խորհրդատուների ոչ մեծ, բայց ազդեցիկ խումբ, որոնց երաշխավորությունները վերաբերում են ընդունվող հանրային որոշումների քաղաքական, տնտեսական և սոցիալական հետևանքներին: Նրանք, որպես կանոն, գործադիր իշխանության շրջանակներում համակարգում են իրենց գործընկերների աշխատանքը, որտեղ նրանց համար հատկացված են հաստիքներ, ինչպես տարբեր ղեկավարների անմիջական աշխատակազմում, այնպես էլ մասնագիտացված վերլուծական բաժիններում [2]:

Վերոնշյալի լավագույն օրինակներից է Ֆրանսիայի «նախարարական կաբինետների» համակարգը, որը խորհրդականների ինստիտուտ է. ինտելեկտուալները և վերլուծաբաններն անմիջականորեն աշխատում են պետական իշխանության մարմիններում, այդ թվում՝ բարձր մակարդակի պետական պաշտոնյաների հետ սերտ շփումներում: Ավելին, ընդդիմադիր կուսակցությունների կողմից զուգահեռաբար ստեղծվում են «ստվերային կաբինետներ», որտեղ ներառվում են վերլուծաբաններ և ինտելեկտուալներ: Վերջիններս բավական ազդեցիկ են ինչպես քաղաքական օրակարգի սահմանման, այնպես էլ քաղաքականության իրականացման գործընթացում [3]:

Եթե անհատական մակարդակով գիտելիք կրողներին իշխանական համակարգ ներգրավման մեթոդները բավական պարզ են և բավականաչափ ուսումնա-

սիրված, ապա վերջին տասնամյակներում հատկապես արևմտյան քաղաքագիտական դիսկուրսում առավել արդիական է դարձել պետություն-փորձագիտական հանրություն ինստիտուցիոնալ մակարդակով փոխգործակցության խնդիրը: Բազմաթիվ երկրներում քաղաքական վերնախավը և, մասնավորապես, ազգային անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմինները հաջողությամբ օգտվում են ինտելեկտուալ արտադրանք թողարկող վերլուծական հաստատություններից, որոնք ընդունված է անվանել «ուղեղային կենտրոններ» (*Think Tanks*): Հատկանշական է, որ տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների ի հայտ գալը և զարգացումը պայմանավորված են եղել, առաջին հերթին, պետության նպատակաուղղված քաղաքականությամբ, այսինքն՝ երկրի ինտելեկտուալ ներուժի համախմբման, հասարակական, քաղաքական, տնտեսական և անվտանգության հիմնախնդիրների լուծման գործում և որոշումների կայացման գործընթացում այդ ներուժի կիրառման անհրաժեշտության գիտակցմամբ:

Վերոնշյալի համատեքստում պետք է նշել, որ ժամանակակից ուղեղային կենտրոններն (ՈւԿ) իրականացնում են հետազոտական աշխատանք հանրայնորեն նշանակալի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, պատրաստում են վերլուծականներ, երաշխավորություններ (*recommendations*), անցկացնում են կառավարական մարմինների որոշումների նախագծերի, ծրագրերի փորձաքննություն և մատուցում են խորհրդատվական ծառայություններ: Որպես հանրային քաղաքականության ոլորտի հանգուցային կետեր՝ ՈւԿ-ներն ապահովում են ակադեմիական հանրություն-պետական իշխանություն փոխգործակցությունը՝ զբաղվելով ոչ միայն և գուցե ոչ այնքան նոր գաղափարների ստեղծման, որքան ակադեմիական հաստատություններում ստեղծված գաղափարների գեներացման և գործնական հարթություն տեղափոխման հարցերով:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ում տարածված է այն կարծիքը, որ նման կենտրոններն իրականացնում են մի շարք առանցքային գործառույթներ, որոնք նույն արդյունավետությամբ չի կարող իրականացնել պետության բյուրոկրատական ապարատի փորձագիտական-վերլուծական մասը: Մասնավորապես, նրանք առավել անկաշկանդ են և համարձակ իրենց գնահատականներում և դեպի ապագա հայացք գցելու փորձերի մեջ՝ տեսնելու նոր հեռանկարներ և առաջարկելու ոչ ստանդարտ և նորարարական լուծումներ: Բացի այդ, վերջիններս փորձագիտական հանրության ներսում առավել արդյունավետ են հիմնում ցանցային փոխգործակցությունը, կազմակերպում և գործառնական իմաստով բոլոր օղակներին աջակցում են քաղաքականության հարցերի վերաբերյալ խորհրդատվություններով. տեղեկատվության հավաքում – գաղափարների գեներացում – առաջարկությունների մշակում [4]:

Ինչպես նշում է ԱՄՆ պետդեպարտամենտի քաղաքական պլանավորման բաժնի ղեկավար Ռիչարդ Հաասը (*Richard N. Haass*), ուղեղային կենտրոնները լրացնում են մի կողմից ակադեմիական աշխարհի, մյուս կողմից՝ իշխանության ոլորտի միջև կրիտիկական վակուումը: Համալսարաններում գիտահետազոտական աշխատանքը հաճախ ընթանում է տեսական և մեթոդական քննարկումներում, որոնք միայն հեռավոր կերպով են կապված իրական քաղաքական խնդիրների հետ: Կառավարությունում էլ պաշտոնատար անձինք, խորասուզված լինելով առօրյա քաղաքականության կոնկրետ պահանջների մեջ, բավական զբաղված են, որպեսզի մեկ քայլ հետ կատարեն և վերանայեն ամերիկյան քաղաքականության ընդհանուր հետագիծը: Այդ պատճառով ուղեղային կենտրոնների առանցքային գործառույթն է՝ օգնել լրացնել այդ բացը գաղափարների և գործողությունների աշխարհների միջև[1]: Ավելին, ամերիկացի փորձագետ Է.Ջոնսոնի (*Erik C. Johnson*) կարծիքով՝ ՈւԿ-ների արտադրանքի հիմնական սպառողը հենց իշխանական կառույցներն են: Նրա խոսքով՝ ՈւԿ-ները.

- քաղաքական որոշումների ընդունման ընթացքում ընդլայնում են քաղաքական այլընտրանքների շրջանակը,
- սովորաբար բավական նորարարական են հիմնախնդիրների վերլուծության և լուծման մոտեցումներում, ինչը որոշում կայացնող անձանց թույլ է տալիս նոր դիրքերից մտածել հին հիմնախնդիրների մասին,
- ոչ ժողովրդահաճո որոշումների ընդունման պարագայում թույլ են տալիս տեղափոխել պատասխանատվությունը քաղաքական առաջնորդներից՝ երաշխավորությունների միջոցով նման որոշումներ առաջարկած ՈւԿ-ների վրա,
- հնարավորություն են ընձեռում իշխանության ներկայացուցիչներին բարձրացնել իրենց որակավորումը (սեմինարներ, հատուկ դասընթացներ, խորհրդաժողովներ և այլն),
- մշակում են օրենքների նախագծեր, ինչն առավել կարևոր է այն ժամանակ, երբ բյուջետային պակասուրդը թույլ չի տալիս ուղղակիորեն ներգրավել բարձրակարգ իրավաբանների,
- յուրահատուկ հնարավորություն են տալիս պետական կառավարման ոլորտ ներգրավել համապատասխան հմտություններ ունեցող պատրաստի մասնագետներ,

[1] *Richard N. Haass,* Think Tanks and U.S. Foreign Policy: A Policy-Maker's Perspective // "The Role of Think Tanks in U.S. Foreign Policy". U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002, p. 5.
URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf

- հիանալի հնարավորություն են տալիս իշխանական համակարգի պաշտոնաթող քաղաքական գործիչներին իրենց գործունեությունը շարունակել հանրային քաղաքականության ձևավորման գործընթացի վրա ազդեցության ոլորտում [5]:

Վերոնշյալին կարելի է ավելացնել, որ ՈւԿ-ների ներկայացուցիչները և ընդհանրապես փորձագիտական հանրությունը, պարբերաբար շփվելով և համագործակցելով արտերկրի գործընկերների հետ, այդ թվում՝ մասնակցելով միջազգային գիտաժողովների, խորհրդաժողովների և աշխատաժողովների, ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են նպաստել սեփական երկրի դիվանագիտությանը, ազգային շահերի պաշտպանությանն ու առաջմղմանը՝ հաճախ բարձրաձայնելով այնպիսի միջպետական կամ միջազգային նշանակության խնդիրներ, որոնք տվյալ երկրի պաշտոնական դիվանագիտությունը տարբեր պատճառներով չի կարող կամ չի ցանկանում պաշտոնապես հնչեցնել: Այս երևույթն արևմտյան քաղաքագիտական գրականության մեջ ընդունված է անվանել *Track II Diplomacy*: Հետևաբար, ժամանակակից աշխարհում ոչ պետական դերակատարների ընդգրկումն արտաքին քաղաքական գործունեության մեջ կարող է էականորեն բարձրացնել երկրի արտաքին քաղաքականության արդյունավետությունը:

Ակնհայտ է, որ ներկայումս ԱՄՆ-ն է հանդիսանում ՈւԿ-ների ամենազարգացած համակարգ ունեցող երկիրը, որի վերելքային զարգացումը փոխկապակցված է Երկրորդ աշխարհամարտից հետո ի հայտ եկած իրողություններին, երբ Սառը պատերազմի տարիներին Խորհրդային Միության հետ տոտալ մրցավազքում հաջողելու նպատակով պետությունը մեծապես խրախուսում և պայմաններ էր ստեղծում նման հաստատությունների հիմնադրման համար: Ինչպես նշում է «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գ.Հարությունյանը՝ Միացյալ Նահանգների առաջնությունն այս բնագավառում հուշում է, որ ՈւԿ-ների արդյունավետ գործառնությունը հնարավոր է միայն այն երկրներում և հասարակություններում, որտեղ առկա են հետևյալ նախապայմանները.

- իշխանությունները, կապիտալը և ընդհանրապես հասարակությունը ոչ միայն կարևորում են մտավոր ռեսուրսների գործոնը երկրի պետական, ռազմաքաղաքական և տնտեսական համակարգում, այլև ապահովում են անհրաժեշտ պայմաններն այդ ոլորտի զարգացման համար,
- գոյություն ունի համապատասխան ակադեմիական և բուհական գիտական միջավայր, որը սնում է ՈւԿ-ներին անհրաժեշտ կադրերով և հայեցակարգային մոտեցումներով. իզուր չէ, որ ՈւԿ-ներն անվանում են ինտերֆեյս (հաղորդակցություն) ակադեմիական գիտության և կառավարության միջև,

- պետական համակարգն ունակ է ՈւԿ-ներից ստացված արդյունքները ներդնել որոշումներ ընդունելու մեխանիզմում և գործնական հարթությունում,
- արդյունավետ մեխանիզմների առկայություն, որոնք ապահովում են դրական հետադարձ կապն ՈւԿ-ների և բիզնես-կառույցների միջև [6]:

Մեզ համոզմամբ, ՈւԿ-ների զարգացած համակարգի առկայությունն էլ էապես նպաստում է ԱՄՆ որոշակի գերակայությանը ժամանակակից միջազգային հարաբերություններում, այդ թվում հենց «փափուկ ուժի» տիրապետման տեսակետից, քանի որ 21-րդ դարում առանց արտաքին քաղաքականության մեջ «փափուկ ուժի» բաղադրիչի անհնար է լիարժեքորեն հավակնել գերտերության կարգավիճակին:

Պետություն-փորձագիտական հանրություն առնչությունները քննարկելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում (ՉԺՀ) վերջին տարիներին այս ոլորտում արձանագրվող գործընթացներին, որտեղ ՈւԿ-ների կարևորությունը գիտակցվում և խրախուսվում է ամենաբարձր քաղաքական մակարդակով: Մասնավորապես, վերջին տարիներին Չինաստանում ընդունվել են բազմաթիվ կանոնակարգեր՝ կոչված արագացնելու փորձագետների մուտքը քաղաքական պաշտոններ: Այսպես, Ազգային կուսակցության և կառավարության առաջնորդության ամրապնդման գործողությունների ծրագիր 2014-2018 (*Action Plan Outline on Building National Party and Government Leadership* 2014-2018) պաշտոնական փաստաթուղթն ընդգծում է պետական ձեռնարկություններից, համալսարաններից, հետազոտական ինստիտուտներից և համանման այլ հաստատություններից մասնագետների պետական կառավարման ոլորտ աշխատանքի ընդունման անհրաժեշտությունը: 2015թ. փետրվարին հատուկ շրջաբերականով ՉԺՀ նախագահ Սի Ծինփինը (*Xi Jinping*) կոչ է արել զարգացնելու գլոբալ ազդեցության «նոր տեսակի» չինական ՈւԿ-ները և խթանելու ինտելեկտուալ հանրության ներուժը քաղաքականության խորհրդատվության բնագավառում[1]: Նրա խոսքով՝ ՈւԿ-ներն ազգային «փափուկ ուժի» կարևոր բաղադրիչն են: Մինչ այդ, 2014թ. հոկտեմբերին Ընդհանուր բարեփոխումների առաջատար խմբի 6-րդ հանդիպմանը Չինաստանի նախագահը նշել էր, որ երկրի ՈւԿ-ները պետք է օժտված լինեն «չինական առանձնահատկություններով», առաջ մղեն Չինաստանի արդիականացումը և կառավարման համակարգը և ամրապնդեն Չինաստանի «փափուկ ուժը»[2]: Բացի այդ, 2014թ. փետրվարին ՉԺՀ

[1] From Academia to Politics: When scholars rule China, Publication // China Brief Volume: 15, Issue: 23, (07.12.2015), URL: http://www.jamestown.org/uploads/media/_CB_15_23_3.pdf

[2] Building Think Tanks with Chinese Characteristics: Current Debates and Changing Trends // China Brief Volume: 14, Issue: 24, (19/12/2014), pp. 14-16.
URL: http://www.jamestown.org/uploads/media/China_Brief_Vol_14_Issue_24_5.pdf

կրթության նախարարությունը շրջանառության մեջ է դրել «Չինական առանձնահատկություններով օժտված նոր ուղեղային կենտրոնների ստեղծման առաջմղման ծրագիր» (*The New Think Tanks Construction with Chinese Characteristics Promotion Plan*) անվանումով փաստաթուղթը, որն ուղարկվել էր բոլոր ենթակա հաստատություններին: Ըստ այս փաստաթղթի՝ ապագայում ՈւԿ-ների հիմնական խնդիրն է լինելու աջակցել կառավարությանը: Մասնավորապես.

- հետազոտական հաստատությունները հիմնադրվելու են երկրի զարգացմանը ծառայելու նպատակով,
- պետք է կենտրոնանան առաջնահերթ պահանջների վրա (տնտեսական, քաղաքական և մշակույթի զարգացում, բնապահպանություն, կուսակցաշինություն, արտաքին հարաբերություններ և այլն),
- ներգրավեն բարձրակարգ ռեսուրսներ,
- կրթեն և վերապատրաստեն տաղանդավոր մարդկանց,
- տարբեր ուղիներով տարածեն հետազոտության արդյունքները (տպագիր և էլեկտրոնային մամուլ),
- բարեփոխեն իրենց վարչակազմը և թարմացնեն կազմակերպական կառուցվածքը [7]:

Տարբեր ոլորտներում պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցության ակտիվացում նկատվում է նաև հարևան Թուրքիայում: Ինչպես նշում է փորձագետ Ա.Սիմավորյանը՝ 1990-ական թթ. սկզբին թուրքական քաղաքական ընտրանին հետաքրքրություն ցուցաբերեց Արևմուտքում իրենց գոյությունն արդարացրած վերլուծական կենտրոնների նկատմամբ, ինչպիսիք էին *Rand Corporation*-ն ու *The Brookings Institution*-ը: Ամերիկյան փորձի ներբերման նպատակով թուրքական մի քանի պատվիրակություններ համատեղ քննարկումներ անցկացրին վերը հիշատակված հաստատությունների ղեկավարների հետ, ծանոթացան նրանց աշխատանքային գործունեությանը: Թ.Օզալը, որն արդեն Թուրքիայի նախագահն էր և մեծ լիազորություններ ուներ ու լիբերացումը և քաղաքացիական հասարակության ձևավորումը համարում էր անհրաժեշտություն, աջակցություն ցուցաբերեց պետական ռազմավարական հետազոտությունների կենտրոնների (ՌՀԿ) ստեղծման գործում [8, էջ 157]: Եթե մինչև ԽՍՀՄ փլուզումն արտաքին քաղաքականության «գաղափարների շուկայում» կային հատուկենտ ՌՀԿ-ներ, որոնք զբաղվում էին այս ոլորտի խնդիրների հայեցակարգային և ռազմավարական տեսլականների վերամշակմամբ և որոշում կայացնողների վրա ունեին թույլ ազդեցություն, ապա այսօր, գործնական քաղաքականության իրականացման նպատակով, պետական մարմիններն ու այլ քաղաքական

դերակատարներ սկսել են օգտվել նրանց մշակումներից և վերլուծություններից, հատկապես արտաքին քաղաքականության և անվտանգության ոլորտում: Մյուս կողմից՝ ՌՀԿ-ները մասամբ իրենց ներդրումն են ունենում Թուրքիայի դիվանագիտական ջանքերի զարգացման և ամրապնդման գործում [8, էջ 148]:

Ամփոփելով վերոնշյալ երկրներում ինստիտուցիոնալ մակարդակով պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցության ոլորտում գործընթացների ներկայացումը՝ տեղին է ավելացնել մեր նախորդ աշխատանքներում արտահայտած կարծիքն այն մասին, որ 21-րդ դարում ՈւԿ-ների ինստիտուտի կայացումը և ազգային անվտանգության համար պատասխանատու մարմինների հետ ՈւԿ-ների փոխադարձ գործուն կապը, բազմաթիվ հարցերում համատեղ փոխգործակցության մակարդակը պետք է դիտարկել որպես ցանկացած պետության ազգային անվտանգության ապահովման արդյունավետության կարևոր ցուցիչ [9]:

Բազմաթիվ երկրներում պետական կառավարման համակարգի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս նման հատուկ մասնագիտացված հետազոտական հաստատությունների գործունեության արդյունավետությունը: Մասնավորապես, նրանց կողմից իրականացվող հետազոտությունների արդյունքները և տարբեր ձևաչափով թողարկվող ինտելեկտուալ արտադրանքը, այդ թվում՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումները, իրադարձությունների զարգացման սցենարները, երաշխավորությունները, քաղաքական վերնախավի որոշումների ինտելեկտուալ սպասարկումը մեծապես նպաստում են քաղաքական վերնախավի կողմից կայացվող որոշումների արդյունավետության բարձրացմանը և հնարավոր ռիսկերի նվազեցմանը:

Ինչ վերաբերում է կանխատեսումներին, ապա այստեղ չափազանց հետաքրքրական փորձի օրինակ կարող է ծառայել Սինգապուրը, որն ազգային անվտանգության ոլորտում իրականացվող կանխատեսումների առավել բարձր հավանականություն և ճշգրտություն ստանալու նպատակով ներդաշնակել է փորձագիտական աշխատանքը և ժամանակակից տեխնոլոգիաները: 2004թ. Սինգապուրի կառավարությունը երկրի ազգային անվտանգության համակարգի ամրապնդման նպատակով հիմնել է *Risk Assessment and Horizon Scanning (RAHS)* ռիսկերի գնահատման և կանխատեսման ծրագիրը, որը թույլ է տալիս փորձագետներին առավել արդյունավետ իրականացնել իրենց աշխատանքը: Նշենք, որ *RAHS*-ը ժամանակակից տեխնոլոգիա է, որը հիմնված է «կոգնիտիվ մոդելի» վրա և նախատեսված է մարդու մտածելու գործընթացի նմանակման համար: Վերջինս թույլ է տալիս ամբարել տվյալների հսկայական ծավալներ և նախատեսված է գործնականորեն բոլոր ոլորտներից ստացվող տեղեկատվության ռազմավա-

բական վերլուծության համար: Այդ տեխնոլոգիայի միջոցով ստեղծվում են մոդելներ, որոնք կարող են կիրառվել հնարավոր իրադարձությունների և երկրի վրա բազմաբնույթ ազդեցությունների կանխատեսման համար: Օգտագործելով տեղեկատվական այդ բազան, որը կոչվում է գաղափարների տվյալների բազա, *RAHS*-ի ընձեռած հնարավորությունների օգտագործմամբ վերլուծաբանները պատրաստում են տեղեկանքներ, թե ինչպես կարող են զարգանալ կոնկրետ իրադարձությունները և ինչպիսին կարող են լինել վտանգներն ու սպառնալիքները: Պետք է նշել, որ այստեղ խոսքը ոչ այնքան ուղղակիորեն ապագայի կանխատեսման, որքան ապագայի զարգացման մի քանի հավանական տարբերակների (սցենարների) նկարագրության մասին է, ինչը ցույց է տալիս կառավարությանը, թե հատկապես որ ուղղությունների վրա պետք է առավելապես ուղղել ջանքերը[1]: Մեր կարծիքով՝ այս դեպքում Սինգապուրի կառավարության մոտեցումն ասոցացվում է Ջ.Սքոթ Արմսթրոնգի (*J. Scott Armstrong*) ապագայի պլանավորման և ցանկալի ապագայի կերտման դրույթին, ըստ որի՝ կանխատեսումն առավելապես վերաբերում է այն հարցին, թե ինչպիսին կարող է լինել ապագան: Այն ժամանակ, երբ պլանավորումը ձևակերպում է, թե ինչպիսին պետք է լինի ապագան [10]: Այս համատեքստում հատկանշական է նաև Կունցի և Օ'Դոնելի (*Kuntz&O'Donnell*) կարծիքը, ըստ որոնց՝ պլանավորումը նախօրոք ընդունված որոշումն է այն մասին, թե ինչ է պետք անել, երբ անել և ով է կատարելու: Պլանավորումը կամուրջ է անցկացնում մեր ներկա և ցանկալի վիճակների միջև [11]:

Պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցության հարցերը քննարկելիս անհրաժեշտ ենք գտնում ներկայանցել, թե քաղաքական որուշումների ընդունման շղթայի հատկապես որ փուլում է առավել արդյունավետ փորձագիտական հանրության (ի դեմս ՈւԿ-ների) ներգրավումը: *Գծապատկեր 1*-ում ներկայացված է քաղաքական որոշումների ընդունման դասական պարբերաշրջանը: Համաձայնելով ռուսաստանցի հայտնի փորձագետ Ա.Սունգուրովի կարծիքին՝ պետք է նշել, որ փորձագիտական հանրությունն առավելապես պետք է ներգրավված լինի 2-րդ՝ լուծման որոնման փուլում, չնայած և՛ 1-ին՝ խնդրի վերհանում, և՛ 6-րդ՝ հսկողություն և մշտադիտարկում փուլերում նույնպես փորձագիտական հանրության դերակատարությունը պետք է բարձր լինի [12]:

Հետխորհրդային տարածքի երկրներում պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցության ոլորտում նույնպես կան որոշակի հետաքրքիր գործընթացներ, սակայն, հաշվի առնելով հոդվածի ձևաչափով նման ծավալուն և բազմաշերտ հարցի ներկայացման սահմանափակումները, ցույց տանք միայն ՈւԿ-ների քանակական ցուցանիշով, կայացվածության և հանրային քաղաքա-

[1] RAHS Programme office. URL: http://www.rahs.gov.sg/public/www/home.aspx

*Գծապատկեր 1*

*Քաղաքական որոշումների ընդունման պարբերաշրջան*




կանությունում դերակատարության մակարդակով հետխորհրդային բոլոր երկրներին գերազանցող Ռուսաստանի Դաշնության փորձից մեկ կարևոր օրինակ: Ռուսաստանի ռազմավարական մշակումների կենտրոնն իր հիմնադրումից (1999թ.) սկսած՝ ՌԴ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների ղեկավարությամբ (Գ.Գրեֆ, Դ.Կոզակ) սկսել էր երկրի զարգացման հայեցակարգի մշակումը, որը դարձավ ՌԴ ապագա նախագահ Վ.Պուտինի ծրագրային փաստաթուղթը: Այս հայեցակարգի հիման վրա, որը կոչվում էր «Մինչև 2010թ. ժամանակաշրջանի ՌԴ զարգացման սոցիալ-տնտեսական ռազմավարությունը» մշակվել և կառավարության նիստում հաստատվել էին ՌԴ կառավարության երկարաժամկետ (մինչև 2010թ.) սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղությունները: Այդ հիմնական ուղղությունները դարձան գաղափարական հենքը կառավարության հետագա հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի և միջնաժամկետ ծրագրերի համար [13]: Բացի այդ, 2011թ. ՌԴ Անվտանգության խորհրդի, վերջինիս աշխատանքային մարմինների և աշխատակազմի գործունեության գիտամեթոդական և փորձագիտական-վերլուծական ապահովման նպատակով ստեղծվել է Անվտանգության խորհրդին կից Գիտական խորհուրդ, որն իրականացնում է հետևյալ գործառույթները.

- Անվտանգության խորհրդի, նրա աշխատանքային մարմինների և աշխատակազմի գիտամեթոդական և փորձագիտական-վերլուծական գործունեության ապահովում;

- Անվտանգության խորհրդին ազգային անվտանգության ոլորտում համակարգային գիտական հետազոտությունների իրականացման վերաբերյալ առաջարկությունների և երաշխավորությունների նախապատրաստում;
- ՌԴ ազգային անվտանգության ռազմավարության գիտական հիմնավորման մեթոդաբանության կատարելագործում;
- ՌԴ սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային անվտանգության ապահովման վրա ազդող ներքին և արտաքին սպառնալիքների գիտական-մեթոդական գնահատում և կանխատեսում;
- Անվտանգության խորհրդի, վերջինիս աշխատանքային մարմինների և աշխատակազմի՝ ՌԴ ազգային անվտանգության ռազմավարության մշակման և ճշգրտման գործունեության գիտամեթոդական ուղեկցում, այդ թվում՝ ազգային անվտանգության ապահովման ազգային ռազմավարական առաջնահերթությունների, չափորոշիչների և ցուցիչների, ինչպես նաև ՌԴ նախագահի հաստատմանը ենթակա ռազմավարական պլանավորման փաստաթղթերի վերաբերյալ առաջարկությունների և երաշխավորությունների նախապատրաստում, ազգային անվտանգության վիճակի և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի գնահատում, մասնակցություն ազգային անվտանգությանն առնչվող պետական նպատակային ծրագրերի, ինչպես նաև ՌԴ-ում իրավիճակային կենտրոնների համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստմանը;
- Նորմատիվ իրավական ակտերի, հայեցակարգային, դոկտրինալ, վերլուծական և այլ փաստաթղթերի նախագծերի, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ առաջարկությունների գիտական փորձագիտության իրականացում;
- Ազգային անվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության իրականացման հարցերում Անվտանգության խորհրդի և վերջինիս աշխատանքային մարմինների որոշումների նախագծերի գիտական հիմնավորում;
- Արտերկրում և ՌԴ-ում ազգային անվտանգության ապահովման տեսության և պրակտիկայի համեմատական վերլուծության իրականացում[1]:

## *Ամփոփում և առաջարկություններ*

Ազգային անվտանգության ապահովումը, որպես զարգացման առավել օպտիմալ միջոցների, մեթոդների, ուղիների որոնման, հիմնավորման ու իրականացման, անվտանգության համակարգի կատարելագործման, իրական և հնարավոր

[1] Совет Безопасности Российской Федерации. URL: http://www.scrf.gov.ru/documents/19/53.html

սպառնալիքների ու վտանգների բացահայտման գործընթաց, կարող է արդյունավետ իրականացվել միայն հասարակության կազմակերպական և մտավոր ներուժի համակարգված կիրառման պարագայում: Ինչպես նշում է Զ.Բժեզինսկին (*Zbigniew Brzezinski*), գլոբալացման դարաշրջանում անվտանգության բացակայությունը կդառնա երկարաժամկետ իրականություն, իսկ ազգային անվտանգության ամրապնդման ուղիների որոնումը՝ մշտական մտահոգության առարկա [14]: Հենց այս համատեքստում խնդիրները դիտարկելիս անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ ուղիների որոնման գործում անգնահատելի դեր կարող են խաղալ պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցությունից ստացվող սիներգետիկ էֆեկտը և համապատասխան գիտելիք կրող անձանց ներգրավումն ազգային անվտանգության ապահովման գործընթացում: Խնդիրը հատկապես արդիական է Հայաստանի ներկայիս իրողությունների՝ գլոբալ, տարածաշրջանային և ներքին բազմաբնույթ մարտահրավերներին արդյունավետ պատասխաններ գտնելու տեսանկյունից: Ա.Պանարինի դիպուկ բնորոշմամբ՝ յուրաքանչյուր ժողովրդի առաջ ի հայտ է գալիս կոշտ երկընտրանք. կամ իրեն կհաջողվի կառուցել ապագայի արդյունավետ սեփական ռազմավարություն, կամ այդ ապագան նրա փոխարեն կառուցում են ուրիշները՝ սեփական հետաքրքրություններին համապատասխան [15]:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում ՈւԿ-ների ոլորտն ինստիտուցիոնալ առումով, ցավոք, դեռևս բավարար չափով կայացած չէ, իսկ հաշվի առնելով կադրային, կազմակերպական, ֆինանսական և ինտելեկտուալ ռեսուրսները՝ երկրում գործող ավելի քան վեց տասնյակ վերլուծական հաստատությունների մեծամասնությունը պատրաստ չէ արդյունավետ կերպով ներգրավվել պետության հետ փոխգործակցության և որոշումների կայացման գործընթացում: Մյուս կողմից՝ Հայաստանում առկա են կայացած, կազմակերպական և ինտելեկտուալ բավարար ռեսուրսներ, հետազոտական ավանդույթներ ունեցող ՈւԿ-ներ և ակադեմիական հաստատություններ, որոնք ոլորտում պետության նպատակաուղղված քաղաքականության պարագայում կարող են իրենց նպաստն ունենալ երկրի կառավարման ոլորտի արդյունավետության և ազգային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացման գործում:

Ամփոփելով և հիմնվելով միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրության արդյունքների վրա՝ կարող ենք առաջարկել հետևյալ քայլերը, որոնք, մեր կարծիքով, կարող են նպաստել և՛ պետական, մասնավորապես՝ ազգային անվտանգության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության ինտելեկտուալ սպասարկման մակարդակի բարձրացմանը, և՛ ՈւԿ-ների ոլորտի կայացման գործընթացի արագացմանը.

- Ազգային անվտանգության խորհրդին (ԱԱԽ) կից ստեղծել փորձագիտական խորհուրդ, որտեղ կհրավիրվեն ինչպես ՈւԿ-ների, այնպես էլ ակադեմիական շրջանակների ճանաչված մասնագետներ: Ակնկալվում է, որ անհրաժեշտ կլինի մշակել նաև վերոնշյալ Փորձագիտական խորհրդի կանոնակարգ, որի միջոցով հնարավոր կլինի առավելագույն կերպով գործնական հարթություն տեղափոխել այդ մարմնի գործունեությունը:
- ԱԱԽ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանմանը կամ աշխատակցին վերապահել փորձագիտական հանրության հետ կապի ապահովման գործառույթը: Վերջինս ենթադրում է փորձագետների և ՈւԿ-ների տվյալների բազայի ստեղծում, ՈւԿ-ների ոլորտի, այդ թվում՝ հրապարակումների, կազմակերպվող միջոցառումների մշտադիտարկման անցկացում, արտերկրի և Հայաստանի ՈւԿ-ների՝ ՀՀ ազգային անվտանգության ապահովման տեսակետից հետաքրքրություն ներկայացնող հրապարակումների վերաբերյալ զեկուցում ԱԱԽ քարտուղարին և համապատասխան ստորաբաժանմանը: Բացի այդ, անհրաժեշտ կլինի նաև պարբերաբար պատրաստել վերլուծական տեղեկանքներ ՈւԿ-ներում գեներացվող գաղափարների, առաջարկությունների և գործընթացների վերաբերյալ:
- Հայաստանում ներդնել բազմաթիվ երկրներում կիրառվող «պտտվող դռների» (*revolving doors*) համակարգը, որի միջոցով պետական կառավարման ոլորտ կներգրավվեն ՈւԿ-ների փորձագետները և ակադեմիական ոլորտի ներկայացուցիչները, որոնք ունեն հետազոտական և վերլուծական աշխատանքի փորձ:
- Քաղաքացիական ծառայողների և քաղաքացիական հատուկ ծառայողների պարտադիր վերապատրաստման դասընթացների ծրագրում ներառել պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցության հարցերին առնչվող հատուկ մշակված մասնագիտական դասընթաց:

***Հուլիս, 2016***

## Աղբյուրներ և գրականություն


1. *Միրումյան Կ, Արևշատյան Ս.*, Հայ փիլիսոփայության պատմություն // Եր., Լուսաբաց, 2007, էջ 53:
2. *Туронок С.Г.,* Политический анализ и прогнозирование: учебник для бакалавриата и магистратуры // М., Издательство Юрайт, 2016, с. 70-71.
3. *Freschi Catherine, Gaffney John*, French think tanks in comparative perspective // Stone D., Denham A. (eds.). Think Tank Traditions: Policy Research and Politics of Ideas, 2004, pp. 110-111.

4. *Лившин А.*, Региональный обзор: США // Атлас аналитических центров: русистика зарубежом. Rethinking Russia, 2016, с. 42.
5. *Erik C. Johnson*, How Think Tanks Improve Public Policy // Economic Reform Today, N 3, 1996, p. 36.
6. *Հարությունյան Գ.*, «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը // «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (35), 2011, էջ 7:
7. *Աթոյան Վ., Մովսիսյան Շ.*, Չինաստանի ուղեղային կենտրոնները // Եր., «Տնտեսագետ» («Ամբերդ» մատենաշար), 2016, էջ 18:
8. *Սիմավորյան Ա.*, Թուրքիայի հետազոտական կենտրոնները // «Տարածաշրջանի հետազոտական կենտրոնները (Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա)», Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2015:
9. *Աթոյան Վ.*, Ազգային անվտանգության հիմնախնդիրներ (դասախոսություններ) // Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 59, ինչպես նաև՝ *Атоян В.,* «Мозговые центры» в системе национальной безопасности // «Вестник АГЭУ», N 4 (40), 2015, с. 135.
10. *Armstrong J.S.*, Long-Range Forecasting: From Crystal Ball to Computer // N.J.: Wiley-Interscience, 1985, p. 6.
11. *Кунц Г., О'Доннел С.,* Управление: Системный и ситуационный анализ управленческих функций // т. 1, М., Прогресс, 1981, с. 147.
12. *Сунгуров А.,* Как возникают политические инновации: «фабрики мысли» и другие институты-медиаторы // М., Политическая энциклопедия, 2015, с. 78.
13. *Зайцев Д.,* Аналитические центры как субъекты политического процесса // Дисс. на соис. уч. ст. канд. пол. наук, М., 2009, с. 77.
14. *Бжезинский Зб.*, Выбор. Глобальное господство или глобальное лидерство // М., Международные отношения, 2010, с. 19.
15. *Панарин А.С.,* Глобальное политическое прогнозирование // М., Алгоритм, 2000, с. 13.

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

***Վարդան Աթոյան***

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցության հարցերն ազգային անվտանգության ապահովման համատեքստում: Ներկայացվում են տարբեր երկրներում, մասնավորապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Թուրքիայում, Չինաստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Սինգապուրում, Ֆրանսիայում պետության կողմից այս ոլորտում իրականացվող քաղաքականությունը, փորձագիտական հանրության անհատական և ինստիտուցիոնալ մակարդակով պետական կառավարման գործընթացում ներգրավման մեխանիզմները:

Իրականացված ուսումնասիրության հիման վրա ներկայացվում են կոնկրետ առաջարկություններ, որոնք կարող են նպաստել Հայաստանում պետության և փորձագիտական հանրության միջև համագործակցության ակտիվացմանը, ինչպես նաև պետական կառավարման, այդ թվում ազգային անվտանգության ապահովման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

## ВЗАИМОДЕЙСТВИЕ ГОСУДАРСТВО-ЭКСПЕРТНОЕ СООБЩЕСТВО В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

***Вардан Атоян***

Резюме

В статье обсуждаются вопросы взаимодействия государства и эксперного сообщества в контексте обеспечения национальной безопасности. Рассматривается политика разных стран в этой сфере, в частности, США, Турции, Китая, России, Сингапура, Франции, а также механизмы привлечения экспертного сообщества в сферу государственного управления на индивидуальном и институциональном уровне.

На основе исследования представлены конкретные предложения, которые могли бы способствовать укреплению и активизации сотрудничества между государством и экспертным сообществом Армении, а также повышению эффективности системы государственного управления и обеспечения национальной безопасности.

## INTERACTION BETWEEN THE STATE AND EXPERTS' COMMUNITY IN THE CONTEXT OF NATIONAL SECURITY

***Vardan Atoyan***

Resume

The article discusses issues of State – experts' community relations in the context of ensuring the national security. Policies implemented in the USA, Turkey, China, Russian Federation, Singapore and France are discussed in the mentioned article, along with the issues of engagement mechanisms of experts' community in the state governance processes at individual and institutional levels.

On the basis of the study proposals are presented to promote cooperation between the State and experts' community in Armenia, including for efficiency of the national security system.

# ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 1994Թ. ՀՐԱԴԱԴԱՐԻ ԵՎ 2016Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Հրայր Փաշայան*[*], *Լիանա Բալայան*[**]

*Բանալի բառեր* ՝ Ղարաբաղյան հակամարտություն, Բիշքեկյան արձանագրություն, եռակողմ համաձայնագիր, անժամկետ հրադադար, քառօրյա պատերազմ:

1994թ. մայիսի 12-ին ուժի մեջ է մտել Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ ստորագրված կրակի և ռազմական գործողությունների դադարեցման մասին անժամկետ համաձայնագիրը: Այս համաձայնագիրը և դրան նախորդած Բիշքեկյան արձանագրությունը (մայիսի 5) գործնականում հիմք դարձան ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտում հրադադարի հաստատման համար, որոնց շնորհիվ մինչև վերջերս կողմերի միջև հարաբերական խաղաղություն էր պահպանվում:

Ապրիլի 2-ին ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի նախահարձակ ռազմական գործողությունները և դրան հաջորդած՝ 1994թ. հրադարարի եռակողմ համաձայնագիրը միակողմանիորեն չեղարկելու և նոր պայմանագիր կնքելու Բաքվի փորձերը հրատապ են դարձնում նշված փաստաթղթերի վերլուծությունն արդի զարգացումների համատեքստում: Դրանց տեքստերում և ենթատեքստերում առկա են մի շարք իրավաքաղաքական փաստարկներ, որոնք հիմնախնդրի շուրջ տեղի ունեցած իրադարձությունների բացահայտման բանալին են՝ թե՛ տարածաշրջանում գերտերությունների վարած քաղաքականության շարժառիթների, թե՛ հակամարտող կողմերի, մասնավորապես՝ Ադրբեջանի դիրքորոշումների և թե՛ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ կապված:

**Բիշքեկյան արձանագրության ընդունման նախադրյալները:** Բիշքեկյան արձանագրությունն ընդունվել է 1994թ. մայիսի 4-5-ը Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում անցկացված ԱՊՀ խորհրդարանական վեհաժողովի՝ Ղրղզստանի խորհրդարանի, Ռուսաստանի Դաշնային ժողովի և արտգործնախարարության

[*] Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, ԼՂՀ Պաշտպանության բանակի կապիտան, քաղաքական գիտությունների թեկնածու:
[**] Ստեփանակերտի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի:

ներկայացուցիչների նախաձեռնությամբ, ինչը բարձրացնում է նման քաղաքական փաստաթղթի կարգավիճակը, մանավանդ որ այն ստորագրվել է ԱՀ, ՀՀ և ԼՂՀ ազգային ժողովների նախագահների կողմից: Բիշքեկյան հանդիպմանը մասնակցում էր Արցախի պատվիրակությունը՝ ԼՂՀ խորհրդարանի նախագահ Կարեն Բաբուրյանի գլխավորությամբ: Հարկ է նշել, որ Բիշքեկյան արձանագրությանը հասնելու համար բավական ջանք ու եռանդ պահանջվեց: Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունները դադարեցնելու համար երեք տարի անընդմեջ միջնորդական ջանքեր էին գործադրվում: Սակայն դրանք արդյունք չէին տալիս, քանի որ Բաքվում, հույսեր կապելով հիմնախնդրի ուժային լուծման հետ, անտեսում էին բոլոր առաջարկություններն ու ցուցաբերում անզիջողականություն:

Անշուշտ, այս գործընթացում ՌԴ-ն ունեցել է առանձնակի դերակատարում, որն այդ բարդ ժամանակահատվածում բավական մեծ աշխատանք է կատարել ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Բայց որպեսզի ձեռք բերված պայմանավորվածություններն ուժի մեջ մտնեին, միայն ռուսաստանյան միջնորդությունը բավարար չէր: Դրա համար համապատասխան նախադրյալներ էին անհրաժեշտ, որոնք ի հայտ եկան նախնառաջ ԼՂՀ Պաշտպանության բանակի վճռորոշ գործողությունների շնորհիվ: 1994թ. գարնանային պատերազմաշրջանի խոշորամասշտաբ ռազմական գործողությունների արդյունքում Ադրբեջանի համար նոր տարածքային կորուստներն անհեռանկար էին դարձրել պատերազմի շարունակումը: Ի հավելումն դրա՝ Մարտակերտի և Ակնայի (Աղդամ) շրջաններում ՊԲ հաղթարշավի և հակառակորդի հերթական ռազմահանգրվաններից մեկի՝ Միրբաշիրի կորստյան սպառնալիքի տակ երկրում հասունացել էր նաև ներքաղաքական ճգնաժամ, ինչը ստիպեց վերջինիս ընդունել կրակը դադարեցնելու մասին Ռուսաստանի Դաշնության առաջարկությունը [1]:

**Փաստաթղթի հիմնական շեշտադրումները:** Յոթ կետից բաղկացած փաստաթղթի հիմնական նպատակը կրակի դադարեցումն ու նրա հուսալի ամրապնդումն է: Բիշքեկյան արձանագրության առաջին, երկրորդ և չորրորդ կետերում նշվում էր, որ «մայիսի 4-5-ը Բիշքեկ քաղաքում անցկացված հանդիպման մասնակիցները վճռականություն արտահայտեցին ամեն կերպ օժանդակել Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ զինված հակամարտության դադարեցմանը…,

- պաշտպանելով ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի 1994թ. ապրիլի 15-ի հայտարարությունը[1]՝ պատրաստակամություն հայտնեցին լիովին

[1] Հարկ է նշել, որ «Բիշքեկին» նախորդել է ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի ապրիլի 15-ին ընդունված հայտարարությունը, որի հիմնական առաջնահերթությունը և կարգավորման հրամայականը կրակի, բոլոր ռազմական գործողությունների անհապաղ դադարեցումն է, որից հետո՝ դրա հուսալի ամրապնդումը: Բիշքեկյան արձանագրությունը, ըստ էության, նաև իրավաբանորեն ձևակերպեց կողմերի՝ այդ հայտարարության սկզբունքներին հետևելու մտադրությունը: Տե ս Архив МИД НКР, папка № 56.

աջակցել զինված դիմակայության դադարեցմանը և նրա հետևանքների վերացմանն ուղղված գործադիր իշխանության ներկայացուցիչների ու ղեկավարների ջանքերին՝ համապատասխան համաձայնագրի շուտափույթ կնքման միջոցով,

- հակամարտող կողմերին կոչ արեցին լսել ողջախոհության ձայնը. մայիսի 8-ի լույս 9-ի կեսգիշերին դադարեցնել կրակը՝ հիմնվելով 1994թ. փետրվարի 18-ի արձանագրության վրա (այդ թվում նաև դիտորդների տեղակայման մասով) և արդյունավետ աշխատանքով սեղմ օրերի ընթացքում այն ամրապնդել հուսալի, իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագրի ստորագրման միջոցով, որը նախատեսում է ռազմական և թշնամական գործողությունները չվերսկսելու ապահովման մեխանիզմ, գրավված տարածքներից զորքերի դուրսբերում և հաղորդակցման ուղիների գործունեության վերականգնում, փախստականների վերադարձ»:

Արձանագրության երրորդ կետով հանդիպման մասնակիցները «հանդես եկան հակամարտության դադարեցման գործում ԱՊՀ և Միջխորհրդարանական վեհաժողովի բնական ակտիվ դերի, դրա հետ կապված ՄԱԿ և ԵԱՀԽ սկզբունքների, նպատակների և կոնկրետ խնդիրների իրագործման օգտին (նախնառաջ Անվտանգության խորհրդի 822, 853, 874, 884 բանաձևեր)»:

Փաստաթղթի 5-րդ կետով «համաձայնեցին առաջարկել ԱՊՀ անդամ պետությունների խորհրդարաններին՝ քննարկել Միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի նախագահ Վ.Շումեյկոյի և վեհաժողովի խաղաղարար խմբի ղեկավար Մ.Շերիմկուլովի նախաձեռնությունը ԱՊՀ խաղաղապահ ուժերի ստեղծման մասին»:

6-7-րդ կետերը բուն խնդրին չեն առնչվում:

**«Ադրբեջանական խաղեր»:** Ինչպես նկատելի է արձանագրության տեքստից, այն գրեթե ամբողջությամբ կրկնությունն էր նախկինում եղած բոլոր նմանատիպ փաստաթղթերի՝ սկսած ժելեզնովոդսկյան հայտարարագրից և վերջացրած գրաչովյան արձանագրությամբ՝ նույն նպատակները, նույն պահանջները, գրեթե նույն միջնորդ պետությունների ներկայացուցիչների ստորագրությունները: Մտավախություն կար, որ այս փաստաթուղթը նախկիններ ի ճակատագիրը կունենա: Իսկ երբ վերջին պահին Ադրբեջանի խորհրդարանի փոխնախագահը մերժեց ստորագրել արձանագրությունը, տպավորություն ստեղծվեց, թե այս հանդիպումը նույնպես տապալված է: Սակայն որոշվում է, որ ովքեր համաձայն են փաստաթղթի դրույթների հետ, կստորագրեն, մյուսների համար այն բաց կմնա: Այս անգամ Ադրբեջանին հարմար չէր այն հանգամանքը, որ Արցախը ճանաչվում էր որպես բանակցությունների, հետևապես նաև հակամարտության լիիրավ կողմ: ԱՀ խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Միր-գամզա Էֆենդիևը նույնիսկ հայտարարել էր, թե Բիշքեկյան արձանագրություններն

ինքնին անընդունելի են, քանի որ բանակցություններ վարելով Ղարաբաղի ներկայացուցիչների հետ՝ Ադրբեջանը ճանաչում է Ղարաբաղը որպես հակամարտության կողմ [2]: Մինչդեռ Բիշքեկյան հանդիպման հենց սկզբում Վ.Շումեյկոն հայտարարել էր, որ առանց Լեռնային Ղարաբաղի՝ որպես հակամարտության կողմի ճանաչման կարգավորումն անհնար է: Այս հանգամանքը գիտակցելով՝ Ադրբեջանի պատվիրակությունը մասնակցել էր փաստաթղթի համաձայնեցմանը և միայն հաջորդ օրը «գլխի ընկել», որ այն ընդունելի չէ իր համար: «Իրական պատճառը,- նշում է 1992-1996թթ. Ռուսաստանի Դաշնության միջնորդական առաքելության ղեկավար, Լեռնային Ղարաբաղի խնդրով ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վ.Կազիմիրովը,- այդ օրերին Բրյուսելում Հ.Ալիևի մասնակցությունն էր ՆԱՏՕ խորհրդի նիստին և այնտեղ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակային փաստաթղթի ստորագրումը: Նրա ուղևորությունը ՆԱՏՕ կենտրոնակայան և ելույթը, որում հակամարտության համատեքստում ոչ Ռուսաստանը, ոչ ԱՊՀ-ն ոչ մի անգամ չէին հիշատակվել, արդեն իսկ հանդիսանում էին «զիգզագաձև» աշխարհաքաղաքական խաղի մի մասը, որի մեջ ներքաշվում էր Ադրբեջանի առաջնորդն արևմտյան տերությունների ճնշման ներքո:

Նույն թվականի մայիսի 21-ին Ալիևը հրապարակայնորեն հայտարարեց, որ նախապես կասեցրել էր արձանագրության ստորագրումը՝ Ջալիլովին չտալով այդպիսի իրավասություններ: Բիշքեկում,- շարունակում է Վ.Կազիմիրովը,- մենք Ալիևի հրահանգների մասին չգիտեինք, այդ պատճառով մայիսի 7-ին ես մեկնեցի Բաքու՝ Բիշքեկյան փաստաթղթի վերաբերյալ Ադրբեջանի վերջնական դիրքորոշումը պարզելու նպատակով»[1]:

**Հրադադարի եռակողմ համաձայնագրի ստորագրումը:** Մայիսի 8-ին Վ.Կազիմիրովը հանդիպում է ԱՀ նախագահի և բարձրագույն ղեկավարության հետ, և տեղի ունեցած վեճերի արդյունքում Հ.Ալիևը հանձնարարում է Միլի մեջլիսի նախագահ Ռ.Գուլիևին ստորագրել փաստաթուղթը[2], իսկ պաշտպանության

[1] *Կազիմիրով Վ.,* «Չկային կնիքներ, կնքամոմեր, ոչ էլ գեղեցիկ թղթապանակներ», http://www.mediamax.am/printpage.php?lang=am&nid=10194

[2] Վ.Կազիմիրովի վկայությամբ, «ԱՀ ղեկավարության հետ հանդիպման ընթացքում ինչ-որ մեկն առաջարկեց «դիտորդներ» բառից առաջ գրել «միջազգային» բառը, մյուսը՝ «զբաղեցրած տարածքներ» արտահայտությունը փոխարինել «գրաված» բառով: Ինչպես կարող էի, բացատրում էի, որ իրականում տեքստում փոփոխություններ կատարելն իմաստ չունի, քանի որ Բիշքեկի հանդիպման մնացած մասնակիցները փաստաթուղթը ստորագրել են այն տեսքով և չեն զբաղվի դրա վերանայմամբ: Դրսևորվեց նաև Բաքվի դիվանագիտության ավանդական «ցավոտ կետը». կրկին սկսեցին պահանջել Նիզամի Բահմանովի ստորագրությունը՝ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի անունից: Ես նրանց ապացուցում էի, որ Բահմանովը չի կարող հավասարեցվել ներկայացված կառույցների ղեկավարներին, սակայն նրանց շահերը վեր էին ցանկացած տրամաբանական փաստարկներից: Ի վերջո, ադրբեջանցիները պատրաստակամություն հայտնեցին ստորագրել արձանագրությունը նշված վերապահումներով և Բահմանովի ստորագրությամբ: Խորհրդարանի նախագահ Գուլիևը ստորագրեց, իսկ էջի ներքևում ընթեռնելի ձեռագրով ռուսերեն գրվեցին երկու «վերապահումներ»…
Բահմանովի ստորագրության գաղափարն անհաջող ավարտ ունեցավ: Ադրբեջանցիները փաստաթղթում ձեռագիր ավելացրել էին նաև նրա ազգանունը, սակայն չէին կարողացել նրան ժամանակին

նախարարին՝ ապահովել կրակի դադարեցումը[1]: Հրադադարի պայմանագիրն իր փաստաթղթային ձևակերպումը ստացավ ԱՀ պաշտպանության նախարար Մ.Մամեդովի, ՀՀ պաշտպանության նախարար Ս.Սարգսյանի և ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատար Ս.Բաբայանի (համապատասխանաբար ստորագրել են մայիսի 9-ին, 10-ին և 11-ին) կողմից՝ ՌԴ պաշտպանության նախարար Պ.Գրաչովին և ԱԳ նախարար Ա.Կոզիրևին ուղղված համատեղ նամակում, որտեղ նրանք պատրաստակամություն հայտնեցին 1994թ. մայիսի 11-ի լույս 12-ի գիշերը դադարեցնել կրակը [3]:

Փաստաթուղթը բաղկացած է ներածականից (որտեղ կողմերը, արձագանքելով 1994թ. մայիսի 5-ի Բիշքեկյան արձանագրության մեջ շարադրված՝ կրակի դադարեցման կոչին և հիմնվելով 1994թ. փետրվարի 18-ի Արձանագրության վրա [4], համաձայնեցին ներքոնշյալին) ու չորս կետերից: Առաջին կետով նախատեսվում էր ապահովել կրակի և ռազմական գործողությունների լրիվ դադարեցումը՝ 1994թ. մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից:

Փաստաթղթի երկրորդ կետով կողմերը «համաձայնեցին խնդրել ՌԴ ՊՆ-ին, ոչ ուշ քան մինչև ս.թ. մայիսի 12-ը Մոսկվայում գումարել ԱՀ, ՀՀ պաշտպանության նախարարների և Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի հրամանատարի խորհրդակցություն՝ զորամասերի տարանջատման սահմանները, այլ ռազմատեխնիկական անհետաձգելի հարցերը համաձայնեցնելու և միջազգային դիտորդների առաջավոր խմբի գործունեությունը ծավալելու նախապատրաստման նպատակով»:

Հատկանշական է փաստաթղթի երրորդ կետը, որով նախատեսում էր, որ կողմերը տասնօրյա ժամկետում՝ ոչ ուշ, քան մայիսի 20-ը, պետք է ստորագրեն զինադադարի մասին համաձայնագիրը, ինչը, սակայն, նշված ժամկետում չկատարեց ադրբեջանական կողմը:

Փաստաթղթի չորրորդ կետը վերաբերում է պայմանավորվածության ուժի մեջ մտնելուն, այն բանից անմիջապես հետո, երբ միջնորդը կտեղեկացնի, որ հակամարտող ուժերից ստացել է լիազորված ներկայացուցիչների ստորագրած լրիվ նույնական փաստաթղթերը:

**Հրադադարի ստորագրման Բաքվի դրդապատճառները:** 1994թ. մայիսի սկզբին ադրբեջանական ղեկավարությունը շահագրգռված էր հրադադարով: Վ.Կազիմիրովը փաստում է. «Մեր ջանքերը որևէ արդյունք չէին տա, եթե, Ալիևի դրությունը չլիներ անելանելի: Ալիևը կանգնած էր ոչ միայն նոր տարածքներ, այլև

գտնել Բաքվում: Մոսկվային տեղեկացնելով Գուլիևի կողմից Բիշքեկյան արձանագրության ստորագրման մասին՝ ես հաջորդ օրն այդպես էլ ինձ հետ վերցրի տեքստի օրինակը՝ երկու վերապահումներով ու Բահմանովի ավելացված ազգանունով, բայց առանց նրա ստորագրության»: Տե ս *Казимиров В.,* Карабах. Как это было?//"Международная жизнь", 1996, N 5.

[1] Նույն տեղում:

իշխանությունը կորցնելու վտանգի առաջ» [5, էջ 255]: ԱՀ պաշտպանության նախարար Մ.Մամեդովն այդ առթիվ հետևյալն է նշել. «Մենք մարտական գործողություններ էինք վարում, կանգ առանք, անցանք պաշտպանության, հակառակորդը որոշեց, որ մենք անզոր ենք գրոհելու, և կարող է հակագրոհի անցնել: Եվ որպեսզի դա տեղի չունենա, անհրաժեշտ էր անցնել կրակի դադարեցման համաձայնագրի» [5, էջ 254]: Կարծես թե ամեն ինչ ասված է պարզ ու հստակ: Նախկինում ադրբեջանական կողմը կամ ցանկություն չէր հայտնում այդ քայլին գնալ, կամ նախապայմաններ էր առաջ քաշում՝ երբեմն ակնհայտ անիրատեսական, կամ խզում ու խախտում էր պայմանավորվածությունները, բայց այս անգամ ավելի հաստատակամ արտահայտվեց, ընդ որում՝ ամենաբարձր մակարդակով, և ինչպես նկատելի է փաստաթղթի տեքստից, որևէ նախապայման չառաջադրվեց:

**Փաստաթղթերի իրավաքաղաքական փաստարկները:** Փաստաթղթերի վերլուծությունից կարելի է առանձնացնել հետևյալ իրավաքաղաքական փաստարկները:

Հրադադարի հաստատման մասին փաստաթուղթը ստորագրել են հակամարտության երեք կողմերը: Վ.Կազիմիրովի վկայությամբ, «փաստաթուղթը նախատեսվում էր ստորագրության ԱՀ-ի և ԼՂՀ-ի միջև, և միայն ամենավերջում է փաստաթղթի տեքստում ավելացվել ՀՀ պաշտպանության նախարարի անունը»[1]:

Ինչպես նկատելի է, հրադադարի մասին համաձայնագիրը նախորդներից տարբերվում է նաև նրանով, որ այնտեղ որևէ ժամկետ նշված չէր. այն կնքվել էր որպես անժամկետ փաստաթուղթ: Բացի դրանից, համաձայնագիրը չէր պարունակում հրադադարի ամրագրման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հակամարտող կողմերի զորքերի հեռացումը շփման գծից, ծանր զենքի դուրսբերումը, բուֆերային գոտու ստեղծումը, չեզոք դիտորդների կամ բաժանարար ուժերի տեղակայումը, վերահսկողության միջոցների և միջազգային երաշխիքների սահմանումը: Մեկնակետն այն էր, որ այդ խնդիրների մի մասը լուծվելու է Ադրբեջանի և Հայաստանի պաշտպանության նախարարների ու Լեռնային Ղարաբաղի ՊԲ հրամանատարի հանդիպման ընթացքում՝ Պ.Գրաչովի մասնակցությամբ:

Փաստաթղթի առանձնահատկություններից մեկն էլ, ինչպես նշված է ներածականում, 1994թ. փետրվարի 18-ի արձանագրության վրա հիմնվելն է, որի կետերից մեկով «Կողմերն իրավունք են վերապահում Միջնորդին անվտանգության գոտիներում ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների խախտման դեպքում կիրառել ներգործության բոլոր անհրաժեշտ միջոցառումներն ու միջոցները՝ ընդհուպ ռազմա-

[1] *Կազիմիրով Վ.,* «Չկային կնիքներ, կնքամոմեր, ոչ էլ գեղեցիկ թղթապանակներ», http://www.mediamax.am/printpage.php?lang=am&nid=10194

կան, սույն Արձանագրության պայմանները խախտող զինված կազմավորումների նկատմամբ» [4]:

Սակայն ԱՀ հեռացումը հրադադարի ամրագրման միջոցներից հնարավորություն չտվեց ռազմատեխնիկական առումով հիմնովին ամրապնդել հրադադարի համաձայնագիրը, ինչի հետևանքով այն պատշաճ ամրապնդում չստացավ ո՛չ Ռուսաստանի, ո՛չ Արևմուտքի կողմից և մնաց համեմատաբար խոցելի: Այդ պատճառով միջնորդները 1994թ. հուլիսին հանդես եկան նոր համաձայնագրի ստորագրման նախաձեռնությամբ: Արդյունքում՝ հրադադարի պահպանման և ամրապնդման տեսանկյունից մեծ քայլ կատարվեց 1994թ. հուլիսի 27-ին, երբ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Սարգսյանը, ԼՂՀ ՊԲ հրամանատար Ս.Բաբայանը և ԱՀ պաշտպանության նախարար Մ.Մամեդովը նամակ հղեցին ՌԴ պաշտպանության և ԱԳ նախարարներ Պ.Գրաչովին և Ա.Կոզիրևին, ՌԴ նախագահի ներկայացուցիչ Վ.Կազիմիրովին և ՄԽ նախագահ Յ.Էլիասոնին, որտեղ «Հակամարտող կողմերը պարտավորվում են համաձայնեցված ժամկետներում հաստատել հրադադարի առնչությամբ իրենց ստանձնած պարտականությունները և պահպանել հրադադարի ռեժիմը՝ ընդհուպ մինչև Մեծ քաղաքական համաձայնագրի կնքումը, որը նախատեսում է ռազմական գործողությունների լիակատար դադարեցում [3]: Ըստ ՀՀ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ժ.Լիպարիտյանի՝ այս փաստաթուղթը համաձայնեցվել էր առանց որևէ միջնորդության՝ հակամարտող կողմերի անմիջական շփումների արդյունքում [6, p. 434]:

Այն ժամանակ նման աննախադեպ քայլը կարելի էր գնահատել պաշտոնական Բաքվի՝ ԼՂՀ-ն իբրև բանակցությունների առանձին կողմ ճանաչելու դիրքորոշման մեջ որոշակի փոփոխությունների արդյունք: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այն առավելապես կապված էր Ալիևի վարչակարգի կողմից տարվող նավթային դիվանագիտության հետ: Բաքվին անհրաժեշտ էին պատերազմը չվերսկսելու երաշխիքներ, որոնց առկայության դեպքում միայն նավթային ընկերությունները ներդրումներ կկատարեին: Հենց դա էր պատճառը, որ մինչ այդ Լեռնային Ղարաբաղը որպես հակամարտության կողմ սկզբունքորեն չճանաչող ԱՀ-ն այս անգամ նման մոտեցում չդրսևորեց:

**Փաստաթղթերի իրավաբանական ուժը:** Բիշքեկյան արձանագրության և դրան հաջորդած բանակների ղեկավարների ստորագրած փաստաթղթերի կարևոր իրավաքաղաքական նշանակությունն այն է, որ դրանցից առաջինի օգնությամբ հաստատվեց հրադադարը, իսկ մյուս երկուսով՝ կողմերն իրավականորեն պարտավորվեցին ապահովել կրակի և ռազմական գործողությունների ամբողջական դադարեցումը՝ զինադադարի մասին համաձայնագրի կնքման համար:

Չնայած ընդունված փաստաթղթերի դրույթներն իրականություն չդարձան, այդուհանդերձ, դրանք իրենց իրավաբանական ուժը չեն կորցրել: Հետևաբար, ՀՀ-ն և ԼՂՀ-ն իրավունք ունեն պահանջելու վերադառնալ հենց այդ ձևաչափին: Այս մասին անուղղակիորեն նշել է նաև 2016թ. ապրիլի 21-22-ը պաշտոնական այցով Երևանում գտնվող ՌԴ ԱԳ նախարարը: «Համաձայնագրերը, որոնք կնքվել են դեռևս 1994-1995թթ., ամբողջությամբ ուժի մեջ են,- շեշտել է Ս.Լավրովը՝ հավելելով, որ այս համաձայնագրերի պահպանման համատեքստում Ռուսաստանի միջնորդությամբ համաձայնեցվել են քայլեր, որոնք անհրաժեշտ է կյանքի կոչել»[1]: Հասկանալի է, որ համաձայնագրերի շրջանակում մնալու Լավրովի երևանյան հայտարարությունն ուղղված էր ոչ այնքան հակամարտության ձևաչափին ու բանակցությունների վերսկսման համար պայմաններ ստեղծելուն, որքան Ադրբեջանի սադրիչ, ասել է թե՝ Մոսկվայի միջնորդական ջանքերն իմաստազրկող նախաձեռնությունը թույլ չտալուն:

**Ադրբեջանական կայքի վերլուծությունները:** Ադրբեջանական minval.az կայքը, վերլուծելով Բիշքեկյան արձանագրությունն ու դրան հաջորդած զինադադարի հաստատումը, հետաքրքիր եզրակացություններ է կատարել[2]: Հոդվածում նշվում է, որ յուրաքանչյուր երկիր Բիշքեկյան արձանագրությունը ստորագրել է իր շահերից ելնելով: «Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա երկրի շահերից էր բխում դադարեցնել իր համար ոչ բարենպաստ պատերազմի ընթացքը և ժամանակ շահել: Բաքվում հասկանում էին, որ Բիշքեկյան արձանագրությունն Ադրբեջանի պարտության ոչ հրապարակային ընդունումն ու Հայաստանի դիրքերի ամրապնդումն էր: Հավանաբար, պատահական չէր, որ Հեյդար Ալիևը մեկնել էր Բրյուսել՝ դիվանագիտորեն հրաժարվելով Բիշքեկյան արձանագրությունը ստորագրելու որոշման պատասխանատվությունից: Արձանագրության ստորագրմանը չէր մեկնել նաև խոսնակը, իսկ վարչապետը հրապարակայնորեն քննադատել էր Բիշքեկյան խաղաղապահությունը: Բիշքեկ մեկնել էր այն ժամանակվա փոխխոսնակ Ջալիլովը, սակայն նա էլ չէր ստորագրել արձանագրությունը՝ համարելով այն ԼՂՀ ճանաչման նախադրյալ»,- ասվում է կայքում:

«...Չնայած անհանգստությանը և վախին, վերջիվերջո խոսնակ Գուլիևը ստորագրել է արձանագրությունը և սկսել է հավաստիացնել բոլորին, որ շուտով կսկսվի «գրավված ադրբեջանական տարածքների փուլային ազատագրումը», և փախստականները կվերադառնան իրենց տները... Պաշտոնապես Բիշքեկյան արձանագրության ստորագրումը ներկայացվել է որպես Բաքվի ղեկավարության հաղթանակ: Հոռետեսները համարում էին, որ ժամանակավոր հանգիստը հոգուտ

[1] ՀՀ-ն բանակցությունների համար նախապայմաններ ունի, տարածքներ հանձնելու թեման կասկածելի է, http://armtimes.com/hy/read/84129
[2] Армения приостановила войну на победной ноте, http://minval.az/author/550/

հայերի է լինելու: Արդեն 20 տարի է անցել, և հնարավոր է տեսնել, թե ինչպես են տնական և հարաբերական զինադադարից օգտվել կողմերը»,- ասվում է կայքում:

Minval.az-ի վերլուծական ծառայությունը գրում է, որ «Ռուսաստանին չի հաջողվել հասնել ամենակարևորին՝ իր խաղաղապահ ուժերը հաստատել հակամարտության գոտում: Սակայն, շնորհիվ Բիշքեկյան արձանագրության, նրան հաջողվել է պահպանել վերահսկողությունը Ղարաբաղյան հարցի շուրջ և զրոյի հավասարեցնել միջազգային խաղաղապահ առաքելության ջանքերը»:

Հոդվածում շեշտվում է նաև, որ Բիշքեկյան խաղաղապահ առաքելությունը նպաստել է ԼՂՀ պետականության զարգացմանը՝ նախագահական, ինչպես նաև խորհրդարանական ընտրություններ են անցկացվել ԼՂՀ-ում, ձևավորվել են պետական կառույցները և այլն: «Մի խոսքով, հիմք է դրվել Ադրբեջանից անկախանալու գործընթացին»,- ասվում է հոդվածում:

«Ադրբեջանին հաջողվել է շահել ամենակարևորը՝ ժամանակ: Հենց այդ ձեռքբերումն էր, որ հնարավորություն տվեց տեսնել Արևմուտքի՝ Ադրբեջանի հանդեպ վերաբերմունքի առաջընթացը: …Համաձայնագիրը, ըստ էության, նախադրյալներ է ստեղծել ԼՂՀ օրինականացման և պետական կառույցների ձևավորման համար: Այն նվազագույնի է հասցրել հակամարտության «ուժային» լուծման հնարավորությունը՝ սահմանափակելով խուսանավելու հնարավորությունները. խաղաթղթերը դրված են արտաքին աշխարհի և դիվանագիտության վրա: Մինչ այսօր մենք քաղում ենք Բիշքեկյան արձանագրության դառը պտուղները, որը դադարեցրել է պատերազմը, բայց ոչ մի կերպ մեզ չի մոտեցրել «խաղաղությանը»,- ամփոփում է minval.az-ի վերլուծական ծառայությունը:

**Բանակցությունները և գերտերությունները:** Հրադադարի կնքումից հետո պետք է բանակցությունները շարունակվեին հակամարտության կարգավորման մյուս հարցերի շուրջ համաձայնության հասնելու համար: Այս խնդիրներն էին քննարկվում Մոսկվայում ընթացող բանակցություններում, որոնք ի սկզբանե դատապարտված էին ձախողման՝ կապված Արևմուտքի բարձրացրած «հակառուսական հիստերիայի» հետ, որում հատկապես ակտիվ էր ԱՄՆ-ը: Մոսկովյան հանդիպումից հետո Ադրբեջանում ԱՄՆ դեսպանը հայտարարեց. «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ցանկացած նախագիծ, այդ թվում և ռուսաստանյան առաջարկությունները, պետք է իրականացվեն Մինսկի խմբի շրջանակներում, իսկ հակամարտության գոտում բաժանարար ուժերի տեղակայումը պետք է կատարվի միջազգային դիտորդների վերահսկողության պայմաններում» [7]: Սկզբունքորեն այս հայտարարությունը համընկնում էր Ռուսաստանի առաջարկությունների հետ, բայց քանի որ ՄԽ անդամ պետություններից ոչ մեկը[1]

[1] Բացառությամբ Թուրքիայի, որի զորքերի տեղակայմանը կտրուկ դեմ են հայերը:

պատրաստ չէր զորք ուղարկել հակամարտության գոտի, ապա այն, ըստ էության, ուղղված էր Ռուսաստանի ջանքերով Բիշքեկում և Մոսկվայում ձեռք բերված պայմանավորվածությունների և տարածաշրջանում նրա հեղինակության աճի դեմ: Արևմուտքի ծրագրերին նպաստում էր նաև ԱՀ վարած քաղաքականությունը: Իշխանության գալով Ռուսաստանի օգնությամբ՝ Հ.Ալիևը սկզբնական շրջանում վարում էր ռուսամետ քաղաքականություն, հուսալով նրա օգնությամբ հոգուտ իրենց լուծել խնդիրը [8]: Այնուհետև, իր համաձայնությունը տալով ՆԱՏՕ «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին՝ նա հայտարարեց. «Իմ երկիրը սրանով հույս ունի ՆԱՏՕ աջակցությունը ստանալ Ղարաբաղյան հիմնախնդիրը լուծելու համար» [9]: Սակայն ՆԱՏՕ-ին նույնպես անհրաժեշտ է ոչ միայն համագործակցել Հարավային Կովկասի երկու պետությունների, այլև երեքի հետ... Մանավանդ որ առանց ՀՀ մասնակցության անհնար է ապահովել կարևոր հաղորդակցության ուղիների անվտանգությունը [10, c. 93]:

1994թ. մայիսի վերջին շրջանառության մեջ դրվեցին հակամարտության կարգավորման՝ «Մեծ քաղաքական պայմանագրի» երկու տարբերակներ՝ մեկը ՌԴ, մյուսը՝ ԵԱՀԽ հեղինակությամբ: Երկու տարբերակներն էլ նախատեսում էին խաղաղության վերահսկման նպատակով բաժանարար ուժերի տեղակայում, փախստականների վերադարձ, կապուղիների վերագործարկում, շրջափակման վերացում և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշում՝ հակամարտության վերջին փուլում: Քանի որ ԵԱՀԿ անդամ պետություններից ոչ մեկը պատրաստ չէր խաղաղարար ուժեր տեղակայել հակամարտության գոտում, պայմանագրերից որևէ մեկի ընդունումից հետո տարածաշրջան պիտի ուղարկվեին ռուսական խաղաղարարները: Ընդհանրապես, խաղաղապահ զորքերի տեղակայման հարցից է կախված, թե ով է ունենալու գերակշիռ ազդեցություն Հարավային Կովկասում [11]: Այս հանգամանքից ելնելով՝ ԱՄՆ-ը և Եվրոպան ոչ մի դեպքում չէին ցանկանում թույլ տալ, որ հակամարտության գոտում տեղակայվեն ռուսական խաղաղարարական բաժանիչ ուժեր և դրա համար էլ մշտապես ճնշում էին գործադրում Ադրբեջանի վրա [12, c. 272]: ԱՄՆ-ում ԱՀ դեսպան Աֆիզ Փաշաևը, հարցազրույց ունենալով լրագրողների հետ, այս առիթով հայտարարեց. «Ադրբեջանը դեմ է ռուսական ուժերը հակամարտության գոտում տեղակայելուն, դա կնշանակեր ռազմակալում ինքնուրույն պետության տարածքի... Խաղաղապահ ուժերը պետք է մտցվեն տարածաշրջան ԵԱՀԽ շրջանակներում» [13]: Հայկական կողմերը ևս միանշանակ չընդունեցին ռուսական զորքերի տեղակայման գաղափարը, չնայած այն ժամանակվա քաղաքական գործիչները գիտակցում էին, որ առանց խաղաղապահների տեղակայման խաղաղություն չի լինի: Պատճառն այն էր, որ հայ հասարակության մեջ մտքեր էին հնչում, թե խաղաղարար զորքերը

հեշտությամբ կարող են օկուպացիոն զորքեր դառնալ և նպաստել Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի իշխանության տակ վերադարձնելուն [14, c. 525]:

**Կողմերի՝ հրադադարի ռեժիմի ամրապնդման և միջադեպերի ուսումնասիրության միջազգային-իրավական պարտավորվածությունը:** Հարկ է նշել, որ 1995թ. փետրվարի 6-ից՝ միջնորդների առաջարկությամբ, հակամարտող կողմերը պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների՝ ԱՀ պաշտպանության նախարար Մ.Մամեդովի, ՀՀ պաշտպանության նախարար Ս.Սարգսյանի և ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատար Ս.Բաբայանի ստորագրությամբ, եռակողմ ձևաչափով միջազգային-իրավական պարտավորություն են վերցրել հրադադարի ռեժիմի ամրապնդման և միջադեպերի ուսումնասիրության վերաբերյալ[1]՝ կրկին փաստելով, որ հակամարտության կողմեր են հանդիսանում ԱՀ-ն, ՀՀ-ն և ԼՂՀ-ն: Ըստ Վ.Կազիմիրովի, «Ղարաբաղի վերաբերյալ 1993-1994թթ. Ռուսաստանի միջնորդությամբ և 1995թ. ԵԱՀԿ շրջանակներում ընթացող բանակցություններն անցկացվել են ոչ թե ՄԽ հին սխեմայի համաձայն (ԵԱՀԽ 1992թ. մարտի 24-ի որոշման հիման վրա՝ 11 պետություն և երկու շահագրգռված կողմեր, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկայացուցիչներ), այլ արդեն նոր՝ բոլորովին այլ հիմքերով. հակամարտող երեք կողմերի միջև… Երբ ադրբեջանական կողմը Բուդապեշտյան գագաթաժողովից հետո, որտեղ ամեն ինչ թույլատրվել էր Հ.Ալիևի կողմից, սկսել է արգելակել բանակցությունները, գործող համանախագահ Լասլո Կովաչը 1995թ. մարտի 31-ին Պրահայում ընթացող ԵԱՀԿ ղեկավարների խորհրդում հստակորեն թվարկել է Ղարաբաղյան հակամարտության կողմերին՝ երկու պետություն (Ադրբեջանը և Հայաստանը) և Լեռնային Ղարաբաղը: Մինչ այժմ Ղարաբաղյան հակամարտության փոխտեղադրության (կոնֆիգուրացիայի) աղավաղումը միայն խանգարում է նրա խաղաղ կարգավորմանը, որում Բաքուն պետք է ավելի շահագրգռված լինի, քան հայկական կողմը» [15, c. 102-103]:

**Ադրբեջանը շարունակում է ապակառուցողական քաղաքականությունը:** Հարկ է փաստել նաև, որ միջնորդական առաքելության լիարժեք համակարգմանն ու հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացին մշտապես խանգարել և խանգարում է ադրբեջանական կողմը: ԱՀ-ն մի կողմից համառորեն շարունակում է Լեռնային Ղարաբաղի՝ որպես հակամարտության կողմի, չճանաչման և չընդունման քաղաքականությունը, դրանով իսկ փորձելով հակամարտությունը ներկայացնել որպես եկկողմ՝ հակամարտություն Հայաստանի ու Ադրբեջանի միջև, դրանից բխող ադրբեջանամետ հետևություններով: Մինչդեռ, երբ ռազմաճակատում կամ Բաքվում իրավիճակն Ադրբեջանի

[1] http://vn.kazimirov.ru/doc12.htm

համար անբարենպաստ ընթացք էր ստանում, նրա ռազմաքաղաքական բարձրագույն ղեկավարությունը, ներառյալ հենց նախագահ Հեյդար Ալիևը, մոռանալով Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին սեփական բարբաջանքները, բազմիցս, ընդ որում՝ նաև գրավոր ձևով, ուղղակիորեն դիմում էին ԼՂՀ իշխանություններին՝ հրադադարի մասին համաձայնության նպատակով բարձրաստիճան հանդիպում կազմակերպելու խնդրանքներով[1]: 1994թ. Բաքվի և Ստեփանակերտի միջև ուղղակի բանակցությունների, ինչպես նաև միջնորդների մասնակցությամբ հրադադարի հաստատման և հակամարտության կարգավորման նպատակով ընդունված բազմաթիվ փաստաթղթերում ԱՀ-ի հետ համատեղ առկա են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչների ստորագրությունները[2]: Այդ բանակցությունները տեղի էին ունենում ոչ միայն միջնորդ երկրների տարածքներում, այլև բուն ադրբեջանա-ղարաբաղյան սահմանի վրա՝ հիմնականում Բաքվի նախաձեռնությամբ: Դրա շնորհիվ էր հնարավոր դարձել առանց կողմնակի ուժերի ներգրավվածության հակամարտության գոտում այսքան ժամանակ պահպանել հարաբերական խաղաղությունը, ինչը միջազգային հակամարտությունների պրակտիկայում եզակի երևույթ է:

[1] Վ.Կազիմիրովը վկայում է. «Զինված հակամարտության խորացման, հատկապես ռազմաճակատում գործերի անհաջողության դեպքում, Ադրբեջանի ղեկավարությունը հարաբերությունների մեջ էր մտնում Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հետ, իսկ Հ.Ալիևի օրոք հենց ինքն է սկսել նրանց վրա դուրս գալ, հաճախ ուղղակիորեն՝ առանց Ռուսաստանի ԱԳՆ-ի: Հակամարտության այս երկու կողմերն աստիճանաբար սկսել են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսով կամ հեռապատճենային կապով՝ հաճախ Բաքվի նախաձեռնությամբ, իսկ ղարաբաղցիները հազվադեպ էին իրենք կապի դուրս գալիս՝ խնդրողի դերում հանդես չգալու համար...
1993թ. երկրորդ կեսին ադրբեջանական կողմը սկսել է դրսևորել ակնհայտ հետաքրքրություն մարտերի սահմանափակման կամ ժամանակավոր դադարեցման վերաբերյալ, որովհետև ռազմաճակատում նախաձեռնությունն անցել էր հայերին...
Ղարաբաղցիների հետ նամակագրությունում (ինչպես ուղղակի, այնպես էլ միջնորդների միջոցով) ադրբեջանցիները, որպես կանոն, օգտագործել են պաշտոնական բլանկներ, Ղարաբաղի հայերին նշել են «կողմ» տերմինով: Աստիճանաբար հստակ էր դառնում հասցեագրումը (օրինակ, «Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարություն», «Լեռնային Ղարաբաղի ղեկավարություն»):
Մի անգամ Հ.Ալիևը (ամենից առաջ անստույգության արդյունքում) նույնիսկ լիազորագիր է ստորագրել «ԼՂՀ»-ի հետ բանակցությունների վարման համար: Հասկանալով մեկ ավելորդ տառի քաղաքականացման անմտությունը՝ ես զանգեցի նրան և շուտով հեռապատճենային կապով ստացա նոր մանդատ՝ նրա ստորագրությամբ, բայց արդեն առանց «Հ» տառի: Սակայն հետո պարզվեց, որ մանդատի առաջին տարբերակն արդեն ուղարկվել էր Ստեփանակերտ: Ճիշտ է, ղարաբաղցիները ոչ մի ձևով չփորձեցին շահարկել այս վրիպումը: Հասկանալի է, որ միամտություն կլինի գերագնահատել նման հարկադիր կամ չմտածված վրիպումը և դրանում «ԼՂՀ»-ի, առավել ևս նրա պետականության ճանաչման հիմք տեսնել, բայց դա հաստատում էր, որ Բաքուն ղարաբաղցիներին ընդունում էր որպես հակամարտող կողմ:
Ադրբեջանցիներն այն ժամանակ Հայաստանը որպես այդպիսին հիմնականում հիշատակում էին քարոզչական նպատակներով, իսկ օպերատիվ փաստաթղթերում՝ ուղղված ռազմաճակատում ռազմական գործողությունների դադարեցմանը, նույնիսկ չեն էլ ցանկացել ինչ-որ բան կապել Երևանի հետ» (*Казимиров В.,* Мир Карабаху. Посредничесто России в урегулировании нагорно-карабахского конфликта, М., 2009, с. 95-96).

[2] Ռուսաստանի միջնորդությամբ և Բաքվի ու Ստեփանակերտի միջև ուղղակի կապերի մասին վկայող փաստաթղթերի մեծամասնությունն իր աշխատությունում և պաշտոնական կայքում ներկայացրել է Վ.Կազիմիրովը: Տե՛ս *Казимиров В.,* Мир Карабаху. Посредничесто России в урегулировании нагорно-карабахского конфликта, М., 2009, կամ http://vn.kazimirov.ru.

Մյուս կողմից՝ պաշտոնական Բաքուն ձգտում է կասկածի տակ դնել միջազգային հանրության կողմից հակամարտության կարգավորմամբ զբաղվելու լիազորված միջազգային կառույցի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունն ու նրա նպատակահարմարությունը, հանդես գալով հիմնախնդրի լուծումն այլ միջազգային կառույցներ տեղափոխելու և տարբեր ատյաններում քննարկելու նախաձեռնություններով: Այդպիսի հերթական փորձերից մեկն էլ արվել է 2008-ին, երբ ադրբեջանական կողմը ՄԱԿ Գլխավոր ասամբլեա ներկայացրեց միակողմանի և ապակառուցողական բանաձև՝ փորձելով իրեն ապահովագրել «Կոսովոյի նախադեպից» [16, էջ 65-76]: Քառօրյա պատերազմից անմիջապես հետո՝ ապրիլի 14-ին, ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում և Անվտանգության խորհրդում տարածվել է Ադրբեջանի հերթական սադրիչ նամակը, որտեղ փորձ է արվում ռազմական գործողությունների սանձազերծման պատասխանատվությունը Հայաստանի վրա դնելով՝ միակողմանիորեն չեղարկել 1994թ. մայիսի 12-ին Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև ստորագրված զինադադարի եռակողմ անժամկետ համաձայնագիրը[1]: Այսինքն՝ ադրբեջանական իշխանությունները մայիսյան հրադադարի փաստաթղթերում, որոնցում կա նաև Արցախի Հանրապետության ներկայացուցչի ստորագրությունը, 22 տարի անց ԼՂՀ միջազգային ճանաչման իրենց համար անընդունելի սպառնալիք են տեսնում: Պետք է փաստել, որ 22 տարի առաջ կնքված համաձայնագրի հակառակորդներ եղան ոչ միայն ադրբեջանական կողմում: Արցախյան զինվորականների որոշ մասը դեռ այն ժամանակ համոզված էր, որ ԼՂՀ Պաշտպանության բանակն ի վիճակի էր վերջնականապես ջախջախել Ադրբեջանը, եթե ԱՊՀ ղեկավարները համառորեն չպնդեին հրադադարի վերաբերյալ պայմանագրի ստորագրումը: Ադրբեջանի ղեկավարության արկածախնդիր գործողությունների շնորհիվ 1994-ին ստորագրված համաձայնագրի հակառակորդների թիվն Արցախում 22 տարի անց նկատելիորեն աճել է:

* * *

Քառօրյա պատերազմի պատճառներն ու հետևանքները դեռ երկար ժամանակ քննարկման առարկա կլինեն քաղաքագիտական ու փորձագիտական շրջանակներում: Սակայն Արցախի դեմ ապրիլի 2-ին ձեռնարկված նախահարձակ ռազմական գործողությունները, հրադադարի նոր պայմանագրի կնքման և հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Բաքվի նկրտումները վկայում են, որ 22 տարի անց չի փոխվել հրադադարի հաստատման և հակառակորդին խաղաղություն պարտադրելու նախապայմանը: Հետևաբար, ԼՂՀ պաշտպանու-

[1] Documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/105/59/PDF/N1610559.pdf?OpenElement

թյան բանակը՝ որպես Արցախի Հանրապետության անվտանգության և տարածաշրջանային կայունության երաշխավոր, այսուհետ ևս պետք է պատրաստ լինի կատարելու իր առաքելությունը:

***Մայիս, 2016թ.***

## Աղբյուրներ և գրականություն


1. Архив МИД НКР, папка № 56; նաև http://www.nkr.am/rus/facts/bishkek.htm.
2. «Ազգ», 12.05.1994:
3. Архив МИД НКР, папка № 10, СБСЕ 1994г.; http//vn.kazimirov.ru/doc10.htm
4. Архив МИД НКР, папка № 16, документ 2.
5. *Հակոբյան Թ.,* Կանաչ ու սև, Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2011:
6. *Mooradian M.,* Yhird party mediations and missed opportunities in NagornoKarabakh: A Design for possible Solution. George Mason Universiti, Virginia, USA, 1996.
7. “Независимая Газета”, 24 май 1994г.
8. «Ազգ», 30 հունիսի 1994:
9. ԼՂՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, թղթապանակ N 109, փաստաթուղթ 47:
10. *Мурадян И.,* Противоречия политики атлантизма и проблемы региональной безопасности, Ер., 2001.
11. «Իրավունք», 3-9 փետրվարի 2006:
12. *Ступишин В.,* Моя миссия в Армении, М., 2001.
13. ԼՂՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, թղթապանակ N 109, փաստաթուղթ 48:
14. Армения, Проблемы независимого развития, М., 1998.
15. *Казимиров В.,* Мир Карабаху. Посредничесто России в урегулировании нагорно-карабахского конфликта, М., 2009.
16. *Գալստյան Խ.,* Կոսովոյի նախադեպը և ԼՂՀ միջազգային ճանաչման հեռանկարները, Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր., 2008:


## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 1994Թ. ՀՐԱԴԱՐԻ ԵՎ 2016Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

***Հրայր Փաշայան, Լիանա Բալայան***

### Ամփոփագիր

Հոդվածում Ղարաբաղյան հակամարտության շուրջ տեղի ունեցող նոր զարգացումների համատեքստում վերլուծված են 1994թ. ստորագրված Բիշքեկյան արձանագրությունն ու մայիսի 12-ի հրադադարի համաձայնագիրը: ԱՀ, ՀՀ և ԼՂՀ ներկայացուցիչների միջև կնքված եռակողմ և անժամկետ փաստաթղթերում առկա փաստարկները և Բաքվի ու Ստեփանակերտի միջև ուղղակի բանակցությունները վկա-

յում են, որ Ադրբեջանը ճանաչել էր ԼՂՀ դե-ֆակտո անկախությունը: Արցախի դեմ ապրիլի 2-ին ձեռնարկված նախահարձակ ռազմական գործողությունները, հրադադարի նոր պայմանագրի կնքման և հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Բաքվի նկրտումները վկայում են, որ 22 տարի անց չի փոխվել հրադադարի հաստատման և հակառակորդին խաղաղություն պարտադրելու նախապայմանը:

## КАРАБАХСКИИ КОНФЛИКТ В КОНТЕКСТЕ ПЕРЕМИРИЯ 1994Г. И АПРЕЛЬСКОЙ ВОЙНЫ 2016Г.

*Грайр Пашаян, Лиана Балаян*

Резюме

В статье в контексте нового развития Карабахского конфликта анализируются подписанные в 1994г. Бишкекский протокол и соглашение о перемирии от 12 мая. Подписанные после прямых переговоров между Баку и Степанакертом представителями АР, РА и НКР трехстороннее и бессрочные документы свидетельствуют о том, что Азербайджан де-факто признал независимость НКР. Агрессивные военные действия, предпринятые против Арцаха 2 апреля, усилия Баку подписать новое соглашение о прекращении огня и разрешить конфликт военными средствами показывают, что за последние 22 года ничего не изменилось, и враг должен быть принужден к миру.

## KARABAKH CONFLICT IN THE CONTEXT OF THE 1994 CEASEFIRE AND THE WAR OF APRIL 2016

*Hrayr Pashayan, Liana Balayan*

Resume

The Bishkek protocol signed in 1994 and the ceasefire agreement of May 12 are analyzed in the article in the context of current developments of Karabakh conflict. The existing arguments in the trilateral and perpetual agreements signed by the representatives of RoA, AR and NKR and the direct talks between Baku and Stepanakert indicate that Azerbaijan recognized the de facto independence of Nagorno Karabakh Republic. Aggressive military action taken against Artsakh on April 2, Baku's effort to sign a new ceasefire agreement and ambitions to resolve the conflict through military action show that nothing has changed in 22 years and peace must be enforced on the adversary.

# ԻՐԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՆԸ

***Վահագն Աֆյան****

*Բանալի բառեր՝* Վրաստան, Իրան, երկկողմ շփումներ, ժամանակագրություն, առևտրաշրջանառություն, տրանսպորտ, էներգետիկա, բնական գազ, տարանցում, եռակողմ ձևաչափ, օգտակար հնարավորություններ։

## *Ներածություն*

2012թ. հոկտեմբերի 1-ին Վրաստանի խորհրդարանական ընտրությունների ժամանակ աննախադեպ և շրջադարձային հաղթանակ տարավ «Վրացական երազանք» դաշինքը՝ միլիարդատեր, հետագայում նաև կարճ ժամանակ երկրի վարչապետ դարձած Բիձինա Իվանիշվիլու գլխավորությամբ։ Փաստացի՝ այդ իրադարձությամբ նոր ձևավորված քաղաքական դաշինքը երկրի իշխանական համակարգից դուրս մղեց 2003թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի ղեկավարումը ստանձնած Միացյալ ազգային շարժում կուսակցությանն ու նրա առաջնորդին՝ երկրի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն։ Այնուհետև վարչապետ Իվանիշվիլու և նախագահ Սաակաշվիլու միջև ծավալված սուր պայքարն ավարտվեց 2013թ. հոկտեմբերի 27-ի նախագահական ընտրություններով, որտեղ հաղթանակ տարավ Իվանիշվիլու ներկայացրած թեկնածուն՝ կրթության և գիտության նախկին նախարար Գիորգի Մարգվելաշվիլին։ Իվանիշվիլին իր փոխարեն առաջադրեց ՆԳ նախկին նախարար Իրակլի Ղարիբաշվիլուն։ Նախագահի և վարչապետի միջև որոշակի առումով հակասություններ առաջացան նաև այս անգամ՝ հիմնականում պայմանավորված երկրի ղեկավարման նախագահական համակարգից խորհրդարանականին անցում կատարելու հանգամանքներով։ 2015թ. դեկտեմբերի 29-ին Վրաստանի վարչապետի պատասխանատու պաշտոնը ստանձնեց էկոնոմիկայի և կայուն զարգացման նախկին նախարար, ապա ԱԳ նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, որն առավել համերաշխ գործակցության դրսևորումներ է ցուցաբերում նախագահ Մարգվելաշվիլու հետ։ Այդուհանդերձ, Վրաստանի արտաքին քաղաքական կուրսը հիմնավորապես որևէ փոփոխություն չկրեց, չնայած ռուսական կողմի հետ հարաբերությունների,

* ՀՀ նախագահի աշխատակազմի արտաքին կապերի վարչության խորհրդատու, բ.գ.թ.։

մասնավորապես՝ տնտեսական բաղադրիչի բարելավմանն ուղղված քայլերին: Տվյալ բնագավառի ամենանշանակալից իրադարձությունը 2014թ. հունիսի 27-ին ԵՄ-ի հետ Վրաստանի Ասոցացման պայմանագրի ստորագրումն էր, որն ամբողջապես ուժի մեջ մտավ 2015թ. դեկտեմբերի 24-ին՝ ԵՄ 28 երկրների կողմից վավերացման գործընթացի ավարտից հետո:

2013թ. հունիսի 14-ին Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ երկրի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի նախկին քարտուղար (1989-2005թթ.) Հասան Ռոհանին: Մինչ այդ՝ 2005-ից ի վեր, երկրի նախագահն էր Մահմուդ Ահմադինեժադը, որը մասնավորապես իր նախագահության երկրորդ շրջանում մի շարք հակասությունների մեջ հայտնվեց հոգևոր իշխանության հետ: Բացի այդ, Ահմադինեժադի օրոք Իրան-Արևմուտք հարաբերությունների ամենաթեժ թեման դարձավ Իրանի միջուկային ծրագիրը, և արդյունքում Իրանի նկատմամբ սահմանվեցին միջազգային տնտեսական պատժամիջոցներ: Ի տարբերություն խիստ պահպանողական, սակայն ոչ հոգևորական Ահմադինեժադի, չափավոր բարեփոխիչ և բարձրաստիճան հոգևորական Ռոհանիի նախագահության օրոք 2015թ. ապրիլի 2-ին Լոզանում, իսկ այնուհետև՝ հուլիսի 14-ին, Վիեննայում Իրանի ու «վեցյակի» միջև («E3/EU+3»՝ ԱՄՆ, ՌԴ, Չինաստան և Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, կամ «5+1»՝ ՄԱԿ ԱԽ 5 մշտական անդամները և Գերմանիան) երկարատև բանակցություններն ավարտվեցին շրջանակային և համապարփակ համաձայնագրի կնքմամբ, որի տրամաբանական շարունակությամբ և Համատեղ գործողությունների համապարփակ պլանով 2016թ. հունվարի 16-ին չեղարկվեցին Իրանի նկատմամբ սահմանված ՄԱԿ ԱԽ[1], ԵՄ և ԱՄՆ որոշ պատժամիջոցներ: ԵՄ-ը միաժամանակ հիշեցրել է, որ կշարունակի Իրանի դեմ սահմանել պատժամիջոցներ՝ կապված երկրում մարդու իրավունքների խախտումների հետ, ինչպես նաև սահմանափակիչ այլ միջոցներ՝ կապված միջուկային ծրագրի հետ: Իսկ ԱՄՆ-ը շարունակում է պատժամիջոցներ սահմանել մի շարք անձանց ու կազմակերպությունների հանդեպ, որոնք կապված են Իրանում բալիստիկ հրթիռների մշակման ծրագրի հետ: Իրանի նկատմամբ շարունակում են գործել մի շարք սահմանափակումներ, որոնք նախատեսված են 2015թ. հուլիսին ընդունված ՄԱԿ ԱԽ N2231 բանաձևով[2]:

[1] ՄԱԿ ԱԽ պատժամիջոցներ. N1696-2006թ., N1737-2007թ., N1747-2007թ., N1803-2008թ., N1835-2008թ., N1929-2010թ., N2224-2015թ.

[2] Resolution 2231 adopted by the Security Council at its 7488th meeting, on 20 July 2015, http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/2231(2015)

## *Իրան-Վրաստան երկկողմ հարաբերությունները*

Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել 1992թ. մայիսի 15-ին: 1993 և 1994 թվականներից ի վեր համապատասխանաբար Թբիլիսիում և Թեհրանում սկսել են գործունեություն ծավալել ԻԻՀ և Վրաստանի դեսպանությունները: Իրանն ու Վրաստանը մշտապես ունեցել են փոխշահավետ կապեր, մասնավորապես՝ քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում: Այդ կապերը պատմական են և խոր մշակութային արմատներ ունեն:

Ըստ Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի տվյալների՝ 2015թ. Իրանի և Վրաստանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է $127.6 մլն, ընդ որում՝ Վրաստանից Իրան արտահանումը կազմել է $35.7 մլն, Իրանից Վրաստան ներմուծումը՝ $91.9 մլն: 2014թ. առևտրաշրջանառությունը կազմել է $150.8 մլն, Վրաստանից Իրան արտահանումը կազմել է $28.2 մլն, Իրանից Վրաստան ներմուծումը՝ $122.6 մլն, 2013թ.՝ $176.6 մլն (ամենաբարձր ցուցանիշը), Վրաստանից Իրան արտահանումը կազմել է $46.9 մլն, Իրանից Վրաստան ներմուծումը՝ $129.7 մլն, 2012թ.՝ $118.8 մլն, Վրաստանից Իրան արտահանումը՝ $18.5 մլն, Իրանից Վրաստան ներմուծումը՝ $100.3 մլն, 2011թ.՝ $81 մլն, Վրաստանից Իրան արտահանումը՝ $16.2 մլն, Իրանից Վրաստան ներմուծումը՝ $64.8 մլն, 2010թ.՝ $70 մլն, Վրաստանից Իրան արտահանումը՝ $14.9 մլն, Իրանից Վրաստան ներմուծումը՝ $55 մլն: Նախքան այդ առևտրաշրջանառությունն ընդհանուր առմամբ չի գերազանցել $50 միլիոնը:

Իրանի և Վրաստանի առևտրատնտեսական հարաբերությունները նկատելիորեն ընդլայնվեցին 2010-2013թթ.[1], որի ընթացքում մի քանի անգամ ավելացավ իրանցի զբոսաշրջիկների թիվը, ինչն էլ ներդրումային ծրագրերի խթան հանդիսացավ: Սակայն ԱՄՆ ճնշումներն ու Թբիլիսիի հնազանդությունը հանգեցրին նրան, որպեսզի Վրաստանը վերանայի իր հարաբերությունները: Արդյունքում՝ Վրաստանը փոփոխեց պատժամիջոցների մեջ գտնվող այդ երկրի հետ հարաբերությունները՝ առավել կարևորելով դեպի ԵՄ և ՆԱՏՕ իր ուղղվածությունը: Սակայն թե՛ իրանական, թե՛ վրացական կողմի պաշտոնատարները գիտակցում են, թերևս, երկու երկրների հարաբերությունների ոչ միակողմանի և փոխշահավետ կարևորության իրողությունը: Դրա վառ վկայություններից են վերջին շրջանում կրկին համեմատաբար ակտիվացած շփումներն ու առանց մուտքի արտոնագրային ռեժիմի անցնելու որոշումը:

2016թ. փետրվարի 8-ին վրացական կողմի նախաձեռնությամբ հեռախոսազրույց կայացավ Վրաստանի վարչապետի և Իրանի նախագահի միջև, որի

[1] *Alexander Rondeli,* "Iran and Georgia–relations could be closer", Georgian Foundation for Strategic and International Studies, 2014, http://gfsis.org/media/download/library/articles/rondeli/18-rondeli_ENG.pdf

ընթացքում Ռոհանին անդրադարձավ նաև երկու երկրների միջև վիզային ռեժիմի վերացման հարցին[1]: Հաջորդ օրը Վրաստանի ԱԳ նախարարի տեղակալ Դավիթ Ջալաղանիան տեղեկացրեց Իրանի հետ վիզային ռեժիմի վերացման մասին[2]: Արդյունքում՝ 2016թ. փետրվարի 15-ից Վրաստանը կրկին Իրանի հետ սահմանեց ոչ վիզային ռեժիմ, որը միակողմանիորեն դադարեցվել էր 2013թ. հուլիսի 1-ին[3]: Միջազգային պատժամիջոցներից Իրանի շրջանցման պատճառաբանությամբ դադարեցվեց նաև վրաստանաբնակ իրանցիների մոտ 150 բանկային հաշիվ[4]: Երկու երկրների միջև մուտքի արտոնագրային ռեժիմի վերացման մասին առաջին անգամ պայմանավորվածությունը ձեռք էր բերվել 2010թ. նոյեմբերի 3-ին ԻԻՀ ԱԳ նախկին նախարար Մանուչեհր Մոթաքիի Վրաստան կատարած այցի շրջանակներում ստորագրված համաձայնագրով, որի ընթացքում պաշտոնապես բացվեց նաև Բաթումում ԻԻՀ գլխավոր հյուպատոսությունը[5]:

ԻԻՀ քաղաքացիների համար վիզային ռեժիմի վերացումից հետո *«TAV-Georgia»* օպերատոր ընկերությունը (թուրքական *«TAVAirportsHolding»* ընկերության դուստր ընկերություն, տնօրինում է Թբիլիսիի և Բաթումի միջազգային օդանավակայանները) հայտարարել է, որ ակտիվ բանակցություններ է վարում իրանական երեք խոշոր ավիաընկերությունների՝ *«MahanAir»*-ի, *«ATAAirlines»*-ի և *«QeshmAir»*-ի հետ դեպի Վրաստան թռիչքներ սկսելու վերաբերյալ[6]:

Հատկանշական է, որ 2013թ. օգոստոսի 4-ին ԻԻՀ նախագահի երդմնակալության արարողությանը մասնակցելու նպատակով Թեհրանում է գտնվել Վրաստանի սփյուռքի նախկին նախարար Կոնստանտին Սուրգուլաձեի գլխավորած պատվիրակությունը: Իսկ 2013թ. նոյեմբերի 17-ին Վրաստանի նախագահի երդմնակալության արարողությանը Թբիլիսիում ներկա է գտնվել ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Էբրահիմ Ռահիմփուրը: Նա Վրաստանում է գտնվել նաև 2014թ. մարտի 4-8-ը, երբ երկու երկրների ԱԳՆ-ների միջև կայացել են քաղաքական խորհրդակցություններ:

2014թ. ապրիլի 22-ին ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին Վրաստանի նորանշանակ դեսպանի հետ հանդիպմանն անդրադառնալով Կովկասի տարածաշրջանի նկատմամբ Իրանի ժողովրդի հետաքրքրությանը՝ նշել է. «Իրանի համար շատ կարևոր է Սև ծովի նավահանգիստներին, այդ թվում՝ Փոթիի նավա-

[1] President in a telephone conversation with Georgian PM, http://www.president.ir/en/91868
[2] Georgia to Reintroduce Visa-Free Rules with Iran from Feb.15, http://www.civil.ge/eng/article.php?id=28971
[3] Georgia Revokes Visa-Free Rules with Iran, http://www.civil.ge/eng/article.php?id=26235
[4] Justice Minister: Georgia Enforces Iran Sanctions Strictly, http://www.civil.ge/eng/article.php?id=26200
[5] Iranian FM on 'Historic' Visit to Georgia, http://www.civil.ge/eng/article.php?id=22812
[6] Վրաստանի ներքաղաքական իրավիճակի տեսություն (2016թ. փետրվար), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14518

հանգստին միանալը: Մենք նպատակադրված ենք մեր երկաթգիծն Ադրբեջանի տարածքով միացնել Վրաստանին»[1]:

Երկու երկրների միջև շփումների համեմատաբար տնական դադարից հետո բավական նշանակալից էին 2014թ. սեպտեմբերի 4-ին Վրաստանի խորհրդարանի արտաքին կապերի հանձնաժողովի նախագահ Թեդո Ջափարիձեի՝ իրանական կողմի հետ ունեցած հանդիպումները: Այդ այցի ընթացքում ԻԻՀ մեջլիսի նախագահ Ալի Լարիջանին հայտնել է, որ երկու երկրների համագործակցության ընդլայնման ուղղությամբ Իրանում և Վրաստանում պատշաճ նախադրյալներ կան, մասնավորապես՝ էներգետիկայի և արդյունաբերության բնագավառներում, որոնցում մասնավոր հատվածի ակտիվացմամբ կարելի է նոր էջ բացել երկկողմ առևտրատնտեսական հարաբերություններում[2]: Այցի արդյունքների վերաբերյալ Ջափարիձեն այնուհետև նշել է, որ այն բավական բարդ էր, քանի որ իրանական կողմը բարձրացրել է մի շարք հարցեր[3]:

Վերոնշյալ (կարելի է նաև անվանել բեկումնային) այցից հետո, 2015թ. հունվարի 25-26-ը Թեհրանում է գտնվել Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուպաշվիլու գլխավորած պատվիրակությունը: Հանդիպումներ են կայացել ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի, մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի և Համակարգի նպատակահարմարությունը որոշող խորհրդի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի հետ: Քննարկվել են էներգետիկայի և տրանսպորտի, ինչպես նաև ջրային ռեսուրսների համատեղ օգտագործման բնագավառներում համագործակցության հարցեր: Իրանական կողմն անդրադարձել է վիզայի վերացման անհրաժեշտությանը[4]:

2015թ. մայիսի 6-ին Իրան-Վրաստան առևտրատնտեսական խորհրդի նախագահ Սեյեդ Ֆաթեմե Մողիմին հայտնել է, որ դեպի Վրաստան արտահանվող իրանական հիմնական ապրանքները շինանյութերն են, այդ թվում՝ ցեմենտ, գաջ, բիտում և ապակի, իսկ Վրաստանից Իրան ներկրումների ապրանքային խմբերում ներառված է հիմնականում գյուղմթերքը: Առևտրատնտեսական խորհրդի նախագահը Իրան-Վրաստան առևտրային կապերի մասին ավելացրել է, որ իրանական կողմի համար դեպի ԵՄ տանող ուղիներից մեկը կարող է հանդիսանալ Վրաստանը, մասնավորապես՝ Փոթիի նավահանգիստը: «Այդ հասանելիությունը կարող է մեր առևտրային կապերի համար նպաստավոր պայմաններ ստեղծել, քանի որ տվյալ ուղղության փոփոխությունը կհանգեցնի նրան, որպես-

[1] President in a meeting with new Georgian Ambassador, http://www.president.ir/en/76840

[2] Грузия и Иран обсудили сотрудничество, http://www.apsny.ge/2014/eco/1409886397.php

[3] У нас был очень сложный визит в Иран, http://www.interpressnews.ge/ru/politickru/63196-2014-09-09-06-14-17.html?ar=A

[4] Глава Парламента Грузии проводит встречи в Иране, http://www.civil.ge/rus/article.php?id=26822

զի դեպի Եվրոպա գնալու համար չօգտվենք միայն Թուրքիայի մեկ ուղուց: Այդ տեսանկյունից էլ Վրաստանը կարող է նոր հենարան դառնալ Իրանի տնտեսության համար»,- ասել է Ֆաթեմե Մողիմին[1]:

2015թ. մայիսի 18-20-ը Վրաստանի նախկին փոխվարչապետ, էկոնոմիկայի և կայուն զարգացման նախկին նախարար, ներկայում երկրի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին այցով գտնվում էր Թեհրանում: Հատկանշական է, որ ավելի քան 10 տարի դադարից հետո երկու երկրների միջև կայացել է տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստը[2]: Միջկառավարական հանձնաժողովի վրացական կողմի համանախագահ Կվիրիկաշվիլին հանդիպումներ է ունեցել ԻԻՀ նախագահի առաջին տեղակալ Էսհաղ Ջահանգիրիի, ԱԳ նախարար Մոհամադ Ջավադ Զարիֆի, ինչպես նաև քննարկումներ են ծավալվել Իրանի նավթի, էներգետիկայի ու կոոպերացիաների, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարարությունների ղեկավար կազմի հետ: Այցի ընթացքում Թեհրանում է գտնվել նաև Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան[3]:

Իրան-Վրաստան միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստի ժամանակ ԻԻՀ կոոպերացիաների, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարարի միջազգային հարցերով տեղակալը, նշելով, որ երկու երկրները տարանցման և էներգետիկայի համագործակցության բնագավառներում փոխլրացնող կողմեր են հանդիսանում միմյանց համար, ասել է, որ իրանական ընկերությունները նպաստավոր պայմաններ ունեն հէկերի և ջրամբարների կառուցման համար: Միջկառավարական նիստի բացման խոսքում փոխնախարարն ավելացրել է, որ Վրաստանում նավթազտարանի և նավահանգստային ենթակառուցվածքների կառուցումն իրանական կողմի միջոցով ևս այն ուղղություններից է, որ պետք է գրավի վրացական կողմի պաշտոնատարների ուշադրությունը: Ըստ նախարարի տեղակալի՝ արտոնյալ կամ առանց սակագների առևտուրը նպաստավոր մթնոլորտ կստեղծի երկու երկրների համագործակցության համար: Հանձնաժողովի աշխատանքներն ընթացել են համագործակցության երեք՝ էներգետիկայի, հաղորդակցության և առևտրի; բանկային և ներդրումային; գիտության, մշակույթի և սոցիալական բարեկեցության ենթահանձնաժողովներում: Իրանական կողմից միջկառավարական հանձնաժողովի համանախագահն է ԻԻՀ կոոպերացիաների, աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարար Ալի Ռաբիին[4]:

[1] *Մոհեմթարին թարադոլաթե Իրան վա Գորջեսթան* (Իրանի և Վրաստանի ամենանշանակալից փոխանակումները, պարսկ.), http://isna.ir/fa/news/

[2] Грузия и Иран подписали меморандум о взаимопонимании, http://novost.ge/

[3] Тбилиси и Тегеран станут городами-побратимами, http://www.apsny.ge/2015/pol/1431980033.php

[4] *Հաջմե ռավաբեթե թեջարի բեյնե Իրան վա Գորջեսթան աֆզայեշ միյաբադ* (Ավելանում է Իրանի և Վրաստանի առևտրային հարաբերությունների ծավալը, պարսկ.) http://www.irna.ir/fa/News/81612156/

2015թ. հուլիսի 29-ին Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ, Վրաստան-Իրան խորհրդարանական բարեկամության խմբի նախագահ Գուբազ Սանիկիձեն Թբիլիսիում ընդունել է իրանական խորհրդարանական պատվիրակությանը: Քննարկվել են վրացական նավահանգիստներով էներգակիրների փոխանակման, ինչպես նաև իրանական կողմին հետաքրքրող՝ Վրաստանից ոռոգման ջրի մատակարարման հարցեր[1]: Պարսից ծոց-Սև ծով միջանցքի ստեղծման, ինչպես նաև վերը նշված քննարկումներ են ծավալվել 2015թ. օգոստոսի 8-9-ը Գուբազ Սանիկիձեի Թեհրան կատարած աշխատանքային այցի ընթացքում[2]: Իսկ 2015թ. սեպտեմբերի 3-ին Նյու Յորքում կայացել է երկու երկրների օրենսդիր մարմինների ղեկավարների՝ Լարիջանիի և Ուսուպաշվիլու հերթական հանդիպումը, որի ընթացքում իրանական կողմը կրկին անդրադարձել է ջրային ռեսուրսների համատեղ օգտագործման հեռանկարին[3]:

2015թ. սեպտեմբերի 13-ին Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին Թբիլիսիում իրանական «Ղադիր» ներդրումային ընկերության պատվիրակության հետ հանդիպմանը ներկայացրել է Վրաստանի հարկային և մաքսային օրենսդրությունն ու ներդրումային դաշտը և հույս հայտնել, որ իրանական ներդրումային ընկերությունը կմասնակցի Վրաստանի համապատասխան ծրագրերին[4]:

Հավելենք նաև, որ այդ ընթացքում Վրաստանի բնական գազի կարիքներն ապահովելու համար երկրի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախա Կալաձեի՝ ռուսական «Գազպրոմի», ադրբեջանական *SOCAR*-ի և իրանական կողմի հետ բանակցություններին անդրադարձավ Վրաստանի նախկին վարչապետ, միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին և իր աջակցությունը հայտնեց գազի մատակարարումների դիվերսֆիկացման գաղափարին, այդ թվում նաև «Գազպրոմի» հետ բանակցություններին: Նա 2015թ. հոկտեմբերի 27-ին, մասնավորապես, հայտարարեց. «Մենք, այդ թվում նաև ես, ձգտում ենք ակտիվ լինել այն հարցում, որպեսզի Վրաստանը ստանա իրանական գազ»[5]: Կալաձեն 2015թ.

[1] The meeting of Gubaz Sanikidze and Shalva Kiknavelidze with MPs of Iranian Parliament, http://www.parliament.ge/en/media/axali-ambebi/parlamentis-tavmdjdomaris-moadgilis-gubaz-sanikidzis-da-diasporisa-da-kavkasiis-sakitxta-komitetis-tavmdjdomaris-pirveli-moadgilis-shalva-kiknavelidzis-shexvedra-iranis-islamuri-respublikis-medjlisis-wevrebtan.page

[2] The meeting with the Speaker of Parliament of Iran, Ali Larijani, http://parliament.ge/en/media/axali-ambebi/saqartvelos-saparlamento-delegacia-iranis-islamuri-respublikis-medjlisis-parlamentis-tavmdjdomares-ali-laridjans-shexvda.page

[3] Iran Keen to Promote Parliamentary Ties with Georgia: Larijani, http://www.tasnimnews.com/en/news/2015/09/03/848512/iran-keen-to-promote-parliamentary-ties-with-georgia-larijani

[4] Georgia Keen on Promoting Economic Cooperation with Iran, http://cbw.ge/business/georgia-keen-on-promoting-economic-cooperation-with-iran/

[5] Иванишвили призвал закупать газ у России и Ирана, http://vz.ru/news/2015/10/27/774706.html

նոյեմբերի 28-ին հայտարարեց, որ վրացական կողմն Իրանը դիտարկում է որպես գազի հնարավոր մատակարար, և որ նպատակ կա բանակցել նաև իրանական կողմի հետ[1]:

Նոյեմբերի վերջին Իրանի նավթի նախարար Բիժան Զանգանեն հայտարարեց, որ Իրանն արդեն Ռուսաստանի հետ քննարկում է նավթով ու գազով փոխանակում իրականացնելու համաձայնագրի դետալները, որի մասին 2015թ. դեկտեմբերի 8-ին հաստատեց նաև «Գազպրոմի» հանրային բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Ալեքսեյ Միլլերը: Պատասխանելով այն հարցին, թե արդյոք վրացական կողմի հետ բանակցություններում քննարկվել է Իրանից Հայաստան գազի մատակարարման թեման, Միլլերը նշեց. «Այո՛, թեման շոշափվել է, ներկայում մենք մեր իրանցի գործընկերների հետ մշակում ենք փոխանակման գործողությունների հարցեր»[2]:

2015թ. դեկտեմբերի 10-ին Կալաձեն հայտարարեց, որ «Գազպրոմի» ներկայացուցիչներն ակնարկել են, որ հնարավորություն ունեն Հայաստանին գազ մատակարարել Իրանի միջոցով, ինչը Վրաստանի համար չափազանց անշահավետ է: Միաժամանակ նշելով, որ Վրաստանն Իրանը դիտարկում է որպես հնարավոր գազամատակարար, նա ասաց. «Իրանը շատ հետաքրքիր շուկա է: Մենք արդեն սկսել ենք աշխատել այդ ուղղությամբ»[3]:

Այդուհանդերձ, բավական ուշագրավ էր, որ 2015թ. դեկտեմբերի 23-ին Երևանում Հայաստանի, Իրանի, Վրաստանի և Ռուսաստանի ներկայացուցիչները պայմանավորվեցին էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգի և չորս երկրների միջև էլեկտրաէներգիայի առևտրի զարգացմանն աջակցելու համատեղ աշխատանքի շուրջ: Հանդիպման արդյունքում կողմերը ստորագրեցին հուշագիր «Էներգետիկ ոլորտում համագործակցության մասին», որը վերաբերում է տեխնիկական և օրենսդրական շրջանակների ուսումնասիրմանը չորս երկրներում էլեկտրաէներգիայի փոխանցման համակարգերի սինքրոն աշխատանքի համար: Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախա Կալաձեի խոսքով՝ բացի էներգափոխանակումից ակնկալվող օգուտներից, Վրաստանը նաև հնարավորություն կստանա ձմռանն էլեկտրաէներգիա ներմուծել Իրանից, երբ էլեկտրաէներգիայի մեծ սպառման պատճառով երկրում դրա դեֆիցիտ է ձևավորվում[4]:

[1] Грузия и "Газпром" ведут переговоры об увеличении поставок газа, http://ria.ru/economy/20151028/1309622400.html
[2] "Газпром" прорабатывает с Ираном вопросы обменных операций по газу, http://ria.ru/economy/20151208/1338599881.html
[3] Грузия и "Газпром" не достигли окончательного решения по транзиту газа, http://sputnik-georgia.ru/economy/20151210/229428880.html
[4] Վրաստանի իրավիճակի տեսություն. արտաքին քաղաքականություն (2015թ. դեկտեմբեր), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14369

Անդրադառնալով իրանական գազի հնարավոր մատակարարումներին՝ պետք է հիշատակել նաև, որ Իրանի գազի արտահանման ազգային ընկերության (*NIGEC*) գործադիր տնօրեն Ալիռեզա Քամելին 2016թ. հունվարի 4-ին հայտարարեց. «Վրաստանի հետ բանակցությունների արդյունքում նախնական պայմանավորվածության համաձայն՝ մենք պետք է գազը հասցնենք Հայաստանի սահման, իսկ Վրաստանն այն կստանա Հայաստանի հետ սահմանին»[1]:

Վրաստանի էներգետիկայի փոխնախարար Իլիա Էլոշվիլին 2016թ. հունվարի 6-ին հայտարարեց. «Որպեսզի գազը հասնի Իրանից, այն պետք է անցնի Հայաստանի տարածքով և 700 միլիմետրանոց խողովակաշարով: Այդ խողովակաշարին տիրում է «Գազպրոմի» դուստր ձեռնարկությունը, և հետևաբար ենթակառուցվածքն էլ նրանն է: Եթե մենք Իրանից ստանանք գազ, ապա մենք հարկադրված կլինենք տարանցման համար վճարել «Գազպրոմին»: Վրաստանը հնարավորություն ունի գազ ստանալ Ադրբեջանից, Ռուսաստանից ու Իրանից: Բոլոր երեք երկրների հետ էլ պետք է ունենանք բաց բանակցություններ»[2]:

Ինչ վերաբերում է տրանսպորտային միջանցքի ձևավորմանը, հատկանշական է, որ 2016թ. հունվարի 12-ին Բաքվում կայացած տրանսպորտային ուղիների ստեղծմանը նվիրված քառակողմ (Իրան, Ադրբեջան, Վրաստան, Ուկրաինա) հանդիպման արդյունքներով սահմանվել է Բոմբեյի նավահանգստից Իրանի տարածքով դեպի Սև ծով բեռնափոխադրման երեք ուղի[3]: Իսկ 2016թ. հունվարի 19-21-ը Թեհրանում ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ.Բեգլարյանի բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Հնդկաստանը Իրանի, Հայաստանի, Վրաստանի տարածքով ու Սև ծովով Եվրոպային, մասնավորապես՝ Բուլղարիայի և Հունաստանի հետ կապող միջազգային տրանսպորտային ուղու ստեղծման վերաբերյալ: Ըստ ԻԻՀ ճանապարհների և քաղաքաշինության նախարար Ա.Ախունդիի՝ այն հանդիսանում է Պարսից ծոցը Սև ծովին կապող չորրորդ ուղին[4]:

Իրանի միջուկային խնդրի շուրջ ձեռք բերված պայմանավորվածությունից հետո, 2016թ. հունվարի 24-ին ուշագրավ հայտարարությամբ հանդես եկավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, ըստ որի՝ Վրաստանն այլևս չի զգուշանում Իրանի հետ հարաբերություններում և այդ կապակցությամբ լավա-

[1] Iran in talks to send gas to Georgia, http://www.presstv.ir/Detail/2016/01/04/444434/Iran-gas-export-Georgia-Armenia-Kameli/

[2] У Грузии могут возникнуть обязательства перед «Газпромом» в случае поставок газа из Ирана – замминистра, http://www.apsny.ge/2016/eco/1452132691.php

[3] АЖД предлагает создать транспортный коридор Юг-Запад-Персидский залив-Черное море, http://www.rzd-partner.ru/news/transportnaia-logistika/azhd-predlagaet-sozdat-transportnyi-koridor-iug-zapad-persidskii-zaliv-chernoe-more/

[4] Iran, Armenia ink two economic MoUs, http://www7.as.irna.ir/en/News/81929433/

տեսորեն է տրամադրված[1]: Այնուհետև, 2016թ. փետրվարի 8-ին տեղի ունեցավ վերոնշյալ հեռախոսազրույցը ԻԻՀ նախագահի հետ, որի ընթացքում Ռոհանին, մասնավորապես, նշել է, որ Վրաստանը կարող է դեպի Սև ծով իրանական բեռնափոխադրումների միջանցք դառնալ: Վարչապետ Կվիրիկաշվիլին, իր հերթին, համոզմունք է հայտնել հարաբերությունների նոր մակնարկի և Իրանի հետ բոլոր բնագավառներում, հատկապես տնտեսական կապերի զարգացման պատրաստակամության մասին: Նա միաժամանակ նշել է Իրան կատարելիք այցի մասին և պաշտոնական այցով Թբիլիսի հրավիրել Ռոհանիին[2]:

2016թ. փետրվարի 10-ին Վրաստանում ԻԻՀ դեսպան Աբաս Թալեբիֆարը հայտարարեց. «Ներկա փուլում տարվում են նախապատրաստական տեխնիկական աշխատանքներ, դիտարկվում են մի շարք երթուղիներ, թե որտեղից Վրաստանը կարող է գազ ստանալ Իրանից: Տարբերակներից մեկն Ադրբեջանով տարանցումն է, որը պատրաստակամություն է հայտնում մեր գազն իր տարածքով հասցնել Վրաստան: Հայաստանը նույնպես այդպիսի պատրաստակամություն է հայտնում, որպեսզի օգտագործվեն գոյություն ունեցող հնարավորությունները: Բացի դրանից՝ կա հավելյալ տարբերակը, դիտարկվում է փոխանակման սկզբունքով գազի փոխադրման հարցը»[3]:

Նշենք նաև, որ Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում 2016թ. փետրվարի 12-ին կայացավ ԻԻՀ ԱԳ նախարար Մոհամադ Զավադ Զարիֆի և Վրաստանի ԱԳ նորանշանակ նախարար Միխեիլ Ջանելիձեի հանդիպումը: Քննարկվել են տրանսպորտի, մասնավորապես Վրաստանի տարանցիկ հնարավորությունների, գյուղատնտեսության և զբոսաշրջության բնագավառներում համագործակցության զարգացման հեռանկարները[4]:

2016թ. փետրվարի 15-ին Վրաստանի էներգետիկայի նախարար Կալաձեն մեկնեց Իրան[5]: ԻԻՀ էներգետիկայի նախարար Համիդ Չիթչիանը Կալաձեի հետ հանդիպմանը հայտարարել է, որ Իրանը հնարավորություն ունի Հայաստանի տարածքով էլեկտրաէներգիա արտահանել Վրաստան: Իսկ նավթի նախարար Բիժան Զանգանեն հայտարարել է, որ «Վրաստանի էներգետիկայի նախարարի հետ քննարկել է Վրաստանի կարիքների համար իրանական գազն այդ երկիր

[1] Грузия больше не осторожничает в отношениях с Ираном – премьер, http://www.apsny.ge/2016/pol/1453599571.php

[2] *Alexander Rondeli,* "Iran and Georgia–relations could be closer", Georgian Foundation for Strategic and International Studies, 2014, http://gfsis.org/media/download/library/articles/rondeli/18-rondeli_ENG.pdf

[3] *Իրանի մզադ արիս, միածորդս սաքարթվելոս գազի ռոգորց շիդա մոխմարեբիսթվիս, ասեվե տրանզիտիսթվիս* (Իրանը պատրաստ է գազ մատակարարել Վրաստանին, ինչպես ներքին սպառման, այնպես էլ տարանցման համար, վրաց.), http://www.resonancedaily.com/index.php?id_rub=2&id_artc=28020

[4] Mikheil Janelidze has met the Foreign Minister of the Islamic Republic of Iran, http://www.mfa.gov.ge/News/

[5] Каха Каладзе отправился в Иран на переговоры по газу, http://www.apsny.ge/2016/eco/1455560576.php

արտահանելու հարցը»՝ չմանրամասնելով, թե տարանցիկ երկիրը որն է լինելու: Սակայն, ըստ *NIGEC* գործադիր տնօրեն Ալիռեզա Քամելիի՝ վրացական կողմը գազի արտահանման համար պետք է բանակցի Հայաստանի հետ[1]:

Այդուհանդերձ, 2016թ. մարտի 4-ին Վրաստանի էներգետիկայի նախարար Կախա Կալաձեն հայտարարեց. «Մենք հանդիպում ունեցանք, քննարկեցինք այն մասին, թե որքանով է հնարավոր իրանական գազ ստանալը: Տեսականորեն կա դրա հնարավորությունը, սակայն այսօր այլևս գոյություն չունի նման անհրաժեշտություն: Մենք համաձայնագիր ենք կնքել ռազմավարական գործընկերոջ (Ադրբեջանի) հետ, որը կապահովի Վրաստանին բնական գազի մատակարարումներով ու կբավարարի շուկան»[2]:

2016թ. մարտի 16-ին Թեհրանում կայացել է նաև Վրաստանի ԱԳ նախարարի տեղակալ Դավիթ Ջալաղանիայի հանդիպումը ԻԻՀ ԱԳ նախարարի առաջին տեղակալ Մորթեզա Սարմադիի հետ: Հանդիպմանը քննարկվել են Հյուսիս-Հարավ ինչպես տրանսպորտային, այնպես էլ էներգետիկ միջանցքի շուրջ համագործակցության հարցեր[3]:

2016թ. մարտի 25-ին ՀՀ վարչապետը հայտարարեց, որ տարվա ընթացքում Թեհրանում կայանալիք հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նիստի ժամանակ Իրանի առաջին փոխնախագահ Էսհաղ Ջահանգիրիի հետ կքննարկի նաև Վրաստան իրանական գազի տարանցման հարցը[4]:

## *Եզրակացություն*

Դատելով վերոշարադրյալից՝ Վրաստանի հետ հարաբերությունների մասով իրանական կողմի համար նախ խնդիր էր դրված վիզայի վերացման հարցը, որը, թերևս, բարձրացվել է վրացական կողմի հետ բոլոր հանդիպումների ընթացքում: Ապա իրանական կողմը սկսեց հետաքրքրվել Վրաստանի ջրային ռեսուրսներով և զուգահեռաբար դեպի վրացական նավահանգիստներ տրանսպորտային միջանցք ստեղծելու հնարավորությամբ:

Իսկ վրացական կողմին, մասնավորապես՝ Իրանի միջուկային ծրագրի շուրջ համաձայնության ձեռքբերումից հետո, այդ երկիրը սկսեց հետաքրքրել բնական գազի հնարավոր մատակարարումների մասով: Սակայն տվյալ հարցում կարելի է արձանագրել, որ այն, թերևս, նպատակ էր հետապնդում գազի

[1] Իրանը որպես տարանցիկ երկրներ դիտում է միայն Հայաստանին ու Վրաստանին, http://www.panorama.am/am/news/

[2] Грузия не будет импортировать природный газ из Ирана, http://www.apsny.ge/2016/eco/1457132653.php

[3] Iran, Georgia Weigh Post-JCPOA Cooperation, http://www.tasnimnews.com/en/news/2016/03/13/1026869/iran-georgia-weigh-post-jcpoa-cooperation

[4] http://armenpress.am/arm/news/840905/iranakan-gazi-tarancman-harcy-hh-varchapety-kqnnarki-irani.html

գնային քաղաքականության մեջ զիջումներ կորզել Ադրբեջանից:

Մյուս կողմից, եթե իրանական կողմը դեպի Վրաստան տրասնպորտային հանգույցների փոխկապակցման հարցում առաջնահերթ պայմանավորվածություն ձեռք բերեց Ադրբեջանի հետ, ապա Հայաստանը դիտարկվում է որպես էլեկտրաէներգիայի տարանցման հիմնական ուղի:

Պաշտոնական Թեհրանը մեծ կարևորություն է տալիս այն փաստին, որ Հայաստանը հանդիսանում է անջրպետ թուրքական պետությունների միջև: Այն առնվազն լուծում է իրանական պետության կայուն զարգանալու խնդիրը, իսկ հեռանկարում կարող է առնչվել նաև անվտանգության խնդիրներին:

Հայաստանի հետ Իրանի հարաբերություններն արմատապես տարբերվում են Իրան-Ադրբեջան և Իրան-Վրաստան հարաբերություններից: Հայաստանի համար Իրանը, ինչպես նաև Իրանի համար Հայաստանը կարևոր են աշխարհագրական դիրքով, մասնավորապես՝ ճանապարհահաղորդակցային հնարավորությունների առումով: Պաշտոնական Թեհրանը չի ցանկանում իրանական ապրանքները դեպի եվրոպական շուկա արտահանել միմիայն ավանդական մրցակից համարվող Թուրքիայի միջոցով: Չնայած վերջին շրջանում ակտիվորեն քննարկվում են ադրբեջանական ուղու հնարավորությունները, մասնավորապես՝ Ռուսաստանի (Ղազվին-Ռաշտ-Աստարա) և Վրաստանի (Բաքու-Թբիլիսի-Կարս) հետ երկաթուղային կապի գործարկման տեսանկյունից, այդուհանդերձ, համապատասխան ենթակառուցվածքների առկայության պարագայում Հայաստանը կարող է վերածվել վստահելի և ամենակարճ տարանցիկ երկրի՝ Իրան-Սև ծով ճանապարհին: Հյուսիս-Հարավ տրանսպորտային ուղին՝ Իրանից Հայաստանի տարածքով Վրաստան մայրուղու կառուցումը, ռազմավարական նշանակություն ունի Երևանի համար, որի միջոցով կապ է հաստատվում Պարսից ծոցի և Սև ծովի նավահանգիստների միջև:

Էլեկտրաէներգիայի արտահանման և տարանցման համար ևս Հայաստանն ունի նպաստավոր պայմաններ: 2018թ. ակնկալվում է ավարտին հասցնել դեպի Վրաստան և Իրան նոր էլեկտրահաղորդման համակարգի շինարարությունը: Վրաստանի հետ կառուցվող էլեկտրագծով Հայաստանը կմիանա նաև ռուսական համակարգին՝ դառնալով էներգետիկ շղթայի մի մասը: Դրանով շահագրգռված է նաև Իրանը՝ Հյուսիս-Հարավ տվյալ միջանցքը նույնպես օգտագործելու համար:

Ինչպես հայտնի է, Իրանն ունի նավթի և գազի հսկայական պաշարներ. տարբեր հաշվարկներով այդ երկրին բաժին է ընկնում գազի համաշխարհային պաշարների 16-18%-ը: Իրանցի պաշտոնյաները բազմիցս հայտարարել են, որ Իրանը կարող է երկարաժամկետ կտրվածքով գազ արտահանել Եվրոպա, և հուսալի գործընկեր կարող է լինել եվրոպացիների համար: Չնայած Իրանի և

Թուրքիայի միջև Սիրիայի հարցում գոյություն ունեցող հակասություններին՝ իրանական գազը Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա տեղափոխելը ամենահավանական տարբերակն է:

Իրանական գազի Եվրոպա տեղափոխման տարբերակներից է նաև «Հարավային գազային միջանցքին» Իրանի միանալը: Տեսականորեն հնարավոր է նաև, որ իրանական գազը Եվրոպա փոխադրվի երրորդ երթուղով՝ «Նաբուկկո» գազամուղի միջոցով, որը, սակայն, դեռևս անավարտ նախագիծ է: Իրանական գազը Եվրոպա փոխադրելու հաջորդ տարբերակը Իրան-Հայաստան-Վրաստան գազամուղի կառուցումն է, որը Սև ծովի հատակով իրանական գազը կարող է հասցնել Եվրոպա:

Հայաստանի համար բավական հեռանկարային է նաև համագործակցությունն Իրանի հետ նավթաքիմիական ոլորտում: Երկու երկրների կառավարությունները դիտարկում են Հայաստանում նավթի վերամշակման գործարան կառուցելու հարցը, և այդ ոլորտում համագործակցության խորացումը չի բացառվում, որը Հայաստանը նույնպես կարող է վերածել տարանցիկ երկրի:

Այստեղ է, որ Երևանը պետք է առաջ քաշի Իրան-Հայաստան-Վրաստան տարածաշրջանային ծրագրերի առաջարկներ: Հայաստանը պահպանում է իր կարևորությունը Վրաստանի և Իրանի համար: Հայաստանը և Վրաստանը կարող են որոշակիորեն պահպանել հավասարակշռությունը ԵՄ-ի և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև վերածվել իրանական էներգակիրներն ու ապրանքները եվրոպական տարբեր երկրներ առաքող պետությունների:

Անդրադառնալով առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարին՝ նպատակահարմար է, որ իրանական կողմը Հայաստանի տարածքում առևտրի կենտրոն հիմնի, որի նպատակը կլինի իրանական ապրանքների, հատկապես փաթեթավորված գյուղմթերքի արտահանում իրականացնել դեպի Վրաստան և Ռուսաստան:

Ուշագրավ է, որ հանրային մակարդակով ևս ընթացող փոխճանաչելիությունն իրականացվում է Հայաստանի միջոցով: Հայկական տուրօպերատորները շարունակում են առաջարկել Հայաստան և Վրաստան համատեղ զբոսաշրջային ուղիներ իրանցի զբոսաշրջիկների համար: Սակայն անհրաժեշտություն է առաջանում համակարգված աշխատանք տանել համատեղ և կանոնավոր զբոսաշրջային փաթեթների ներկայացման համար:

*Ապրիլ, 2016թ.*

# ԻՐԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՆԸ

*Վահագն Աֆյան*

Ամփոփագիր

Վրաստանի և Իրանի ներքին և արտաքին քաղաքական զարգացումներում տեղի են ունեցել մի քանի իրադարձություններ, որոնք ներկայացված են հոդվածում: Այս երկու պետությունների միջև հարաբերությունների նոր զարգացումները մատուցվում են ժամանակագրական կարգով: Հայաստանը պահպանում է իր կարևորությունը Վրաստանի և Իրանի համար. այս առումով Երևանը պետք է առաջ քաշի Իրան-Հայաստան-Վրաստան տարածաշրջանային ծրագրերի առաջարկներ: Հայաստանը և Վրաստանը կարող են որոշակիորեն պահպանել հավասարակշռությունը ԵՄ-ի և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև վերածվել իրանական էներգակիրներն ու ապրանքները եվրոպական տարբեր երկրներ առաքող պետությունների:

# ВЗАИМООТНОШЕНИЯ ИРАН-ГРУЗИЯ И ФАКТОР АРМЕНИИ

*Ваагн Афян*

Резюме

Во внутри- и внешнеполитической жизни Грузии и Ирана произошло несколько событий, анализируемых в статье. Новые вехи во взаимоотношениях этих двух стран представлены в хронологическом порядке. Армения сохраняет свою важность для Ирана и Грузии, и в этом контексте Ереван должен выдвигать предложения по осуществлению региональных проектов Иран-Армения-Грузия. Армения и Грузия могут в определенном смысле сохранять баланс во взаимоотношениях ЕС-ЕЭС, а также стать странами-поставщиками иранских энергоносителей и товаров в разные страны.

# THE RELATIONS BETWEEN IRAN AND GEORGIA AND THE FACTOR OF ARMENIA

*Vahagn Afyan*

Resume

Recently, a number of notable events have occurred in internal and external political developments of Georgia and Iran, which are presented in the article. New developments in the relations between these two countries are discussed chronologically and with appropriate references. The role and importance of Armenia for Iran and Georgia is also discussed, based on which Armenia could propose trilateral regional cooperation projects. Armenia and Georgia may maintain balance in their relations with EU and Eurasian Economic Union (EAEU), as well as help with transit of Iranian energy and other goods to various European countries.

# ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

*Դավիդ Սարկիսյան*[*]

*Բանալի բառեր* ՝ռուս-գերմանական հարաբերություններ, աշխարհակարգ, զարգացման սցենարներ, կլաստերներ, հզորության բաշխում:

## *Ներածություն*

21-րդ դարի միջազգային հարաբերությունների առանցքային գործընթացներում կարևոր տեղ են զբաղեցնում Ռուսաստան-Արևմուտք և, մասնավորապես, Ռուսաստան-Գերմանիա հարաբերություններում ուկրաինական ճգնաժամից հետո սկսված զարգացումները: Այս փուլը մի շարք առումներով աննախադեպ է հետսառըպատերազմյան աշխարհակարգի պատմության մեջ: Ճգնաժամի առաջին շաբաթներից վերլուծաբանները սկսեցին խոսել նոր Սառը պատերազմի մասին: Արդեն շուրջ երկու տարի շարունակվող պատժամիջոցների քաղաքականությունն իր հերթին հերքեց այն մեկնաբանների կանխատեսումները, որոնք պնդում էին հարաբերությունների շուտափույթ կարգավորման և իրենց բնականոն հունին վերադառնալու մասին: Միևնույն ժամանակ, արդիական է մնում այն հարցը, թե որքան կտևի ներկա իրավիճակը և առաջիկա տարիներին ինչպես կզարգանան ռուս-գերմանական հարաբերությունները:

Հարցը դիտարկելով միջազգային հարաբերությունների գլոբալ համակարգի տեսանկյունից՝ վերլուծաբանների զգալի մասը միակարծիք է՝ Արևմուտք-Ռուսաստան դիմակայությունը պայմանավորելով միաբևեռ աշխարհակարգի վերափոխմամբ: Ռուսաստանն ու Չինաստանը՝ որպես ապագա բազմաբևեռ աշխարհակարգի երկու կայացող բևեռներ, բացահայտ աշխարհաքաղաքական մարտահրավեր են նետում արևմտյան բևեռին և, մասնավորապես, ԱՄՆ-ին: Ռուսաստանի մարտահրավերն արտահայտվում է 2008թ. ռուս-վրացական պատերազմի, Եվրասիական տնտեսական միության ստեղծման, դրան անդամակցության հարցում հետխորհրդային երկրների վրա ճնշում գործադրելու և հատկապես Ղրիմի միացման ու Արևելյան Ուկրաինայում անուղղակի միջամտության տեսքով: Չինաստանի պարագայում աշխարհաքաղաքական ակտիվությու-

[*] ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ:

նը դրսևորվում է Հարավչինական և Արևելաչինական ծովերում վիճելի կղզիների և տարածքների հարցում ավելի հաստատակամ քաղաքականություն վարելու, արհեստական կղզի-օդանավակայաններ կառուցելու, Արևելաչինական ծովի ջրավազանի զգալի մասի և վիճելի տարածքների վրա հակաօդային պաշտպանության նույնականացման գոտի հաստատելու միջոցով և այլն:

Այնուամենայնիվ, զգալի տարակարծություն կա այն հարցում, թե արդյոք միաբևեռ աշխարհակարգի վերափոխումը բազմաբևեռի տեղի կունենա Սառը պատերազմի նմանությամբ ընթացող կոշտ աշխարհաքաղաքական դիմակայության, թե ավելի խաղաղ, բնականոն անցման միջոցով: Միջազգային հարաբերությունների տեսաբանների համար մեկ այլ բանավեճի թեմա է այն հարցը, թե արդյոք այդ անցումը տեղի կունենա մոտ ապագայում, կամ արդյոք ներկա միջազգային հարաբերությունների համակարգը կարելի է համարել միաբևեռ, թե բազմաբևեռ: Նման անորոշություն է նկատվում Ռուսաստան-Արևմուտք և Ռուսաստան-Գերմանիա հարաբերությունների ապագան կանխատեսելու հարցում:

2013թ. հրատարակված «Գերմանիան և Ռուսաստանը 2030թ.՝ երկկողմ հարաբերությունների սցենարներ» աշխատության մեջ [1] առանձնացվում է հարաբերությունների զարգացման 4 սցենար: Առաջինի համաձայն՝ 2030թ. ռուս-գերմանական հարաբերությունները կլինեն գագաթնակետում, երկրները սերտորեն կհամագործակցեն տնտեսական և անվտանգության հետ կապված հարցերի շուրջ: Երկրորդ սցենարում ևս համագործակցությունը առկա է, սակայն, ի տարբերություն առաջինի, ընդհանուր արժեքների վրա հիմնված քաղաքականությունը փոխարինվում է տարամետ արժեքների համատեքստում տարվող պրագմատիկ սառը կուրսով: «Նոր սառցե դար» վերնագրված երրորդ սցենարի համաձայն՝ ՌԴ ներքին քաղաքականությունն ընթանում է ակնհայտ հակաժողովրդավարական ճանապարհով, ինչին զուգահեռ՝ Ռուսաստանը վարում է կոշտ արտաքին քաղաքականություն՝ դադարեցնելով ռազմավարական համագործակցության բոլոր ձևերն Արևմուտքի հետ: Իրենց հերթին, ԵՄ-ը և Գերմանիան առավել քննադատաբար են արտահայտվում Կրեմլի հասցեին, սակայն նոր աշխարհաքաղաքական համատեքստի պայմաններում դա քիչ ազդեցություն ունի Ռուսաստանի վրա, որն արդեն իր քաղաքական և տնտեսական հետաքրքրությունները մեծապես կապում է Ասիայի հետ: Վերջապես, չորրորդ սցենարի համաձայն՝ երկկողմանի հարաբերություններն ունեն կայուն տնտեսական հիմք, սակայն արժեքային վիհը պահպանվում է երկու երկրների միջև՝ պարբերական վայրիվերումների պատճառ հանդիսանալով:

Հետազոտության հեղինակները նշում են, որ չեն փորձել առաջադրված սցենարների միջոցով կատարել որոշակի կոնկրետ կանխատեսում, և այս 4

սցենարներն ընդգրկում են հնարավոր զարգացումների գրեթե ողջ սպեկտրը: Այս առումով աշխատության կիրառական նշանակությունը ցածր է: Օգտագործելով տրամաբանության տերմինաբանությունը՝ կարող ենք ասել, որ պնդումը, թե կիրականանա այս 4 սցենարներից որևէ մեկը, տրիվիալ է: Այլ հարց է սցենարներից յուրաքանչյուրին որոշակի հավանականության արժեք տալը, ինչը, սակայն, սցենարների մեթոդի կիրառության նպատակ չի հանդիսանում:

Այս հոդվածի շրջանակներում հիմնականում կկենտրոնանանք այն հարցի վրա, թե ինչ գործոններ են ազդում զարգացումների այս կամ այն սցենարի իրականացման հավանականության վրա:

## *Moralpolitik և կոմերցիոն ռեալիզմ. երկու տեսական մոտեցում Գերմանիայի արտաքին քաղաքականությանը*

Նշենք, որ բոլոր սցենարների մեջ այս կամ այն կերպ շոշափվում է արժեքների հարցը: Սա պատահական չէ այն իմաստով, որ «Գործընկերություն հանուն արդիականացման» ծրագրի հիմնական նպատակը Բեռլինը համարում էր Ռուսաստանի քաղաքական համակարգի «արդիականացումը» և ժողովրդավարացումը, մինչդեռ Մոսկվան առաջին պլան էր մղում երկրի տնտեսական արդիականացումը: Բացի այդ, Անգելա Մերկելը, ի տարբերություն իր նախորդի՝ Գերհարդ Շրյոդերի, բազմիցս հանդես է եկել Ռուսաստանի ներքին քաղաքականության զարգացումների քննադատությամբ՝ նշելով, որ դրանք շեղվում են եվրոպական արժեքներից: Սակայն, դրան զուգահեռ, Գերմանիան զարգացնում էր տնտեսական և էներգետիկ համագործակցությունը Ռուսաստանի հետ: Այս երկու հակամետ գործընթացները *Moralpolitik*-ի՝ արժեքների պաշտպանությամբ առաջնորդվող քաղաքականության և կոմերցիոն ռեալիզմի կամ աշխարհատնտեսական մոտեցման կողմնակիցների միջև բանավեճի տեղիք տվեցին [2, 3]: Առանցքային հարցն էր, թե ինչպիսին են, մի կողմից, զուտ տնտեսական շահերի և մյուս կողմից՝ արժեքների ու սկզբունքների առաջմղման կարևորության մասնաբաժինները Գերմանիայի արտաքին քաղաքականության մշակման ժամանակ: Մինչև 2014թ. իրադարձությունները և պատժամիջոցների կիրառումը դոմինանտ էր աշխարհատնտեսական դպրոցը, որը նշում էր, որ Գերմանիայի համար առաջնահերթ են տնտեսական շահերը, և որ այն քննադատությունից չի անցնի գործի միջազգային իրավունքի սկզբունքների կամ այլ արժեքների ոտնահարման դեպքում: Սրան զումարվում էր նաև տնտեսական կազմավորումների և գործարար շրջանակների ազդեցությունն արտաքին և, մասնավորապես, Ռուսաստանի նկատմամբ տարվող քաղաքականության հարցում [4, էջ 25-28]:

Թեպետ դժվարությամբ և որոշակի տատանումներից հետո (2014թ. մարտին Ղրիմի միացումից մինչև նույն թվականի հուլիսի վերջին երրորդ փուլի՝ տնտեսական պատժամիջոցների ընդունումն անցավ 4 ամսից ավելի) Գերմանիան որոշակի իմաստով երկրորդ պլան մղեց իր տնտեսական շահերը՝ սկսելով երկարատև տնտեսական պատժամիջոցների կուրսը, ինչին նույնիսկ դեմ էին արտահայտվել որոշ գործարարներ [5]:

### *Տեսական պատկերացումներ միջազգային հարաբերությունների համակարգի բևեռային կառուցվածքի մասին*

Ռուս-գերմանական հարաբերությունների վրա, բացի էնդոգեն գործոններից, ինչպես, օրինակ, երկու երկրների առաջնորդների և վարչակարգերի փոփոխությունը, մեծապես ազդում են նաև էկզոգեն գործոնները՝ այն միջավայրը կամ համատեքստը, որում ծավալվում են այդ հարաբերությունները: Այստեղ առաջին հերթին պետք է դիտարկել տվյալ ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների կառուցվածքը, Գերմանիայի՝ ԵՄ և ՆԱՏՕ անդամ լինելու կամ, այլ կերպ ասած, որոշակի իմաստով Արևմուտքի մաս կազմելու և, միևնույն ժամանակ, երբեմն ԱՄՆ-ից տարբեր դիրքորոշում ունենալու հարցերը:

Դիտարկելով Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունների վատթարացումը միջազգային հարաբերությունների գլոբալ համակարգի կառուցվածքաբանության տեսանկյունից՝ նախ անդրադառնանք այն հարցին, թե որ համակարգն է առավել նպաստավոր խաղաղության հարատևության, և որը՝ հակամարտությունների թվի ավելացման համար: Միջազգային հարաբերությունների տեսության մեջ այս հարցի վերաբերյալ կան երկու հակառակ դիրքորոշումներ: Դոիչն ու Սինգերը պնդում են, որ բազմաբևեռ համակարգում խաղաղությունն ավելի կայուն է երկու հիմնական պատճառով [6]: Նախ և առաջ բազմաբևեռ համակարգում երկբևեռի համեմատ ավելի բազմազան են փոխազդեցության հնարավոր ձևերն ու ուղղությունները: Երկրները կարող են հակառակորդ լինել մի հարցում, բայց համագործակցել մյուսի շուրջ: Երկրորդ պատճառն այն է, որ բևեռների թվի ավելացմանը զուգընթաց՝ յուրաքանչյուր տերություն իր ուշադրությունը և մի բևեռի դեմ կենտրոնացված հզորությունը պետք է բաժանի բոլոր բևեռների թվի վրա, ինչը նվազեցնում է երկու երկրների միջև պատերազմի և սպառազինությունների մրցավազքի հավանականությունը:

Հակառակ տեսակետի կողմնակիցն է Ուոլցը [7, 8], որը պնդում է, որ երկբևեռ համակարգն ավելի խաղաղ է, քան բազմաբևեռը: Նա կենտրոնանում է Սառը պատերազմի տարիների երկբևեռ համակարգի վերլուծության վրա՝ նշելով, որ 1. միջուկային ներուժը և «երկրորդ հարվածի հնարավորությունը» զսպող

գործոն էին մեծ պատերազմի կանխարգելման հարցում և 2. ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի՝ իրենց ճամբարների ներսում զբաղեցրած գերիշխող դիրքը նրանց թույլ էր տալիս զսպել իրենց ճամբարների «ծայրահեղականներին» (Ուոլցը, մասնավորապես, բերում է 1956թ. Սուեզի ճգնաժամի օրինակը, երբ ԱՄՆ-ը կարողացավ կանգնեցնել Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային):

Վեյմանին հաջողվել է կապակցել այս երկու հակառակ տեսակետները՝ վերցնելով դրանցից յուրաքանչյուրից ռացիոնալը և առաջարկելով միջազգային հարաբերությունների համակարգերն ըստ բևեռների դասակարգելու երկու չափանիշ [9, pp. 61-78]: Առաջինը տերությունների կշիռն է գլոբալ համակարգում կամ հարաբերական հզորությունը, իսկ երկրորդը՝ միմյանց նկատմամբ բարեկամության կամ թշնամության աստիճանը, կամ որ նույնն է՝ դաշինքների կոնֆիգուրացիան: Ըստ այդմ՝ Վեյմանը միջազգային հարաբերությունների համակարգերը բաժանում է հետևյալ կերպ.

*Աղյուսակ 1*

*Բևեռության երկու չափումները [9, p. 64]*

| | Դաշինքների կոնֆիգուրացիա | | |
|---|---|---|---|
| Հզորության կոնցենտրացիա | | Կլաստերային բազմաբևեռություն (*Cluster Multipolarity*) | Կլաստերային երկբևեռություն (*Cluster Bipolarity*) |
| | Հզորության բազմաբևեռ բաշխում (*Power Multipolarity*) | Եվրոպական համակարգը 1919-1939թթ. | Եվրոպական համակարգը 1941-1945թթ. |
| | Հզորության երկբևեռ բաշխում (*Power Bipolarity*) | Եվրոպական համակարգի որոշ կողմերը 1965-1975թթ. | Եվրոպական համակարգը 1948-1955թթ. |

Կորելյացիոն վերլուծության միջոցով ուսումնասիրելով միջազգային հարաբերությունների համակարգի էվոլյուցիան 1816-1965թթ.՝ Վեյմանը գալիս է այն եզրակացության, որ հզորության երկբևեռ բաշխում ունեցող համակարգերն ավելի խաղաղ են, քան հզորության բազմաբևեռ բաշխում ունեցողները: Միևնույն ժամանակ, կլաստերային բազմաբևեռություն ունեցող համակարգերն ավելի խաղաղ են, քան կլաստերային իմաստով երկբևեռ համակարգերը:

Սառը պատերազմի ավարտն ու (հզորության բաշխման տեսանկյունից) դասական երկբևեռ համակարգի կազմալուծումը 1990-ական թթ. սկզբին աշխարհը փաստացիորեն մտցրին հզորության միաբևեռ բաշխման շրջան, որը Կրաուտհամերն անվանեց «միաբևեռ պահ» (*unipolar moment*) [10]: Միաբևեռությանը բնորոշ հեգեմոնիայի դրական կողմերը ներկայացրեց հեգեմոնիկ կայունության տեսությունը:

Սակայն շուտով սկսեց զգացվել միաբևեռության դրվագային բնույթը. 1980-ական թթ. վերջերից, տնտեսական աճին զուգընթաց, կայծակնային արագությամբ ռազմական ծախսերն էր ավելացնում Չինաստանը: 2000-ականների սկզբից էներգակիրների գների աննախադեպ աճից օգտվելով՝ իր ռազմական ուժերն արդիականացնելու և ռազմական բյուջեն մեծացնելու լուրջ ծրագիր էր վարում նաև Ռուսաստանը: Այսպիսով, հետսառըպատերազմյան աշխարհին աստիճանաբար գնում էր դեպի հզորության բազմաբևեռ բաշխման մոդելը: Տնտեսական հզորության տեսանկյունից բազմաբևեռությունն արդեն հաստատված փաստ է: Ինչ վերաբերում է ռազմական հզորությանը, ապա թեպետ ԱՄՆ-ը դեռևս պահպանում է բացարձակ առաջատարի իր դիրքերը, բայց այստեղ ևս հետզհետե նվազում է նրա մասնաբաժինը համաշխարհային ռազմական ծախսերի մեջ, կամ որ նույնն է՝ ավելանում է բազմաբևեռության աստիճանը: Ուստի, այս իմաստով պատահական չէ, որ Վեյմանի տեսության համաձայն՝ միջազգային հարաբերությունները դառնում են ավելի մրցակցային:

### *Կլաստերային բևեռների փոփոխության դինամիկան հետսառըպատերազմյան շրջանում*

Այժմ քննարկենք գլոբալ համակարգի կլաստերացման փոփոխությունները հետսառըպատերազմյան շրջանում: Դրա համար առանձնացնենք կլաստերային բևեռները և վերլուծենք բևեռների/ուժային կենտրոնների միջև հարաբերությունների մակարդակի փոփոխությունը հակամարտության-բարեկամության կոնտինուումի վրա: Այս հոդվածի շրջանակներում մենք կդիտարկենք հետևյալ ուժային կենտրոնները՝ ԱՄՆ, ԵՄ, ՌԴ, ՉԺՀ:

Բավական հետաքրքիր են զարգացել ԱՄՆ-ԵՄ-ՌԴ փոխհարաբերությունները: 1990-ական թթ. ՌԴ-ն հիմնականում վարում էր արևմտամետ կուրս, և միայն Վլադիմիր Պուտինի նախագահության շրջանում վերանայվեց այդ քաղաքական գիծը: ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում զգալի սառնություն մտավ 2003թ. իրաքյան պատերազմից հետո: Հետաքրքրական է, որ եվրոպական երկրներից Գերմանիան և Ֆրանսիան, դեմ արտահայտվելով պատերազմին, զբաղեցրին ռուսականին մոտ դիրքորոշում, ինչը նույնիսկ տեղիք տվեց Բեռլին-Փարիզ-Մոսկվա առանցքի մասին խոսակցություններին: Գերհարդ Շրյոդերի պաշտոնավարության շրջանում ռուս-գերմանական հարաբերությունները վերն առաջադրված կոնտինուումի վրա զբաղեցրին առավել բարեկամական դիրքը: Գերմանիայում առաջ եկավ Վաշինգտոնի և Մոսկվայի միջև «հավասարահեռության» հայեցակետը [11]: Սա դասական կլաստերային բազմաբևեռության օրինակ էր, երբ ԱՄՆ-ի հետ մի ռազմաքաղաքական դաշինքի մեջ մտնող Գերմա-

նիան մի շարք հարցերով ավելի մոտ դիրքորոշում ուներ մեկ այլ բևեռ/ուժային կենտրոն հանդիսացող Ռուսաստանի հետ: Ռուս-գերմանական հարաբերություններում թեպետ որոշակի սառնություն մտավ Գերհարդ Շրյոդերին փոխարինած Անգելա Մերկելի պաշտոնավարման առաջին տարիներին, սակայն Դմիտրի Մեդվեդևի՝ ՌԴ նախագահի պաշտոնում ընտրվելուց հետո երկկողմ հարաբերությունները կրկին վերելք ապրեցին: Բացի այդ, Ռուսաստանի հանդեպ ունեցած դիրքորոշման հետ կապված՝ մի քանի կլաստերներ գոյություն ունեին նաև ԵՄ ներսում: Մարկ Լեոնարդը և Նիկու Պոպեսկուն 2007թ. առանձնացրել են ԵՄ անդամ երկրների 5 հիմնական խմբեր [12]:

Կլաստերային բազմաբևեռության ցուցանիշ էր նաև 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո ԵՄ երկրների միջանկյալ դիրքորոշումն այն դեպքում, երբ ԱՄՆ-ը հանդես եկավ Վրաստանի աջակցությամբ: Ֆրանսիան՝ հանձին նախագահ Սարկոզիի, պաշտոնապես հանդես եկավ որպես միջնորդ կողմ Ռուսաստանի և Վրաստանի միջև: Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա Անգելա Մերկելը 2008թ. հայտարարեց, որ ռուսական կողմի որոշ գործողություններ տեղին էին, և հավելեց. «երկու կողմերն էլ հավանաբար մեղավոր են» [13]:

Կլաստերային այս բազմաբևեռությունը ԱՄՆ-ԵՄ-ՌԴ հարաբերություններում հիմնականում վերափոխվեց երկբևեռության ուկրաինական ճգնաժամից հետո: Չնայած որոշ սկզբնական տարաձայնություններին՝ համախմբում տեղի ունեցավ ԵՄ ներսում, որի բոլոր անդամներն ընդունեցին պատժամիջոցների քաղաքականություն Ռուսաստանի դեմ: Մյուս կողմից՝ առավել մոտեցան ԵՄ և ԱՄՆ դիրքորոշումները, ինչով 30 երկիր միավորող ԱՄՆ-ԵՄ-ՌԴ եռանկյունը կլաստերային իմաստով դարձավ երկբևեռ. մի կողմից՝ ՌԴ և մյուս կողմից՝ մնացյալ 29 երկրները: Կլաստերային երկբևեռության միտումն արտահայտվեց նաև Ռուսաստանի՝ հարևան երկրների նկատմամբ վերջին տարիներին տարվող «ով մեզ հետ չէ՝ մեր դեմ է» սկզբունքով քաղաքականությամբ: Մասնավորապես, Կրեմլը 2013թ. Վիլնյուսի գագաթաժողովին ընդառաջ հզոր աշխարհաքաղաքական ճնշում գործադրեց ԵՄ-ի հետ ասոցացման շուրջ բանակցություններ վարող երկրների վրա՝ փորձելով նրանց հետ պահել պայմանագրի ստորագրումից: Սա ևս քայլ էր՝ ուղղված կլաստերային բազմաբևեռության դեմ, որի բուն էությունն է համագործակցությունը տարբեր բևեռների հետ տարբեր հարցերի շուրջ (ենթադրենք՝ ՀՀ-ն, մնալով ՌԴ ռազմաքաղաքական դաշնակիցը ՀԱՊԿ գծով, կարող էր փոխշահավետ սկզբունքներով տնտեսապես ասոցացվել ԵՄ-ի հետ):

Գլոբալ կլաստերային դինամիկայի խճապատկերին կարևոր տեղ է զբաղեցնում Չինաստանը: ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունների մակարդակը, ինչպես *գծապատկերում* ցույց է տալիս Սյուեթոնգը [14], 1980-ական թթ. ի վեր պարբերաբար

ունեցել է ելևէջներ: 2001թ. ահաբեկչությունից հետո երկկողմանի հարաբերություններում որոշակի աճ էր արձանագրվել. ԱՄՆ-ը, կենտրոնանալով «ահաբեկչության դեմ պատերազմի» և Մերձավոր Արևելքի տարածաշրջանի վրա, չէր ցանկանում աշխարհաքաղաքական մրցակցության երկրորդ ճակատ բացել Պեկինի հետ: Ի հավելումն՝ հարաբերությունների շարժիչն էր տնտեսական համագործակցության բուռն աճը: Սակայն ԱՄՆ 2010թ. հռչակած «շրջադարձ դեպի Ասիա» քաղաքականությունը, որը նախատեսում է ԱՄՆ ռազմական նավատորմի զգալի ուժերի տեղակայում արևելասիական տարածաշրջանում և ամերիկյան աշխարհաքաղաքական դիրքերի ամրապնդում, Պեկինում ընկալվում է որպես Չինաստանի դեմ տարվող զսպման քաղաքականություն [15]: Կլաստերային բևեռացումն ինչ-որ տեղ նկատվեց 2013թ. նոյեմբերին, երբ Արևելաչինական ծովի վիճելի տարածքների վրա Չինաստանի կողմից հակաօդային պաշտպանության նույնականացման գոտի հաստատելուց հետո ԱՄՆ-ը հանդես եկավ Ճապոնիայի աջակցությամբ և ի խախտումն այդ գոտու պահանջների՝ վիճելի տարածքներ ուղարկեց իր ռազմական ինքնաթիռները՝ առանց չինական կողմին նախապես իրազեկելու: Կլաստերային բևեռացումը խորացնող քայլ էր նաև 2016թ. փետրվարին Անդրխաղաղօվկիանոսյան գործընկերության (ԱԽԳ) մասին պայմանագրի ստորագրումը, որը միավորում է համաշխարհային տնտեսության զգալի մասնաբաժին ունեցող 12 պետություններ և բացառում է Չինաստանն ու Ռուսաստանը: Որոշ վերլուծաբաններ նշում են, որ ԱԽԳ հիմնադրման աշխարհաքաղաքական դրդապատճառներից էր համաշխարհային առևտրի մեջ ՉԺՀ աճող դերակատարությունը զսպելու անհրաժեշտությունը [16]: Եթե սրան ավելացնենք նաև վերջին տարիներին Ռուսաստան-Չինաստան մերձեցումը, էներգակիրների մատակարարման ոլորտում մեծ նախագծերը, ապա առավել տեսանելի է դառնում կլաստերային բազմաբևեռությունից երկբևեռության անցման միտումը:

Թե՛ Դոիչն ու Սինգերը և թե՛ Ուոլցը կապը համակարգի երկբևեռ/բազմաբևեռ լինելու և այդ համակարգում լարվածության աստիճանի միջև պատկերացնում էին որպես պատճառահետևանքային կապ, որտեղ բևեռների թիվը (համակարգի կառուցվածքը) պատճառն է, իսկ լարվածության մակարդակը՝ դրա հետևանքը: Այս պնդումը, սակայն, նրանք հիմնականում թողել էին տեսական/տրամաբանական հիմնավորումների դաշտում՝ առանց վիճակագրական ստուգման: Իր հերթին Վեյմանը, փորձելով վերամշակել և ստուգել նրանց առաջադրած վարկածները, կիրառել է կորելյացիոն և ոչ ռեգրեսիոն վերլուծություն՝ առանց այլ փոփոխականների հնարավոր ազդեցությունների վերահսկողության, ինչը թույլ չի տալիս մեզ պնդել վերն առաջադրված փոփոխականների միջև պատճառահետևանքային կապի կամ դրա ուղղության մասին: Այլ կերպ ասած, նույնիսկ եթե ենթադրենք, որ

հայտնաբերված կորելյացիան վկայում է պատճառահետևանքային կապի մասին, կարելի է մտածել, որ լարվածության մակարդակի աճն է ստիպում պետություններին միավորվել երկու բևեռ-կլաստերներում, այլ ոչ թե բազմաթիվ կլաստերների միավորումն է երկու խմբավորումներում բերում լարվածության ավելացման (կամ երկուսն էլ միաժամանակ): Ուկրաինական ճգնաժամի պարագայում, օրինակ, ԵՄ-ԱՄՆ դիրքորոշումների մոտեցումն արդյունք եղավ Ռուսաստանի ձեռնարկած քայլերի և ոչ թե հակառակը: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի քայլերը՝ ուղղված Չինաստանի հետ քաղաքական և տնտեսական մերձեցմանը, փորձ էին մեղմելու Արևմուտքի հետ հարաբերությունների վատթարացման քաղաքական և տնտեսական հետևանքները: Կանխատեսելով եվրոպական որոշ երկրների՝ ռուսական էներգակիրներից կախվածության նվազեցման քաղաքականության արդյունքում արևմտյան սպառման շուկայի կրճատումը՝ ՌԴ-ն փորձում է կրած վնասները մասամբ փոխհատուցել չինական շուկայի հաշվին՝ 2014թ. ստորագրելով գազամուղի կառուցման մասին պայմանագիրը: Գործընթացների ժամանակագրական հաջորդականությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում կլաստերային երկբևեռությունը լարվածության ավելացման հետևանք է: Սակայն, միևնույն ժամանակ, այն կարող է լինել նաև պատճառ: Այսպիսով, առավել ճշգրիտ կոնցեպտուալ մոդելը կապը միջազգային հարաբերությունների համակարգի այս կառուցվածքաբանական ասպեկտի և լարվածության միջև կներկայացնի *Նկար 2*-ում պատկերված սխեմայի, այլ ոչ թե *Նկար 1*-ի համաձայն, որտեղ սլաքները ցույց են տալիս պատճառահետևանքային կապի ուղղությունը.

*Նկար 1*

*Բևեռության և լարվածության կապի առաջին մոդելը*




*Նկար 2*

*Բևեռության և լարվածության կապի երկրորդ մոդելը*



Երկու նկարների հիմնական տարբերություններն են՝ 1. հնարավոր այլ գործոնների ազդեցության ընդունումը և 2. կլաստերային երկբևեռության ու լարվածության մակարդակի միջև պատճառահետևանքային կապի երկկողմանի լինելը: 1-ին կետի վերաբերյալ հարկ է նշել, որ այլ գործոններ ասելով կարելի է հասկանալ տնտեսական և գիտատեխնիկական զարգացումը, որոնք բերում են երկրի հզորության ավելացմանը, ինչը միջնորդավորված կերպով ազդում է լարվածության մակարդակի վրա, քանի որ նպաստում է նոր բևեռների առաջացմանը: Միևնույն ժամանակ, կարող են լինել այնպիսի գործոններ, որոնք լարվածության ավելացման վրա ազդում են ուղղակիորեն, ինչպես, օրինակ, վարչակարգերի փոփոխությունը և նոր առաջնորդների կողմից այս կամ այն հարցում ավելի կոշտ դիրքորոշում զբաղեցնելը: Իր հերթին, նոր ղեկավարությունը կարող է նաև փոխել արտաքին քաղաքական կուրսը՝ մոտեցնելով սեփական երկրի դիրքորոշումը գոյություն ունեցող կլաստերներից մեկի դիրքորոշմանը (կամ հակառակը՝ հեռացնելով այն դրանից), ինչը կարող է բերել կլաստերային կոնֆիգուրացիայի փոփոխության:

### *Արդի ռուս-գերմանական հարաբերությունների որոշ միտումներ*

Կիրառելով այս տեսական մոդելի պրիզման ռուս-գերմանական հարաբերությունների հեռանկարների վերլուծության համար՝ կարող ենք նշել, որ առանցքային հարցերից մեկը մնում է պատժամիջոցների քաղաքականության ապագան: Սանկցիոն ռեժիմի վերացման մասին ռուսական վերլուծական դաշտում հույսեր են կապվում 2017թ. հետ: Այդ թվականին նախագահական ընտրությունների արդյունքում փոխվելու է ԱՄՆ վարչակազմը, միևնույն ժամանակ տեղի են ունենալու Բունդեսթագի դաշնային ընտրությունները, որոնց արդյունքում ևս հնարավոր է քաղաքական ղեկավարության փոփոխություն Գերմանիայում:

Այնուամենայնիվ, նույնիսկ եթե Մերկելը չլինի ԳԴՀ հաջորդ կանցլերը, համաձայն տարբեր սոցհարցումների տվյալների [17, 18]՝ շատ հավանական է, որ ընտրություններին կրկին հաղթելու է նրա կուսակցությունը՝ Քրիստոնեա-ժողովրդավարական միությունը, ինչը մեծացնում է ընտրված կուրսի շարունակական լինելու հավանականությունը: Բացի այդ, Գերմանիայի քաղաքական կուսակցությունների և գործիչների ճնշող մեծամասնությունը կողմ է արտահայտվել պատժամիջոցներին [4, էջ 26-28]: Դրա հետ մեկտեղ, ի տարբերություն ավտորիտար վարչակարգ ունեցող պետությունների՝ ժողովրդավարական երկրներում, ինչպիսին է Գերմանիան, արտաքին քաղաքականությունն աչքի է ընկնում իր ժառանգականությամբ, և կտրուկ շրջադարձերը քիչ հավանական են:

Այսպես, օրինակ, Վիլի Բրանդտի «Նոր արևելյան քաղաքականության» կուրսը շարունակեց սոցիալ-դեմոկրատական կառավարություններին փոխարինած քրիստոնեա-դեմոկրատական կառավարությունը՝ Հելմուտ Քոլի գլխավորությամբ: Իր հերթին, Շրյոդերի պաշտոնավարման ընթացքում մեծ թափ ստացած՝ ՌԴ-ի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման կուրսը շարունակեց Մերկելը: Թեպետ նրա կանցլերության օրոք արվեցին ՌԴ ներքին քաղաքականության և մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների որոշակի շեշտադրումներ, այնուամենայնիվ, կտրուկ շրջադարձեր տեղի չունեցան մինչև ուկրաինական ճգնաժամը:

Հաջորդ կարևոր գործոնը ռուս-գերմանական հարաբերություններում ինստիտուցիոնալացման մակարդակի անկումն է: 2014թ. մարտին Եվրոպական խորհուրդը պատժամիջոցների քաղաքականության համատեքստում որոշեց չեղարկել ԵՄ-ՌԴ ամենամյա գագաթաժողովները: Միևնույն ժամանակ, վերացվեց «Մեծ ութնյակի» շրջանակներում համագործակցության ձևաչափը Ռուսաստանի հետ:

Կտրուկ անկում են ապրել ԳԴՀ-ՌԴ տնտեսական հարաբերությունները: *Նկար 3*-ում բերված է ապրանքաշրջանառության ծավալների դինամիկան ըստ տարիների՝ արտահայտված «մլրդ եվրո» միավորով:




Նվազել է նաև ՌԴ-ից ներկրվող գազի տոկոսը Գերմանիայի էներգիայի ընդհանուր սպառման մեջ: Այս քաղաքականությունը տարվում է դեռ 2008թ.: Եթե 1997թ. Ռուսաստանից գազի ներկրումը Գերմանիայի ընդհանուր գազի ներկրման մեջ 40.4% էր, ապա 2005թ.՝ 41.7%: 2008թ. այս ցուցանիշն աճել է՝ հասնելով 43.9%-ի: Սակայն 2008թ. ռուս-վրացական պատերազմից և 2009թ. գազային ճգնաժամից հետո Գերմանիան սկսեց նվազեցնել Ռուսաստանից էներգետիկ

կախվածությունը, և 2014թ. գազի միայն 38.6%-ն էր ներկրվում ՌԴ-ից: Այս միտումը պահպանվելու դեպքում էներգետիկ կախվածության գործոնի դերը ռուս-գերմանական հարաբերություններում միայն նվազելու է [4, էջ 30]:

## *Եզրակացություն*

Այսպիսով, ամփոփելով վերլուծության ընթացքում արված բոլոր դիտարկումները՝ կարելի է անել մի շարք հետևություններ.

1. Կլաստերային և հզորության բաշխման տեսանկյունից նոր աշխարհակարգն անբարենպաստ է ռուս-գերմանական հարաբերությունների շուտափույթ կարգավորման համար:
2. Երկկողմանի հարաբերությունների ինստիտուցիոնալացման մակարդակի անկումը բացասաբար կանդրադառնա դրանց հետագա ընթացքի վրա նաև երկարատև հեռանկարում, քանի որ ապաինստիտուցիոնալացումն ավելի է լայնացնում արժեքային վիհը և վերացնում բանակցությունների ու քաղաքական շփումների մի շարք ալիքներ:
3. Տնտեսական փոխադարձ կախվածության նվազումը, համաձայն նեոլիբերալ էմպիրիկ գրականության մի շարք ներկայացուցիչների [19], ավելացնում է հակամարտության հավանականությունը:
4. Ռուսական էներգակիրներից ունեցած կախվածության դանդաղ, բայց հետևողական թուլացումը խոսում է այն մասին, որ երկարատև հեռանկարում Գերմանիան գործելու է առավել անկաշկանդ, և հնարավոր է ԱՄՆ դերի մեծացում ԳԴՀ-ին էներգակիրների մատակարարումների հարցում:

Այս բոլոր զարգացումների համատեքստում առավել քիչ հավանական է թվում, որ ռուս-գերմանական հարաբերությունների ապագան կկառուցվի ընդհանուր արժեքների վրա հիմնված վերոնշյալ առաջին սցենարի համաձայն: Ավելին, արդեն զգալիորեն թուլացել և երկարատև հեռանկարում շարունակելու է թուլանալ պրագմատիկ հարաբերությունների տնտեսական և էներգետիկ համագործակցության հիմքը: Այս առումով առավել հավանական է, որ հարաբերությունների հետագիծը տատանվելու է 3-րդ և 4-րդ սցենարների միջակայքում:

***Հունիս, 2016թ.***

## Աղբյուրներ և գրականություն

1. *Феликс Хетт, Райнхард Крумм, Рудольф Трауб-Мерц,* Германия и Россия в 2030г.: сценарии для двусторонних отношений, фонд им. Фридриха Эберта, Москва, 2013. http://russiancouncil.ru/common/upload/Scenarios_DERU2030_Online%20RU.pdf
2. *Stephen F. Szabo*, Germany, Russia and the Rise of Geo-economics, Bloomsbury Academic, 2015.

3. *Stephen F. Szabo*, Germany's Commercial Realism and the Russia Problem, Survival: Global Politics and Strategy, pp. 117-128, 2014.
4. *Դավիդ Սարկիսյան*, Ռուս-գերմանական հարաբերությունները ներկա փուլում, Բանբեր Երևանի համալսարանի. միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, #1, էջ 19-31, 2016:
5. Wirtschaftlische Folgen im Krim-Konflikte bereits spürbar, T-online.de, 2014, from http://www.t-online.de/wirtschaft/id_68605402/wirtschaftliche-folgen-im-krim-konflikt-schon-spuerbar.html , Juni 06, 2016.
6. *Deutsch, Karl & J. David Singer*, Multipolar Power Systems and International Stability, World Politics, vol. 16, no. 4, pp. 390-406, 1964.
7. *Waltz, Kenneth*, The Stability of a Bipolar World, Daedalus, vol. 93, no. 3, pp. 882-884, 1964.
8. *Waltz, Kenneth*, International Structure, National Force, and the Balance of World Power, Journal of International Affairs, vol. 53, no. 2, pp. 230-231, 1967.
9. *Frank Wayman*, Bipolarity and War: The Role of Capability Concentration and Alliance Patterns among Major Powers, 1816-1965, Journal of Peace Research, vol.21, no.1, pp.61-78, 1984.
10. *Charles Krauthammer*, The Unipolar Moment, Foreign Affairs, vol. 70, no. 1, 1990.
11. *Christopher Chivvis, Thomas Rid,* The Roots of Germany's Russia Policy, Survival: Global Politics and Strategy, vol. 51, no. 2, pp. 105-122, 2009.
12. *Mark Leonard, Nicu Popescu,* A Power-Audit of EU-Russia Relations, European Council on Foreign Relations, 2007.
13. Merkel, Medvedev Clash over Russia's Warin Sochi Talks, Deutsche Welle, 2008, from http://www.dw.com/en/merkel-medvedev-clash-over-russias-war-in-sochi-talks/a-3567243 , June 06, 2016.
14. *Yan Xuetong,* The Instability of China-US Relations, The Chinese Journal of International Politics, vol. 3, pp. 263-292, 2010.
15. *Justin Logan*, China, America and the Pivot to Asia, CATO Institute, Policy Analysis, No. 717, 2013.
16. *Wan Fayhsal*, The Geopolitics of the Trans-Pacific Partnership Agreement (TPPA), a US Imperial, Global Research, 2016, from http://www.globalresearch.ca/the-geopolitics-of-the-trans-pacific-partnership-agreement-tppa-a-us-imperial-strategy/5501558 , June 06, 2016.
17. Merkel's Popularity Plummets to Lowest in 5 Years amid Migrant Crisis, sputniknews.com, 2016, from http://sputniknews.com/europe/20160422/1038442843/refugee-crisis-merkel-popularity.html , June 06, 2016.
18. Merkel's Approval Rating Improve, Deutsche Welle, 2016, from http://www.dw.com/en/merkels-approval-ratings-improve/a-19083943 , June 06, 2016.
19. *Edward Mansfield & Brian Pollins,* Interdependence and Conflict: Recent Advances, Open Questions and Directions for Future Research, The Journal of Conflict Resolution, vol.45, no. 6, pp. 834-859, 2001.

## ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

***Դավիդ Սարկիսյան***

Ամփոփագիր

Հոդվածում վերլուծվում է ռուս-գերմանական հարաբերությունների զարգացման հետագծի վրա ազդող մի շարք էկզոգեն և էնդոգեն գործոնների ազդեցությունը: Էկզոգեն գործոնների շարքում քննարկվում է միջազգային հարաբերությունների գլոբալ

համակարգի կառուցվածքային ասպեկտների՝ որպես ՌԴ-ԳԴՀ հարաբերությունների ծավալման միջավայրի, ազդեցությունը: Լուսաբանվում են Սառը պատերազմի ավարտից հետո աշխարհակարգի փոխակերպման միտումները կլաստերային կոնֆիգուրացիայի և հզորության հարաբերական բաշխման տեսանկյունից: Տնտեսական հարաբերությունների և էներգակիրների ներկրման/արտահանման դինամիկան, քաղաքական հարաբերությունների ինստիտուցիոնալացման մակարդակը դիտարկվել են այլ էնդոգեն գործոնների հետ մեկտեղ:

## ПЕРСПЕКТИВЫ РОССИЙСКО-НЕМЕЦКИХ ОТНОШЕНИЙ

*Давид Саркисян*

Резюме

В статье анализируется влияние экзогенных и эндогенных факторов на траекторию развития российско-немецких отношений. Среди экзогенных факторов рассматривается влияние некоторых структурных аспектов глобальной системы международных отношений как среды развития отношений РФ-ФРГ. С точки зрения кластерной конфигурации и относительного распределения силы освещены тенденции трансформации миропорядка после окончания «холодной войны». Наряду с другими эндогенными факторами были рассмотрены динамика экономических отношений и импорта/экспорта энергоносителей, а также уровень институционализации политических отношений.

## THE PERSPECTIVES OF RUSSO-GERMAN RELATIONS

*David Sarkisyan*

Resume

The impact of exogenous and endogenous factors on the development pattern of Russo-German relations is analyzed in the paper. The effects of several structural aspects of the global international relations system, as settings where Russian-German relations unfold, are considered among the exogenous factors. The trends of post-Cold War world order transformation are presented in terms of cluster configuration and relative power distribution. The dynamics of economic relations and energy imports/exports, the level of institutionalization of political relations are considered along with other endogenous factors.

# ԵԱՏՄ-ԻՆ ՀՀ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

***Կարեն Գրիգորյան****

*Բանալի բառեր* ՝ ԵԱՏՄ արտաքին առևտրի քաղաքականություն, նոր մաքսային օրենսգիրք, ԱԱՀ վճարումներ, գնաճի մակարդակ, նոր արդյունաբերականացում, կոոպերացում, տարածքների ինտեգրում:

Նորաստեղծ Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) ՀՀ անդամակցությունը զգալի հեռանկարներ է բացում թե՛ երկրի տնտեսության և թե՛ գործարար միջավայրի զարգացման ու արտահանման ծավալների աճի համար: ԵԱՏՄ-ին անդամակցությունը կարող է զգալիորեն կրճատել ապրանքների փոխադրման ժամանակը և պարզեցնել տնտեսական փոխգործակցության ռեժիմները:

Հատկանշական է, որ «Բարոմետր» կազմակերպությունը Երևանում անցկացված հետազոտության ժամանակ հարցվողներին ուղղել է հետևյալ հարցը. «Նշեք, խնդրեմ, այն 3 երկրները, որոնցից, ըստ Ձեզ, Հայաստանը տնտեսապես առավել կախված է»[1]: Հարցվողները նշել են երեք երկիր ըստ առաջնայնության՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության կախվածությունը: Համախմբված բոլոր պատասխաններից ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել է Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ), քանի որ պատասխանների գրեթե 37.3%-ը կենտրոնացել է այդ երկրի շուրջ: Դա, իհարկե, ունի իր օբյեկտիվ հիմքերը, քանի որ ՀՀ-ն անդամակցում է ԵԱՏՄ-ին, որտեղ ՌԴ-ն ունի մեծ դերակատարում և միության լոկոմոտիվի նշանակություն:

Ինչպես հայտնի է, ներկայում քննարկվում են երրորդ երկրների հետ ԵԱՏՄ արտաքին առևտրի քաղաքականության հարցերը: ԵԱՏՄ Բարձրագույն խորհուրդը (անդամ երկրների ղեկավարներ) որոշում է կայացրել վարչապետների մակարդակով ազատ առևտրի պայմանագիր կնքել Վիետնամի հետ[2]: Դա ազատ առևտրի մասին առաջին համաձայնագիրն է, որ կնքելու է միությունը երրորդ երկրի հետ. այն համապատասխանում է բոլոր միջազգային չափորոշիչներին՝ ընդգրկելով գրեթե բոլոր առևտրային ուղղությունները[3]: Նաև ԵԱՏՄ անդամ եր-

* Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ:

[1] http://test.barometer.am/news/business/20150615/2761/

[2] Սկսած 2015թ. մայիսի 29-ից՝ Վիետնամի հետ պայմանավորվածությունն ուժի մեջ կմտնի ԵԱՏՄ անդամ բոլոր երկրների և հենց Վիետնամի վավերացումից 60 օր հետո:

[3] http://metsamorcity.do.am/news/eatm_n_mec_hnaravorowtyownner_e_arajarkowm_anhrajhesht_e_miayn_haskanal_dranq_ew_twisht_ogtvel_drancic/2015-05-15-2981

կրներից արտահանված ապրանքները Վիետնամի միջոցով դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի շուկաներ դուրս բերելու առումով կիրառական ծրագրեր են կանխատեսվում, ինչը լիովին նոր հնարավորություններ է բացում: Այս շուկաներում հայկական ապրանքների ունեցած հեռանկարների վերաբերյալ պետք է մասնագիտական քննարկումներ անցկացնել՝ պարզելու, թե որ ապրանքատեսակի գծով ինչ առևտուր կարելի է սպասել:

Ի հավելումն, հեռանկարում հնարավոր է նաև ստեղծել մաքսային տարանցման վերմայրցամաքային համակարգ: Այդ գաղափարը կարող է իրականացվել երկու տնտեսական նախագծերի՝ ԵԱՏՄ և Մետաքսի ճանապարհի Տնտեսական գոտու կապակցման միջոցով, որի ստեղծման մասին հայտարարել է Չինաստանը[1]: Հեռանկարային նպատակ է նաև Չինաստանի հետ ազատ առևտրի գոտու ստեղծումը, սակայն դա կպահանջի տևական ժամանակ՝ առնվազն մի քանի տարի:

Հարկ է նշել, որ Հայաստանի համար կարևորագույն խնդիր է Իրանի հետ ազատ առևտրի համաձայնագրի հեռանկարը, քանի որ Հայաստանը ԵԱՏՄ միակ երկիրն է, որը ցամաքային սահման և առևտրի մեծ փորձ ունի Իրանի հետ: Վերջերս իրանյան կողմը հանդես է եկել համապատասխան նախաձեռնությամբ, որը գերատեսչական մակարդակով աջակցության է արժանացել միության անդամ բոլոր երկրների կողմից: Այս կապակցությամբ անհրաժեշտ է իրականացնել համատեղ հետազոտություններ և առաջարկել դրանց հաջորդող բանակցությունների հետ կապված լուծումներ:

Այդուհանդերձ, ինչպես ցանկացած նոր միջազգային կամ տարածաշրջանային կառույցի անդամակցության դեպքում, ԵԱՏՄ-ի դեպքում նույնպես առաջանում են խնդիրներ և մարտահրավերներ: Առաջիկա ծրագրերի ու խնդիրների թվում է միության նոր մաքսային օրենսգրքի (ԵԱՏՄ ՄՕ) մշակումը, ինչը հնարավորություն կտա կարգավորել երրորդ երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունները, հարկային հայեցակարգային մոտեցումները և այլ հարցեր: 2014թ. դեկտեմբերի 18-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կոլեգիայի որոշմամբ՝ ԵԱՏՄ ՄՕ նախագիծը հավանության է արժանացել, և հաջորդիվ սպասվում են անդամ պետությունների ներպետական համաձայնեցումները: Ծրագրվում էր, որ ԵԱՏՄ Մաքսային օրենսգիրքն ուժի մեջ պիտի մտներ 2016թ. հունվարի 1-ից: Փաստաթղթի մշակման ընթացքում ամրագրված հիմնական նպատակն է առավելագույնս կրճատել ոչ արտադրական ծախսերը, այսինքն՝ արտաքին առևտրի բոլոր գործառույթների իրականացման ընթացքում առավելա-

[1] *Գասպարյան Ա.,* ԵԱՏՄ-ն մեծ հնարավորություններ է առաջարկում, անհրաժեշտ է միայն հասկանալ դրանք և ճիշտ օգտվել դրանցից, «Հայաստանի Հանրապետություն» էլեկտրոնային օրաթերթ, 15-05-2015, http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20150515_5&flag=am

գույնս նվազեցնել և՛ գործարարության, և՛ պետական ծախսերը: Հատկանշական է, որ Մաքսային օրենսգիրքն ընդունվում է միջազգային համաձայնագրի տեսքով, քանի որ միությունում խորհրդարանի ձևավորում առայժմ չի ծրագրվում: Ընդհանրապես, բոլոր օրենսդրական ակտերն ընդունվում են միջազգային համաձայնագրերի տեսքով, որոնք հետագայում վավերացվում են ազգային խորհրդարաններում: ԵԱՏՄ-ն նախատեսում է ամրագրել մաքսային նոր օրենսգրքում այնպիսի հիմնական ուղղություններ, որոնց մեծ մասն արդեն առկա է 2015թ. հունվարի 2-ից գործող «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամ երկրներում հարկային քաղաքականությանը, ապա պետք է նշել, որ Հայաստանի գործարար հատվածը՝ ԱԱՀ վերադարձման մեխանիզմի և այլ հարկային ընթացակարգերի հետ կապված, ունեցել է որոշակի խնդիրներ: ԱԱՀ վերադարձման խնդիրն առկա էր արդեն այն ժամանակ, երբ Մաքսային միության շրջանակներում գործում էր միայն երեք պետություն: Նախկինում սահմանին գտնվող մաքսային մարմինների կողմից իրականացվում էր լիարժեք մաքսային ձևակերպում. մաքսային մարմնի նշումը հաստատում էր, որ տվյալ ապրանքը արտահանվել է տվյալ երկրից, և արտահանման համար նախատեսված զրոյական ԱԱՀ-ից օգտվելու իրավունքը հաստատվում էր հենց այդ նշումով: Ներկայում, երբ մաքսային մարմինները գործընթացից բացառվել են, արտահանողը կարող է օգտվել արտոնությունից միայն արտահանման երկրում գտնվող ու գործող ներկայացուցչի՝ պայմանադիր կողմի կամ հակագործակալի (կոնտրագենտի) միջոցով[1]:

Ուշագրավ է, որ երբ ՌԴ-ում գործող ձեռներեցն ապրանք է արտահանում ՀՀ, ապա, որպեսզի օգտվի զրոյական ԱԱՀ արտոնությունից, ՀՀ-ում գտնվող պայմանադիր կողմն ինքը պետք է հաստատի, որ այդ ապրանքն իրոք լքել է ՌԴ սահմանը: Հայաստանի համար, որն անցում է կատարել սույն ընթացակարգին 2015թ. հունվարի 1-ից, դա նոր կառուցակարգ է: Այդ պատճառով, հաճախ ռուսաստանյան արտադրողը մտահոգվում է, թե որքանով գործարքի հայկական կողմի ներկայացուցիչն ինքը կվճարի ԱԱՀ-ն, համապատասխան հայտարարություն կներկայացնի հարկային մարմին, կստանա արտահանման մասին նշում և կփոխանցի այն իր ռուսաստանյան գործընկերոջը:

Ընդսմին, սեփական ռիսկերը նվազեցնելու համար արտահանողներն ԱԱՀ-ն վճարում են գործող դրույքաչափով՝ չօգտվելով հարկատեսակի վերադարձման այն արտոնությունից, որն օրենսդրությունը սահմանել է: Դա նվազեցնում է արտահանողի ապրանքների մրցունակությունը, որովհետև վճարելով ԱԱՀ-ն՝ ապրանքն ավելի թանկ է դառնում: Անհրաժեշտ է իրականացնել բացատրական

[1] *Գասպարյան Ա.,* նշվ. տեղում:

աշխատանքներ, և դա որոշ ժամանակ կպահանջի, քանի որ անդամ երկրների հակագործակալներն ու հարկային մարմինները պետք է սովորեն միմյանց հետ աշխատել այդ կառուցակարգով:

Բացի այդ, 2015թ. առաջին կիսամյակում ՌԴ-ում 2014թ. մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մասին պայմանագրով սահմանված գնաճի (սպառողական գների համաթվի) մակարդակի գերազանցման կապակցությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) ներկայացուցիչների և ՌԴ լիազոր մարմինների միջև տեղի են ունեցել երկկողմ խորհրդակցություններ: Միջոցառման արդյունքով ընդունվել է գնաճի մակարդակի քանակական արժեքի պահպանման ապահովմանն ուղղված առաջարկությունների մշակման համար հիմնավորումների բացակայության մասին որոշումը, ինչը պայմանավորված է ՌԴ-ում միջոցառումների իրականացման արդյունավետությամբ, իրավիճակի որոշակի բարելավմամբ և գնաճի մակարդակի աստիճանական նվազեցմամբ[1]:

Բնութագրական է, որ ըստ ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի, գնաճի մակարդակը տնտեսական զարգացման կայունությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներից մեկն է: Ցուցանիշի թույլատրելի քանակական արժեքը տարեկան արտահայտությամբ (2015թ. դեկտեմբերին՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ) չպետք է գերազանցի տվյալ ցուցանիշի նվազագույն արժեք ունեցող ԵԱՏՄ անդամ պետության գնաճի մակարդակն ավելի քան 5 տոկոսային կետով:

Մինչդեռ ՌԴ-ում 2015թ. մարտին 2014թ. մարտի նկատմամբ գնաճի մակարդակը կազմել է 116,9%, 2015թ. հունիսին 2014թ. նույն ամսի նկատմամբ՝ 115,3%: Համապատասխանաբար, 2015թ. առաջին եռամսյակի արդյունքներով ցուցանիշի թույլատրելի արժեքի գերազանցումը կազմել է 6,7%, իսկ 2015թ. 2-րդ եռամսյակի արդյունքներով՝ 6,4%[2]: ՌԴ գնաճի մակարդակի աճի առավել էական ազդեցություն ունեցող գործոններից են, առաջին հերթին, ազգային արժույթի արժեզրկումը և դրանով պայմանավորված գնաճային սպասումները:

Այս առումով երկկողմ խորհրդակցություններ են անցկացվել ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքների գերազանցման դեպքում տնտեսական իրավիճակի կայունացմանն ուղղված միջոցառումների մշակման և ընդունման կարգն իրականացնելու շրջանակներում[3]:

[1] Եվրասիական տնտեսական հանձնաժողովն ակնկալում է Ռուսաստանում սղաճի նվազում, ինչը պայմանավորված կլինի ազգային միջոցառումների իրականացման արդյունավետությամբ, 07.10.2015, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կայքէջ, http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/07-10-2015-7.aspx

[2] Նույն տեղում:

[3] Սույն փաստաթուղթը հաստատվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2014թ. հունիսի 25-ի № 93 որոշմամբ:

Նկատենք, որ նպատակների, մշակույթների որոշակի ընդհանրության, տնտեսական փոխլրացման պատմական միասնությամբ հանդերձ՝ եվրասիական ինտեգրումը դեռևս մնում է առավելապես պետական կառավարման մարմինների, դրանց ղեկավարների և վերնախավի գործառույթը: Այսօր ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները դեռ լիովին չեն ընկալում, որ իրենց պետությունները և հասարակությունները սրընթաց փոփոխվում են ու ապագայում դառնալու են ԽՍՀՄ-ից տարբերվող, սակայն, այդուհանդերձ, միութենական տիպի ինտեգրացիոն միավորում և հասարակություն[1]: Եթե պետական կառավարման մարմինները լինեն ինտեգրման միակ լծակը, ապա նորաստեղծ միությունը չի կարող շատ ամուր լինել: Դրա համար առաջին հերթին կարիք է զգացվում տեղեկատվական և բացատրական քաղաքականության ակտիվացման: Այդ մասին է վկայում նաև ժամանակակից աշխարհի միություններից՝ ԵՄ փորձը:

Հարկ է մատնանշել, որ Հայաստանի համար Եվրասիական միության շուկաներ ներթափանցելու, ընդլայնելու և արտադրական կոոպերացումը խթանելու համար կարևոր միջոց է Աբխազիայով անցնող երկաթուղու վերագործարկումը: Ներկայում ՌԴ-ն և Վրաստանը լարված քաղաքական հարաբերություններ ունեն: Տարանցիկ ինտեգրումը խթանելու արդյունավետ միջոց կարող է լինել Հայաստանի լոբբիստական հնարավորությունների լիարժեք գործարկումը: Այդ հարցում հարկավոր է օգտագործել ոչ միայն ՀՀ, այլ նաև ՌԴ և Աբխազիայի հայ համայնքների ներուժը: Տարանցիկ ինտեգրման հաջողված օրինակ կարող է ծառայել ՌԴ Կալինինգրադի մարզի երկաթուղային հաղորդակցությունը «մայրցամաքային» Ռուսաստանի հետ:

Պետք է նկատել, որ Հայաստանն իր հիմնական շուկաներից մեկի՝ ՌԴ-ից կտրված լինելու, պատերազմի, ազատական բարեփոխումների արդյունքում ենթարկվել է ապաարդյունաբերականացման (դեինդուստրիալիզացիայի): Եվրասիական ինտեգրումը, որը դինամիկ գործընթաց է, հնարավորություն է տալիս մտածել նոր արդյունաբերականացման նախագծի մասին, մշակել համապարփակ ծրագիր և այն պաշտպանել ԵԱՏՄ անդամ երկրների շրջանում: ՀՀ-ն պետք է օգտագործի իր իրական առավելությունը՝ Իրանի և ՌԴ տարանցիկ տարածք լինելու հետ կապված:

Ի լրումն, Եվրասիական լիարժեք ինտեգրման համար կարևոր խնդիր է նաև տարածաշրջաններում գործընկերներ գտնելը և «մարզ-մարզ» ու նույնիսկ «արտադրություն-արտադրություն» մակարդակով միջտարածաշրջանային նախագծեր մշակելն ու իրականացնելը: ԵԱՏՄ-ում ՀՀ մարզպետների կարևորա-

[1] *Ուրալով Ս.,* Եվրասիական ինտեգրման գլոբալ մարտահրավերները և ռազմավարական խնդիրները Հայաստանի համար, «Ազգ» էլեկտրոնային օրաթերթ, http://azg.am/AM/2014061305

գույն գործը Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի մարզային մակարդակներով ուղիղ կապեր հաստատելն է: Օրինակ, Սյունիքի մարզը, որտեղ 85%-ը լեռնահանքային արդյունաբերությունից ստացվող եկամուտներն են, կարող է կողմնորոշվել դեպի Ուրալի դաշնային տարածաշրջան: Գյուղատնտեսական մթերք արտադրող մարզերը մեծ հնարավորություններ ունեն գործընկերներ գտնել ՌԴ հյուսիսային տարածաշրջաններում, Սիբիրի և Հեռավոր Արևելքի մարզերում:

***Մարտ, 2016թ.***

## ԵԱՏՄ-ԻՆ ՀՀ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

***Կարեն Գրիգորյան***

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվել են երրորդ երկրների հետ ԵԱՏՄ արտաքին առևտրի քաղաքականության հարցերը: Արծարծվել են ԵԱՏՄ նոր մաքսային օրենսգրքի մշակման, արտահանողների ԱԱՀ վճարումների առանձնահատկությունները և ապրանքների մրցունակության խնդիրները: Դիտարկվել են նաև ԵԱՏՄ սահմանած գնաճի մակարդակի գերազանցման երևույթները: ԵԱՏՄ կայացման գործում կարևորվել է տեղեկատվական քաղաքականության դերը: ԵԱՏՄ ինտեգրման գործընթացում ընդգծվել է Աբխազիայով անցնող երկաթուղու վերագործարկման, նոր արդյունաբերականացման նախագծի մշակման, ԵԱՏՄ երկրների առանձին տարածաշրջանների միջև ինտեգրման և կոոպերացման նշանակությունը:

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИНТЕГРАЦИИ РА В ЕАЭС

***Карен Григорян***

Резюме

В статье обсуждены вопросы внешнеторговой политики Евразийского экономического союза (ЕАЭС) с третьими странами, а также новый Таможенный кодекс ЕАЭС, платежи НДС, конкурентоспособность продукции. Отмечены явления, превышающие уровень инфляции, установленный ЕАЭС. Оценена важность роли информационной политики ЕАЭС. Проанализирована необходимость абхазской железной дороги в интеграции РА в ЕАЭС, представлено значение новой индустриализации и интеграции между регионами разных стран ЕАЭС.

## SOME ISSUES OF REPUBLIC OF ARMENIA INTEGRATION IN EAEU

*Karen Grigoryan*

Resume

The article discusses the foreign trade policy of the Eurasian Economic Union (EAEU) with third countries. The new Customs Code of the EAEU, VAT payments of exporters, and the competitiveness of products are also reviewed. Exceeding the inflation rate established by the EAEU is discussed. Importance of the role of information policy of the EAEU is stressed. The need for reopening Abkhazian railway in the integration of the Republic of Armenia in the EAEU is emphasized in the article along with the significance of new industrialization and cooperation/integration between regions of different countries of the EAEU.

# ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ-ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

***Հայկ Թորոսյան****

*Բանալի բառեր* ՝ՀՀ, ԵՄ, «Արևելյան գործընկերություն», Եվրոպական հարևանության քաղաքականություն, ճգնաժամերի կառավարման գործողություններ, խաղաղապահություն:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը ծանր քաղաքական և տնտեսական խնդիրների բախվեց: Տնտեսությունն ավերված էր, հսկայական գումարներ և ռեսուրսներ էին ծախսվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար, կոռուպցիան համատարած և համակարգային բնույթ էր կրում, իսկ հաստատութենական (ինստիտուցիոնալ) բարեփոխումները նոր էին մեկնարկում: Նորանկախ հանրապետությունը հայտնվել էր գլոբալ և խոշոր տարածաշրջանային դերակատարների պայքարի կիզակետում և, բարդ տնտեսական ու աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված, ստիպված էր վարել փոխլրացման քաղաքականություն:

Այդ բարդ աշխարհաքաղաքական խնդրի լուծմանն է ուղղված ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը՝ հիմնված «փոխլրացման» և «ներգրավվածության» սկզբունքների վրա, զարգացնելով հարաբերությունները տարածաշրջանային բոլոր դերակատարների և տարածաշրջանում շահագրգիռ պետությունների հետ: Առաջնորդվելով այս տեսլականով՝ ՀՀ արտաքին քաղաքականությունն ուղղված է տարածաշրջանային և միջազգային գործընթացներին ակտիվ ներգրավվածությանը[1]: Փոխլրացման քաղաքականությունն արտացոլված է ՌԴ և այլ գլոբալ ուժերի հետ հարաբերություններում: ՀՀ-ն, ունենալով խոր հարաբերություններ իր ռազմավարական դաշնակից և թիվ մեկ անվտանգային գործընկեր Ռուսաստանի հետ, զարգացնում է քաղաքական, սոցիալ-տնտեսա-

---

* Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու:

[1] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, 2007թ., http://www.mil.am/media/2015/07/827.pdf է. 19

կան հարաբերություններ արևմտյան ուժային կենտրոնների՝ ԱՄՆ-ի, ՆԱՏՕ և ԵՄ պետությունների հետ[1]:

Դեպի Եվրոպա զարգացման ուղին ընտրելով որպես արտաքին հարաբերությունների առաջնահերթություններից մեկը՝ Հայաստանն ակտիվորեն մասնակցել է ԵՄ առաջարկած՝ հարաբերությունները բարելավելու և եվրոպական ընտանիքին ինտեգրվելու ստանդարտների և պահանջների հաջորդական զարգացման ու իրականացման գործընթացներին: ՀՀ ներգրավվածությունը ԵՄ նախագծերին ներառում է Ազգային *TACIS*-ը[2], որին Հայաստանը մասնակցել է 1993 թվականից:

Ծրագիրն առաջարկվել էր ԵՄ-ի կողմից՝ միտված *TRACECA*[3] պետությունների միջև տնտեսական համագործակցության, առևտրային և տրանսպորտային կապերի խթանմանը: Այս տիրույթում ԵՄ-ն աջակցել է ՀՀ-ում իրականացվող ինստիտուցիոնալ, իրավական և վարչարարական բարեփոխումների գործընթացներին՝ մեղմացնելով անցումային շրջանի բացասական հետևանքները:

2004թ. ԵՄ-ը, ոգեշնչված իր պատմության մեջ խոշորագույն ընդլայնման գործընթացով, մշակեց քաղաքականության հետագա զարգացման նոր գործիք՝ Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ), որի միջոցով ԵՄ-ն ընդլայնեց ներկայությունը հարևան երկրներում, որի նպատակն էր խրախուսել այդ երկրներում տնտեսական և քաղաքական բարեփոխումները:

Թեև 2003թ. Եվրոպական հանձնաժողովը հարավկովկասյան երեք երկրներին դուրս թողեց նոր ստեղծվող ԵՀՔ-ից, քանի որ այդ ժամանակ նրանք դուրս էին ծրագրի աշխարհագրական շրջանակներից (2003թ. տարածաշրջանը չուներ ԵՄ-ի հետ որևէ ցամաքային կամ ծովային սահման), մեկ տարի անց՝ 2004թ., Եվրոպական միության դեպի արևելք ընդլայնման նոր փուլի և Վրաստանում տեղի ունեցած «Վարդերի հեղափոխության» հաշվառմամբ, ԵՄ-ը Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը ներառեց ԵՀՔ ծրագրում:

Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանների, ռուսական ռազմական օգնության և Ռուսաստանից ու Իրանից էներգիայի մատակարարման կախվածության պարագայում Հայաստանի համար ԵՀՔ-ն բավական ողջունելի նախաձեռնություն էր, որը կարող էր օգնել երկրին՝ դուրս գալ միջազգային հարաբերական մեկուսացումից:

[1] *Հ.Քոթանջյան,* «Երկխոսությունն ու ինտեգրումը՝ որպես ընդլայնված սևծովյան տարածաշրջանում կայունության և անվտանգության ապահովման հիմնասյուներ» թեմայով զեկուցում Հարվարդի Սևծովյան անվտանգության հարցերով գիտաժողովում, http://www.aravot.am/2013/12/11/413833/

[2] Տեխնիկական աջակցություն ԱՊՀ-ին: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ օգնելու համար ԱՊՀ անդամ երկրներին (ինչպես նաև Մոնղոլիային), ժողովրդավարական շուկայական ուղղվածությամբ տնտեսություններին անցման նպատակով:

[3] Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցք: Այս ծրագրում ներգրավված է Եվրամիության և Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի 14 պետություն:

Հայաստանի համար Եվրոպական հարևանության քաղաքականությունը դարձավ կարևոր խթան բարեփոխումների իրականացման, ՀՀ և ԵՄ օրենսդրության նորմերի ու ստանդարտների ներդաշնակեցման, զգալի ֆինանսական աջակցության ներգրավման, միջազգային հանրությանն ինտեգրվելու, ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակից և միջազգային մեկուսացումից դուրս գալու, շուկայական տնտեսության համակարգին հաջող անցման համար: Ինչպես նշում է Հ.Քոթանջյանը՝ ԵՀՔ-ն Հայաստանի համար կարևորվեց ոչ միայն տնտեսական ու պաշտպանական անվտանգության տեսանկյունից, այլև առավել ընդհանուր՝ հայեցակարգային առումով[1]:

ԵՀՔ մեկնարկից հետո Հայաստանի հարաբերությունները ԵՄ-ի հետ ինտենսիվորեն զարգացան՝ հասնելով «Արևելյան գործընկերության» (ԱլԳ)[2] ծրագրի փուլին, որին Հայաստանը, մասնակից դարձավ Վրաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ուկրաինայի և Մոլդովայի հետ միասին: ԱլԳ-ն ենթադրում էր ավելի խոր համագործակցություն տարածաշրջանի երկրների հետ, ընդհուպ մինչև ասոցացման համաձայնագրի կնքում: Այս ծրագրի շրջանակում Հայաստանն զգալի առաջընթաց ունեցավ և նույնիսկ ԵՄ որոշ պաշտոնյաների կողմից ճանաչվեց «Արևելյան գործընկերության» առաջատար[3]:

2009թ. «Արևելյան գործընկերության» ծրագրի մեկնարկից հետո ՀՀ-ԵՄ հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ: Այդ ծրագրի շրջանակներում 2010թ. հուլիսի 19-ին Երևանում մեկնարկեցին Հայաստան-ԵՄ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները, որոնք հաջողությամբ ավարտվեցին 2013թ. ամռանը: Սակայն 2013թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահի՝ Մաքսային միությանը ՀՀ միանալու հայտարարությունից հետո, նոյեմբերին կայացած «Արևելյան գործընկերության» գագաթաժողովի ընթացքում տեղի չունեցավ նախատեսված համաձայնագրի նախաստորագրումը: Տվյալ փուլում ՀՀ-ԵՄ հարաբերություններում առաջացավ անորոշություն, որը պահպանվեց ամբողջ 2014թ. ընթացքում:

[1] *Հ.Քոթանջյան,* Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան Ազգային Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008թ., էջ 119:

[2] Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացման նոր հարթակի՝ Արևելյան գործընկերության ստեղծումը մեկնարկեց 2009թ. մայիսի 7-ին Պրահայում, մոտ մեկ տարվա նախապատրաստական փուլից հետո: 2008թ. մարտին, երբ ԵՄ-ը հավանության արժանացրեց Եվրոպական միության հարավային անդամ պետությունների, հատկապես Ֆրանսիայի կողմից սատարվող Միջերկրածովյան միության նախաձեռնությունը, Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը հանդես եկավ ԵՄ արևելաեվրոպական հարևանների համար նմանատիպ հարթակ մշակելու առաջարկով: 2008թ. մայիսի 26-ին Լեհաստանի և Շվեդիայի ԱԳ նախարարներ Ռադոսլավ Սիկորսկին և Կարլ Բիլդտը Եվրոպական հանձնաժողովին ներկայացրին Արևելյան գործընկերության վերաբերյալ համատեղ առաջարկություն: Մանրամասն տե ս http://www.enpi-info.eu/library/content/polish-swedish-proposal-eastern-partnership

[3] Посол Польши в РА Здислав Рачиньски: Армения становится одним из лидеров программы ЕС «Восточное Партнерство», 03.05.2013, http://www.panorama. am/ru/politics/2013/05/03/rachinski/

Սակայն այս ժամանակահատվածում կողմերը փորձում էին գտնել համագործակցության այնպիսի ձևաչափ, որը չէր հակասի ՄՄ և ԵՏՄ շրջանակներում ՀՀ ստանձնած պարտականություններին[1]:

2015թ. մայիսին Ռիգայում կայացած «Արևելյան գործընկերության» գագաթաժողովի ընթացքում ԵՄ-ը ազդարարեց ՀՀ-ի հետ նոր համաձայնագրի վերաբերյալ բանակցությունների մեկնարկի մասին, ինչը տեղի ունեցավ նույն տարվա դեկտեմբերի 7-ին: Այս համատեքստում հարկ է հասկանալ, թե որոնք են Հայաստանի հետ նոր համաձայնագիր կնքելու ԵՄ շարժառիթները և ինչ հնարավորություններ են բացվում Հայաստանի համար՝ խորացնելու հարաբերությունները Եվրոպական միության հետ:

ԵՄ շահերը նախ հարկավոր է դիտարկել տարածաշրջանային համատեքստում: Հարավային Կովկասում ԵՄ-ն ունի և՛ աշխարհաքաղաքական, և՛ տնտեսական շահեր: Ինչպես արդեն նշվել է, ԵՄ-ը՝ որպես դերակատար Հարավային Կովկասում, ակտիվացրեց իր ներկայությունը 2004թ., Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանն ընդգրկելով Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ: Այս քաղաքականության նպատակն էր ամրագրել և հետագայում ընդլայնել ԵՄ ներկայությունը տարածաշրջանում, ինչը տեղի ունեցավ 2009թ. «Արևելյան գործընկերության» ծրագրի մեկնարկով:

Կարելի է ենթադրել, թե աշխարհաքաղաքական տեսանկյունից ԵՀՔ-ն և ԱլԳ-ն Եվրամիության համար դարձան գործիքներ հետխորհրդային տարածքում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը կանխարգելելու համար: Հետխորհրդային տարածքում ՌԴ ազդեցության վերականգնումը Ռուսաստանում հատկապես կարևորվեց Վ.Պուտինի իշխանության գալուց հետո, մասնավորապես ինստիտուցիոնալ մակարդակով առաջ մղվեցին եվրասիական ինտեգրացիայի մի շարք ծրագրեր, որոնց սկիզբը դրվեց 2000թ. հոկտեմբերի 10-ին Եվրասիական տնտեսական ընկերակցության ստեղծմամբ[2]:

Տարածաշրջանի պետությունները կարևոր են ԵՄ-ի համար պետական կառավարման համակարգում եվրոպական նորմերի և արժեքների տարածման առումով, ինչը երկարաժամկետ հեռանկարում կարող է թույլ տալ (մասնավորապես Հայաստանի պարագայում) թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը՝ ամրապնդելով ԵՄ դիրքերն «ընդհանուր հարևանությունում» ՌԴ-ի հետ աշխարհաքաղաքական պայքարում: Դրա վառ ապացույցն է ԵՄ որոշումը՝ ԵՏՄ-ին ՀՀ անդամակցությունից հետո ոչ միայն չնվազեցնել երկրին բարեփոխումներ

[1] Joint Declaration of the Eastern Partnership Summit, Vilnius, 28-29 November 2013, 17130/13 (OR. en) PRESSE 516, http://www.consilium.europa.eu/uedocs/cms_Data/docs/pressdata/EN/foraff/139765.pdf
[2] Договор об учреждении Евразийского экономического сообщества от 10 октября 2000 года, http://evrazes.com/docs/view/3

իրականացնելու համար տրամադրվող օժանդակությունը, այլև, հակառակը՝ այդ գումարն ավելացնելու պատրաստակամությունը[1]:

ԵՄ տնտեսական շահերը Հարավային Կովկասում սերտորեն կապված են թե՛ էներգետիկ առաջնահերթությունների, թե՛ կարևոր տրանսպորտային միջանցքների ստեղծման հետ, որոնք կապահովեն ԵՄ կապն ասիական շուկայի հետ: Ինչպես ամրագրված է ԵՄ էներգետիկ անվտանգության ռազմավարության մեջ՝ էներգետիկ անկախության ապահովումը ԵՄ-ի համար առաջնահերթություն է[2]: Ավելին, էներգետիկ անվտանգությունը սերտորեն միահյուսված է ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության առաջնահերթությունների հետ: Վառելիքի մատակարարման աղբյուրների և տարանցման ուղիների տարատեսակումը ԵՄ-ի համար մեծ կարևորություն ունի: ԵՄ-ը հատուկ ուշադրություն է դարձնում նավթի, բնական գազի խողովակաշարերի և հարակից արտադրական ու տրանսպորտային ենթակառուցվածքների անվտանգությանը՝ համատեղելով էներգետիկ քաղաքականության և արտաքին ու անվտանգության քաղաքականության գործիքները[3]:

Ածխաջրածինների, առաջին հերթին՝ բնական գազի մատակարարման հնարավոր այլընտրանքային ուղիները կարևոր են ԵՄ-ի համար Ռուսաստանից կախվածության նվազման առումով: Այս խնդիրը ԵՄ-ը փորձում է լուծել նաև Կասպից ծովի ավազանի ածխաջրածիններ արտադրող պետություններից բնական գազի ներմուծման ծրագրերի իրականացման քաղաքականությամբ, որտեղ մեծ դեր է հատկացվում Ադրբեջանին և Թուրքմենստանին[4]: Ադրբեջանական գազը նախատեսվում է մատակարարել եվրոպական շուկա Վրաստանի և Թուրքիայի տարածքներով՝ արդեն գործող Հարավկովկասյան խողովակաշարի (*SCP*), ինչպես նաև կառուցվելիք Տրանսանատոլիական (*TANAP*) և Տրանսադրիատիկ (*TAP*) գազատարների միջոցով:

2015թ. դեկտեմբերի 6-ին Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դավութօղլուն Բաքու կատարած այցի ժամանակ հայտարարել է, որ Ադրբեջանն ու Թուրքիան կարագացնեն *TANAP* կառուցման շինարարական աշխատանքները և այն կշա-

[1] Cooperation Council EU-Armenia: good progress towards a deepened cooperation. 20.01.2015 Press release 13/15, http://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2015/01/cooperation-council-eu-armenia-good-progress-towards-deepened-cooperation/

[2] Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy. Communication from the Commission to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions. 10.11.2010,
http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?qid=1409650806265&uri=CELEX:52010DC0639

[3] Նույն տեղում:

[4] A Framework Strategy for a Resilient Energy Union with a Forward-Looking Climate Change Policy. Brussels, 25.02.2015, COM(2015) 80 final, http://ec.europa.eu/priorities/energy-union/docs/energyunion_en.pdf, p. 4.

հագործվի նախատեսված 2018 թվականից շուտ՝ թույլ տալով Ադրբեջանին տարեկան մոտ 10 մլրդ մ³ գազ մատակարարել Եվրոպա[1]:

Թեև ՀՀ-ն չունի ածխաջրածնային պաշարներ, նրա դերը կարևոր է Հարավային Կովկասով դրանց անխոչընդոտ տեղափոխման հարցում, քանի որ Ադրբեջանից Վրաստան և Թուրքիա ձգվող հիմնական բոլոր խողովակաշարերն անցնում են ԼՂՀ սահմաններից ոչ հեռու: 2016թ. ապրիլյան իրադարձությունները ևս մեկ անգամ մատնանշեցին այս տարածաշրջանում անվտանգության ապահովման և խաղաղության պահպանման կարևորությունը:

Հարկ է նշել, որ երբ ԵՄ-ը նախաձեռնեց Ասոցացման համաձայնագրի բանակցություններն «Արևելյան գործընկերության» երկրների հետ, աշխարհաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում այլ էր, դեռ չէր սկսվել ուկրաինական ճգնաժամը, որը Ռուսաստան-Արևմուտք հարաբերություններում լուրջ հակասություններ առաջացրեց՝ հանգեցնելով Արևմուտքի կողմից ՌԴ-ի հանդեպ պատժամիջոցների կիրառմանը: Եվ այնուամենայնիվ, Հարավային Կովկասը ԵՄ-ի համար շարունակում է մնալ կարևոր տարածաշրջան, մանավանդ վերջին տարիներին միջազգային ահաբեկչության վտանգի բարձրացման համատեքստում, նկատի ունենալով տարածաշրջանի աշխարհագրական մերձավորությունը Մերձավոր Արևելքին:

2015թ. նոյեմբերին Ռուսաստանի և Ֆրանսիայի դեմ իրականացված ահաբեկչական գործողությունների ֆոնին ԵՄ-ի կողմից ավելի է կարևորվում անվտանգության ոլորտում հարևանների հետ համագործակցության խորացման հարցը, ինչն ընդգծվել է Եվրոպական հանձնաժողովի 2015թ. նոյեմբերի 18-ին ընդունած Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայման վերաբերյալ համատեղ հաղորդագրության մեջ: Համաձայն այդ հաղորդագրության՝ անվտանգությանը հատկացվող ուշադրությունը կբացի ԵՀՔ-ի ներքո համագործակցության նոր ոլորտների լայն տիրույթ: Համագործակցությունը կարող է ներառել անվտանգության ոլորտի բարեփոխում, սահմանների պաշտպանություն, ահաբեկչության և արմատականության դեմ պայքար ու ճգնաժամերի կառավարում[2]:

Ներկայում ԵՄ-ն ակտիվ մասնակցում է միջազգային խաղաղության և անվտանգության հաստատման ու պահպանման գործին՝ ԵՄ Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության շրջանակում իրականացնելով շուրջ 20 խաղաղապահ առաքելություններ Ասիայում, Եվրոպայում և Աֆրիկայում,

[1] Турция и Азербайджан ускорят строительство Трансанатолийского газопровода – Давутоглу. 03.12.2015, http://www.trend.az/business/energy/2464793.html

[2] Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայում: Բրյուսել, 18.11.2015, http://eeas.europa.eu/enp/documents/2015/151118_joint-communication_review-of-the-enp_hy.pdf է. 19

ինչպես նաև Միջերկրական ծովում և Հնդկական օվկիանոսում[1]: Հարկ է նկատել, որ այս գործողությունները միտված են ոչ միայն երրորդ երկրներում կայունության ապահովմանը, այլ նաև ԵՄ-ի համար միջոց են ահաբեկչության դեմ պայքարում[2]:

Այդ առաքելություններին իրենց ներդրումն ունեն «Արևելյան գործընկերության» ծրագրին մասնակցող Վրաստանը, Ուկրաինան և Մոլդովան, որոնք առանձին փաստաթուղթ են կնքել ԵՄ-ի հետ (Ուկրաինան՝ 2005թ.) խաղաղապահ առաքելություններին իրենց մասնակցության վերաբերյալ, ինչն այդ երկրներում ընկալվում է որպես քաղաքակիրթ աշխարհի մաս լինելու ապացույց և ԵՄ-ին ինտեգրվելու ևս մեկ քայլ[3]: Այս համատեքստում ուշագրավ է, որ 2016թ. մայիսի 30-ին Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի նիստում նախագահ Գեորգի Մարգվելաշվիլուն առաջարկվեց մեծացնել Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում առաքելություն իրականացնող վրաստանցի զինծառայողների թիվը՝ նրանց քանակը հինգից հասցնելով դասակի չափի[4]:

Համաձայն Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայման վերաբերյալ համատեղ հաղորդագրության՝ ԵՄ-ը պետք է խթանի գործընկեր երկրների մասնակցությունն Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության առաքելություններին և աշխատանքներին, ԵՄ *Battlegroup* ստորաբաժանումներին (մարտական խմբեր), դրանց միավորումների համապատասխան ծրագրերին և գործակալություններին, ինչպիսիք են Եվրոպական պաշտպանական գործակալությունը և Անվտանգության ու պաշտպանության եվրոպական քոլեջը: ԵՄ-ը հետամուտ կլինի գործընկեր երկրների հետ անվտանգության և պաշտպանության հարցերով երկխոսությունների ձևավորմանը և համապատասխան պաշտպանության քոլեջների դասընթացներին գործընկեր երկրների պաշտոնատար անձանց ու ծառայողների մասնակցության դյուրացմանը[5]:

Վերոնշյալը վկայում է, որ ԵՄ խաղաղապահ գործողություններին մասնակցելը ՀՀ-ին հնարավորություն կտա ոչ միայն խորացնելԵՄ-ի հետ համագործակցությունը նոր ոլորտում, բարձրացնել միջազգային հեղինակությունը և վարկանիշը, ամրապնդել իր խաղաղապահ կարողությունները, բարձրացնել ՀՀ գործընկեր պետությունների զինվորականների հետ փոխգործունակության և

[1] Overview of the current EU mission and operations, http://eeas.europa.eu/csdp/missions-and-operations/index_en.htm

[2] A Secure Europe in a Better World. European Security Strategy. Brussels, 12.12.2003, https://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf

[3] Georgian troops prepare for EU mission in Africa. Agenda.ge, 9 Dec. 2014, http://agenda.ge/news/26146/eng

[4] The National Security Council was held at the Palace of the President of Georgia. 30.05.2016, https://www.president.gov.ge/en/PressOffice/News/?p=10351

[5] Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայում: Բրյուսել, 18.11.2015, http://eeas.europa.eu/enp/documents/2015/151118_joint-communication_review-of-the-enp_hy.pdf է. 14

փոխհամատեղելիության մակարդակը, այլև մեծացնել մեր խաղաղապահների՝ միջազգային ռազմական կրթություն ստանալու հնարավորությունները[1]:

Հարկ է նշել, որ այս ոլորտում համագործակցությունը որևէ կերպ չի խոչընդոտում ՀՀ և ՌԴ ռազմավարական դաշնակցությանը և ՀԱՊԿ շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորություններին, քանի որ խաղաղապահության ոլորտում ՀՀ-ն երկար տարիներ շատ ավելի բարձր մակարդակով համագործակցում է ՆԱՏՕ-ի հետ, և Ռուսաստանն ինքն էլ ժամանակին մասնակցություն է ունեցել ԵՄ-ի կողմից իրականացվող խաղաղապահ գործողություններին[2]:

ՀՀ հաջող մասնակցությունը ՄԱԿ և ՆԱՏՕ խաղաղապահ գործողություններին, այդ կառույցների ներկայացուցիչների բարձր գնահատականները ՀՀ խաղաղապահ բրիգադի գործունեությանը[3], ՀՀ-ի՝ որպես խաղաղարար երկրի համբավի ձեռքբերումը[4], ինչպես նաև 2015թ. աշնանը Հայաստանում բարձր մակարդակով «Խաղաղապահ գործողություններին մարտահրավերների միջազգային ֆորումի» ամենամյա համաժողովի անցկացումը (որը խաղաղապահության բնագավառում միջազգային ամենահեղինակավոր ֆորումն է, և որի անցկացման կարևորությունը Հայաստանում ընդգծվել էր նաև ՄԱԿ գլխավոր քարտուղարի կողմից[5]) կարող են նաև հետաքրքրել ԵՄ-ին՝ ՀՀ խաղաղապահ ուժերն ընդգրկելու ճգնաժամերի կառավարման գործողություններում, խաղաղապահության ոլորտում (Աֆղանստան, Կոսովո, Իրաք և այլն): ԵՄ-ի հետ համագործակցությունը կարող է միայն լրացնել և ամրապնդել խաղաղապահության ոլորտում ՀՀ ձեռք բերած հաջողությունները: Բացի այդ, ՀՀ-ն՝ լինելով ՀԱՊԿ հիմնադիր անդամ, կարող է իր կուտակած փորձը ներդնել այդ կառույցի խաղաղապահ կարողությունների զարգացման և ԵՄ-ի ու Ռուսաստանի միջև երկխոսության հաստատման գործում:

Այսպիսով՝ ԵՄ-ը Հարավային Կովկասում ունի աշխարհաքաղաքական շահեր, որոնք կապված են էներգետիկ և տրանսպորտային անվտանգության ապահովման հետ: ՀՀ-ն կարևոր տեղ է զբաղեցնում տարածաշրջանում կայունության ապահովման գործում: Եվրամիությունը ձեռնամուխ է եղել վերանայելու Եվրոպական հարևանության քաղաքականությունը, որի շրջանակներում ավելի

[1] Միջազգային կրթական հնարավորություններ, http://www.mil.am/hy/institutions/211
[2] The Russia-EU cooperation in the military field, http://www.russianmission.eu/en/crisis-management
[3] Նախագահ Սերժ Սարգսյանի և ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի համատեղ ճեպազրույցը: 06.09.2012, http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2012/09/06/President-Serzh-Sargsyan-Anders-Fogh-Rasmussen-NATO-press-conference/
[4] *Հ.Քոթանջյան,* Խաղաղապահության ոլորտում ՀԱՊԿ-ի հեռանկարները: Հունիս 28, 2013, http://razm.info/13827
[5] Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Ամերիկայի Միացյալ Նահանգներ: 28.09.2015 - 01.10.2015, http://www.president.am/hy/foreign-visits/item/2015/09/28/Working-visit-of-President-Serzh-Sargsyan-to-USA/

մեծ ուշադրություն է դարձվելու գործընկեր երկրների հետ անվտանգության ոլորտում համագործակցության խորացմանը: ԵՄ-ի կողմից ՀՀ-ԵՄ նոր համաձայնագրի վերաբերյալ բանակցությունների մեկնարկը, երկու կողմերի հայտարարությունները հարաբերությունների խորացման պատրաստակամության վերաբերյալ, խաղաղապահ գործողություններին ՀՀ մասնակցության չհակասելը ԵՏՄ շրջանակներում երկրի ստանձնած պարտավորություններին թույլ են տալիս սկսել բանակցություններ ԵՄ-ի հետ ճգնաժամերի կառավարման գործողություններին Հայաստանի մասնակցության վերաբերյալ: Դա ՀՀ-ին հնարավորություն կընձեռի ընդլայնելու խաղաղապահ գործողությունների աշխարհագրությունը, նշանակալիորեն բարձրացնել ՀՀ հեղինակությունը և ամրապնդել ՀՀ համագործակցային անվտանգության ռեսուրսը, լրացուցիչ խթան հանդիսանալ ՀՀ-ԵՄ հարաբերությունների խորացման հարցում, ինչպես նաև ներդրում ունենալ ահաբեկչության դեմ համաշխարհային պայքարում:

***Հունիս, 2016թ.***

## ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ-ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

***Հայկ Թորոսյան***

Ամփոփագիր

Մաքսային միությանը ՀՀ անդամակցության մասին 2013թ. սեպտեմբերի 3-ի որոշումը հանգեցրեց մի շարք ոլորտներում ՀՀ-ԵՄ համագործակցության սառեցմանը, սակայն հետագայում և՛ ԵՄ-ը, և՛ ՀՀ-ն ցանկություն հայտնեցին գտնել հարաբերությունների զարգացման օպտիմալ տարբերակներ, որոնք չէին հակասի Մաքսային միության, իսկ հետագայում Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորություններին: ՀՀ-ի հետ նոր համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսելու վերաբերյալ Եվրահանձնաժողովին մանդատ տրամադրելու ԵՄ Արտաքին գործերի խորհրդի 2015թ. հոկտեմբերի 12-ի որոշումը և բանակցությունների մեկնարկը դեկտեմբերի 7-ին, 2015թ. մարտի 4-ին մեկնարկած Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայման գործընթացը հայկական կողմին հնարավորություն են տալիս առաջ քաշել ԵՄ-ի հետ նոր համագործակցության հնարավորության գաղափարը:

## О ВОЗМОЖНОСТИ УГЛУБЛЕНИЯ ОТНОШЕНИЙ РА-ЕС В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ

*Айк Торосян*

Резюме

Принятое 3 сентября 2013г. решение о вступлении РА в Таможенный союз привело к охлаждению взаимоотношений РА-ЕС в ряде сфер, но в дальнейшем и ЕС, и РА выразили желание найти оптимальные варианты развития взаимоотношений, которые не будут противоречить обязательствам, взятым Арменией на себя в рамках Таможенного союза, а затем и Евразийского экономического союза (ЕЭС). Решение Совета по внешним делам ЕС от 12 октября 2015г. о предоставлении Еврокомиссии мандата на инициирование переговоров с РА относительно нового соглашения и начало переговоров 7 декабря 2015г., а также стартовавший 4 марта 2015г. процесс пересмотра политики европейского добрососедства позволяют армянской стороне выдвинуть идею о возможности нового формата сотрудничества с ЕС.

## ABOUT THE OPPORTUNITIES TO DEEPEN ARMENIA-EU RELATIONS IN THE AREA OF SECURITY

*Hayk Torosyan*

Resume

The decision about Armenia's membership in the Customs Union on September 3, 2013 led to suspension of Armenia-EU cooperation in a number of areas. However, both EU and Republic of Armenia later expressed a desire to find optimal options for developing relations that would not contradict the obligations that Armenia has committed to under the Customs Union and later the Eurasian Economic Union (EAEU). The authorization provided to European Commission by the Foreign Affairs Council on October 12, 2015 to negotiate a new agreement with Armenia, the start of such negotiations on December 7, 2015 and the process of revising the European Neighborhood Policy that commenced on March 4, 2015 provide an opportunity to Armenia for advancing the idea of new cooperation with the EU.

# ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

***Ստեփան Ստեփանյան****

*Բանալի բառեր* ՝ որոշման ընդունում, բանակցություններ, օբյեկտիվ ցուցանիշներ, սուբյեկտիվ ցուցանիշներ, հոգեբանական խոչընդոտներ:

Որոշման ընդունումը յուրաքանչյուր բանակցային գործընթացի կարևոր բաղադրիչներից է: Բանակցությունների այլ փուլերի համեմատ որոշման ընդունման փուլը դեռևս լիարժեքորեն ստանդարտացված ու ալգորիթմացված չէ: Այս փուլում կարևորվում է սուբյեկտիվ հոգեբանական, երբեմն նույնիսկ կռահողական գործոնների դերը [1-3]:

Ներկայում գոյություն ունի որոշման ընդունման երկու մոտեցում՝ նորմատիվ և դեսկրիպտիվ: Ընդ որում, առաջինի դեպքում շեշտը դրվում է որոշման ընդունման մարտավարության և միջոցների վրա՝ ըստ ալգորիթմի, իսկ դեսկրիպտիվ մոտեցումներում հաշվի են առնվում սուբյեկտիվ, հոգեբանական գործոնները, և շեշտը դրվում է որոշման ընդունման ներքին կառուցվածքի վրա [4]:

Որոշման ընդունման արդյունավետությունն ընդհանուր առմամբ պայմանավորված է վերը նշված երկու մոտեցումներն ինտեգրելու և համադրելու կարողությամբ:

Տարբեր մասնագետներ առաջարկում են բանակցությունների ընթացքում որոշման ընդունման տարբեր սկզբունքներ:

Ըստ Ռ.Դոուսոնի՝ որոշման ընդունման մեջ կարևորվում են հանգիստ ընկալելու անորոշությունը, բանակցությունների ընթացքում լսելու, ինչպես նաև ասվածը համակողմանիորեն գնահատելու կարողությունը, կարծրատիպերից խուսափելը, ճկունության դրսևորումը, դժվարությունների և իրադրության ռեալ գնահատումը, ինչպես նաև փորձագետների և գործընկերների կարծիքի նկատմամբ ոչ միանշանակ վստահությունը [4]:

Ըստ Մ.Ռուբինշտեյնի՝ որոշում կայացնելուց առաջ անհրաժեշտ է խնդիրը տեսնել ամբողջությամբ: Ըստ հեղինակի՝ պետք չէ որոշում կայացնել առանց բոլոր այլընտրանքները դիտարկելու: Մ.Ռուբինշտեյնը կարևորում է նաև խնդրի դի-

* ՀՀ Պետական կառավարման ակադեմիա, կառավարման հոգեբանության ամբիոն:

տարկումը տարբեր տեսանկյուններից, նման մոդելի հետ համեմատելը, ինչպես նաև սեփական ապրումներին և կռահողականությանը վստահելը [5]: Ա.Կարպովի աշխատանքներում նշվում է որոշման ընդունման հոգեբանական ֆենոմենոլոգիայի հիմնախնդիրը: Այն արտաքինից դիտարկվող վարքային դրսևորումների համախումբ է, որոնք ազդում են բանակցությունների ընթացքում որոշման մշակման գործընթացի, կառուցվածքի և արդյունավետության վրա [6-8]:

Ռ.Մոկշանցևն իր «Բանակցությունների հոգեբանություն» գիտական աշխատությունում ներկայացնում է որոշման ընդունման հոգեբանական երևութաբանությունը: «Հոգեբանական երևութաբանություն» եզրույթը նշանակում է արտաքնապես դրսևորվող վարքային երևույթների համախումբ, որոնք մեծ դերակատարություն ունեն որոշումների մշակման և ընդունման գործընթացում և իրապես ներազդում են որոշումների մշակման բուն գործընթացի վրա, ինչպես նաև դրանց արդյունավետության և կառուցվածքի վրա բանակցությունների ընթացքում: Ըստ Ռ.Մոկշանցևի՝ որոշումների ընդունման գործընթացի երևութաբանական պատկերը բարդ է և հակասական: Ընդհանուր առմամբ այն բաժանվում է անհատական և խմբային որոշումների ընդունման հատուկ երևույթների [3]:

*Անհատական որոշման ընդունման երևույթների* թվին են դասվում՝

- ինտերցիոն էֆեկտ կամ առաջին տարբերակի ինքնահաստատման երևույթ, որի էությունը որոշման ընդունման ընթացքում առաջին ձևակերպված տարբերակի նշանակալիության գերագնահատման սուբյեկտիվ միտումն է, ինչպես նաև այն, որ յուրաքանչյուր հաջորդ տարբերակ դիտարկվում է առաջինի տեսանկյունից,
- իմացական կոնսերվատիզիմի էֆեկտ, որի էությունն օբյեկտիվորեն առավել ճիշտ այլընտրանքի նշանակալիության նվազեցման հստակ սուբյեկտիվ միտումն է,
- ռադիկալիզմի էֆեկտ, որը հակադրվում է կոնսերվատիզմի էֆեկտին,
- պատահական իրադարձությունների քվազիկարգավորման պատրանքի երևույթ, երբ բանակցությունների մասնակիցն իրականում պատահական իրադարձությունները դիտարկում է որպես ոչ պատահական, այդ երևույթների մեջ նունիսկ նա հայտնաբերում է իր համար ոչ հայտնի օրինաչափություններ և մեխանիզմներ,
- հավանականությունների հավասարեցման սկզբունք, որը դրսևորվում է այս կամ այն իրադարձությունների հայտնվելու տարբեր հավանականության հավասարեցման սուբյեկտիվ հակվածությամբ,
- հավանական ձևախախտման երևույթը, որը դրսևորվում է առկա տարբերությունների հիպերտրոֆիայի ձևով, այսինքն՝ օբյեկտիվորեն առավել

հնարավոր իրադարձություններին վերագրվում է առավել մեծ սուբյեկտիվ հավանականություն, իսկ օբյեկտիվորեն ավելի քիչ հավանական իրադարձություններին՝ սուբյեկտիվ ավելի քիչ հավանականություն,

- սխալ պատճառի երևույթ, որի նշանակությունը հետևյալն է. եթե որևէ իրադարձություն նախորդում է ըստ ժամանակի իմաստային առումով կապ չունեցող մեկ այլ իրադարձության, ապա այն դիտարկվում է որպես դրա պատճառ, այսինքն՝ «եթե դրանից հետո է, ապա դրա պատճառով է»,
- պատրանքային համահարաբերակցման երևույթ, որը ենթադրում է երկու արտաքուստ նման, բայց իրար հետ կապ չունեցող իրադարձությունները որպես փոխկապված իրադարձություններ դիտարկելը,
- ընտրության մեջ ռեակտիվ կերպով հակադրվելու երևույթ, որի ժամանակ ուշադրությունը կենտրոնացվում է որոշման ընդունման արգելված այլընտրանքի վրա. այս երևույթի պատճառ է հանդիսանում սուբյեկտի գործողությունների ազատության սահմանափակմանն ուղղված հզոր բացասական հակազդումը,
- հակառակ մտածողության երևույթ, որի ժամանակ սուբյեկտը ենթադրում է, որ անցյալում նրան առավել ճիշտ էր թվում հենց այն այլընտրանքը, որը հետագայում էլ տեղի է ունեցել: Նման երևույթը հանգեցնում է ինքնագնահատականի մակարդակի ոչ ադեկվատ բարձրացմանը [3]:

*Խմբային որոշումները* բնութագրող երևույթների թվին են դասվում՝

- ռիսկի դրական տեղաշարժի երևույթ, որի էությունն այն է, որ խմբային որոշումները բնութագրվում են առավել մեծ ռիսկայնությամբ, քան անհատական որոշումները,
- պատասխանատվության դիֆուզիա, որը ենթադրում է պատասխանատվության բաժանումը խմբի բոլոր անդամների միջև և, հետևաբար յուրաքանչյուրի սխալի փոքր բաժին, ինչի հետևանքով էլ խմբի անդամները հակված են մեծ ռիսկ պարունակող որոշումներ ընդունելու,
- ռիսկի բևեռացման երևույթ, որի ժամանակ ղեկավարները սովորաբար հակված են ռիսկի մինիմիզացմանը, հակառակ ենթակաների, որոնք հակված են ռիսկի մաքսիմիզացմանը, այսինքն՝ ռիսկի աստիճանը պայմանավորված է խմբում հիերարխիկ կարգավիճակով,
- խմբային մտածողության երևույթը բնութագրվում է խմբի մեջ ներառված անձանց մտածողության ձևախախտումներով, որոնք դրսևորվում են չափազանց բարձր մակարդակի լավատեսության և ռիսկի հակվածության արտահայտվածության ձևով, ինչը պայմանավորված է անխոցելիության պատրանքով,

- դերային ֆասիլիտացիայի երևույթ, որի էությունը հետևյալն է. որոշակի սոցիալական դերի ստանձնումը ընդհանուր առմամբ ձերբազատում է նրան կայացրած որոշումների համար պատասխանատվությունից,
- ձեռքբերովի դիսոնանսի երևույթի մեխանիզմը հետևյալն է. խմբի յուրաքանչյուր անդամ որոշման մշակման փուլում (մեծ աշխատանքային փորձով խմբերում նաև մինչև որոշման ընդունման փուլը) գիտակցում է սեփական հավակնությունների իրագործման անհնարինությունը: Այդ դիրքորոշումը հետագայում ամրապնդվում է, որն էլ իր հերթին որոշման ընդունման ժամանակ սուբյեկտի ակտիվության էական նվազեցման պատճառ է դառնում,
- ադեկվատության գնահատման անզուգաչափության երևույթի էությունը սեփական պնդումների գերագնահատումն է, իսկ խմբի մյուս անդամների պնդումների թերագնահատումը,
- ծավալի էֆեկտ՝ շատ մեծ և շատ փոքր խմբերում որոշման ընդունման արդյունավետությունը բնութագրվում է ցածր արդյունավետությամբ,
- խմբի կազմի էֆեկտ. հայտնի է, որ ամենաարդյունավետ խմբերը շատ թե քիչ տարածին խմբերն են ըստ տարբեր չափանիշների՝ սեռի, տարիքի, մասնագիտության, մասնագիտական փորձի, սոցիալական կարգավիճակի, կրթության և այլն: Դրա հետ մեկտեղ, հետերոգենության բարձր աստիճանը նույնպես բացասական գործոն է որոշման ընդունման ժամանակ:

Խմբային որոշումների կայացման գործում, բացի վերոնշյալ երևույթներից, մեծ նշանակություն ունեն նաև տվյալ խմբի առաջնորդի ընդունած որոշումների նկատմամբ չափազանց մեծ վստահությունը, խմբի որոշ ոչ կոմպետենտ անդամների ապակառուցողական վարքը, որն արտահայտվում է պասիվության ձևով, խմբային բևեռացումը ռադիկալիստների և կոնֆորմիստների և այլն [3]:

Այսպիսով, ըստ վերը ներկայացված նյութի վերլուծության արդյունքների՝ կարելի է եզրահանգել, որ բոլոր դիտարկված երևույթները փոխկապված և փոխպայմանավորված են ու կարող են ոչ միայն փոխել իրենց արտահայտվածության աստիճանը, այլև իրենց ուղղվածությունը, իմաստը: Դրանք բոլորը բանակցությունների ընթացքում որոշման ընդունման գործընթացների մեխանիզմներն են:

Բանակցությունների վարման ժամանակ որոշման ընդունման գործընթացում կարող են առկա լինել նաև որոշակի հոգեբանական խոչընդոտներ և վարքային թակարդներ, որոնց չիմացությունը կարող է հանգեցնել այդ գործընթացում սխալների դրսևորմանը [3]:

Հոգեբանական խոչընդոտների թվին են պատկանում շտապողականությունը, հուզական դրդվածությունը, դանդաղկոտությունը, չափազանց ինքնա-

վստահությունը, ներդրման թակարդը, հետաձգման թակարդը և այլն: Հատկանշական է, որ կախված որոշում ընդունող սուբյեկտի անձնային առանձնահատկություններից՝ բանակցությունների ընթացքում կարող են առաջանալ որոշակի խոչընդոտներ և թակարդներ [3]:

Այդ թակարդներից և խոչընդոտներից խուսափելու համար անհրաժեշտ է որոշում կայացնելուց առաջ գնահատել դրանց սահմաններն ու հետևանքները, ինչպես նաև հիմնվել ռացիոնալ կանխատեսման, փորձի, հավանական հետևանքների վերլուծության վրա՝ անկախ նախկին ներդրումների փաստից:

Բանակցությունների վարման ժամանակ որոշումների ընդունման վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև շահագրգիռ կողմերի տարբեր մտայնությունը և մտածողությունը: Ըստ Ու.Յուրի և Ռ.Ֆիշերի՝ բանակցությունների ժամանակ տարաձայնություններն առաջանում են այն դեպքում, երբ կողմերի մտքի ընթացքը չի համընկնում միմյանց հետ [9]: Բանակցությունները կարող են բացասական ավարտ ունենալ նաև այն դեպքում, երբ կողմերից մեկը փորձում է ստեղծված խնդիրների համար պատասխանատվությունը վերագրել մյուս կողմին: Նույնիսկ եթե դա նրան հաջողվում է, ապա ընդդիմախոսը պաշտպանական դիրք է զբաղեցնում, ինչն էլ իր հերթին որոշման ընդունման արդյունավետության վրա բացասական ազդեցություն է գործում [4]:

Ուստի, կարելի է եզրակացնել, որ բանակցությունների ընթացքում որոշման ընդունման արդյունավետության վրա էական ազդեցություն է գործում բանակցությունների վարման մարտավարությունը: Այն ենթադրում է որոշակի հոգեբանական առանձնահատկությունների համախումբ:

Բանակցային գործընթացում որոշումների ընդունման վրա արտաքին և ներքին նախադրյալների ազդեցության ուսումնասիրությունն էական նշանակալիություն ունի կառավարչական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման գործում, երբ յուրաքանչյուր իրավիճակ յուրօրինակ է և չունի նախօրոք ծրագրավորված ալգորիթմային լուծում:

Արդի կառավարչական պարադիգմը ենթադրում է, որ արդյունավետ կառավարման համակարգերն իրենց զարգացման ընթացքում պետք է հիմնվեն գիտական կանխատեսման վրա: Հայտնի է, որ տարբեր համակարգերի, այդ թվում նաև մարդկային գործունեության արդյունավետ կառավարումը հնարավոր չէ առանց նպատակին հասնելու խոչընդոտների և հետևանքների կանխատեսմանը: Ըստ Սկիդանովի (2003)՝ «կառավարել՝ նշանակում է կանխատեսել»: Այս բանաձևը վերաբերում է կառավարման բոլոր օղակներին և պրոֆիլներին [10]: Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր կառավարչական գիտությունները փոխկապակցված են, իսկ նրանց կոնկրետ

անվանումները համապատասխանում են այն գործառույթներին, որոնք կատարվում են կառավարչական գործունեության ընթացքում: Որոշումների ընդունումը՝ որպես կառավարչական գործունեության կարևոր գործառույթ, աշխատանքի ընթացքում կազմակերպչական հակազդում է ի հայտ եկող խնդիրներին [11]: Ընդունված որոշումը ինչպես մեկ անձի, այնպես էլ սոցիալական խմբերի վարքի ունիվերսալ ձև է, որը բնորոշվում է մարդկային գործունեության գիտակցությամբ և նպատակաուղղվածությամբ:

Ընդունված որոշումների արդյունավետության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է օբյեկտիվորեն գնահատել կատարողների փորձն ու պրոֆեսիոնալիզմը, մոտիվացնել իրականացնողներին դեպի կառավարչական որոշումների արդյունավետ կատարումը, ինչպես նաև խստագույնս կատարել որոշման իրագործման կազմակերպչական-տեխնիկական միջոցառումների ծրագիրը:

Յուրաքանչյուր կառավարչական որոշում ունի իր ուրույն հետևանքը, ուստի յուրաքանչյուր կառավարչական գործունեության նպատակն է այնպիսի մեթոդների, միջոցների և գործիքների կիրառումը, որոնք կարող են նպաստել կոնկրետ պայմաններում օպտիմալ արդյունքի նվաճմանը [12]:

Այսպիսով՝ կառավարչական որոշումների ընդունման առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև յուրաքանչյուր որոշման կայացում պահանաջող իրավիճակ իր բնույթով և ընթացքով յուրահատուկ գործընթաց է, այդուհանդերձ, հնարավոր է կիրառել համարժեք մարտավարություն, որը հնարավորինս կնվազեցնի բացասական ելքի հավանականությունը: Միևնույն ժամանակ, մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ բանակցային գործընթացում, այսինքն՝ անորոշության պայմաններում որոշումների ընդունման արդյունավետությունը մեծապես կախված է ոչ միայն որոշում ընդունող անձի գիտելիքներից, փորձից, այլև նրա անձնային առանձնահատկություններից, դրանց զարգացման աստիճանից և համախմբից:

***Հունիս, 2016թ.***

## Աղբյուրներ և գրականություն


1. *Մարգարյան Վ.Հ., Կարապետյան Մ.Ս., Ավետիսյան Վ.Պ., Պողոսյան Բ.Պ., Բաղդասարյան Կ.Կ.,* Հայաստանի Հանրապետության պաշտպանական կրթության և կադրերի տեղաբաշխման համակարգի զարգացման ռազմավարության հիմունքները // «Հայկական բանակ», 2010, հ. 1, էջ 36-47:
2. *Մարգարյան Վ.Հ.,* Պաշտպանական ոլորտում կադրերի հոգեբանական մասնագիտական ընտրազատման որոշ հարցեր // «Հայկական բանակ», 2012, հ. 3, էջ 56-60:
3. *Мокшанцев Р.И.,* Психология переговоров //Учеб. пособие, М., ИНФРА-М; Новосибирск, 2002, 352 с.
4. *Доусон Р.,* Уверенно принимать решения / Пер. с анг.: М., ЮНИТИ, 1996, 255 с.
5. *Рубинштейн С.Л.,* Основы общей психологии, СПб, Питер, 1999, 720 с.

6. *Карпов А.В.,* Процессы принятия решений в структуре управленческой деятельности, «Психологический журнал», т. 21, 2000, №1, сс. 63-77.
7. *Карпов А.В.,* Психологический анализ процессов принятия решения в деятельности: учебное пособие, Ярославль, ЯрГУ, 1985, 80 с.
8. *Карпов А.В., Скитяева И.М.,* Понятия метакогнитивных процессов, М., ИП РАН, 2005, 352 с.
9. Модели и методы управления персоналом: Российско-британское учебное пособие / Под ред. Е.Б. Моргунова, М., 2001, 464 с.
10. *Скиданов И.П.,* Управленческое предвидение (методология, диагностика, дидактика), СПб, 2006, 220 с.
11. *Мескон М.,* Основы менеджмента, М., Дело, 1999, 800 с.
12. *Frost D., Deakin M.,* David Frost's Book of the World's Worst Decisions. New York: Crown, 1983, 144 p. (pp. 21-22).

## ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

***Ստեփան Ստեփանյան***

Ամփոփագիր

Ուսումնասիրված են որոշման ընդունման առանձնահատկությունները բանակցային գործընթացում: Վերլուծված են բանակցային գործընթացում որոշման ընդունման տարբեր սկզբունքները: Դիտարկված են նաև այդ գործընթացում որոշման ընդունման հոգեբանական խոչընդոտները և վարքային թակարդները:

## ОСОБЕННОСТИ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ В ПЕРЕГОВОРНОМ ПРОЦЕССЕ

***Степан Степанян***

Резюме

Изучены особенности и различные принципы принятия решений в переговорном процессе. Рассмотрены психологические барьеры и поведенческие уловки при принятии решений в переговорном процессе.

## THE FEATURES OF DECISION-MAKING IN NEGOTIATION PROCESS

***Stepan Stepanyan***

Resume

Some features of the decision making in negotiation process are studied in the article. Different principles of decision making in negotiation process are analyzed. The psychological barriers and behavioral traps of decision making in negotiation process are considered.

# «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՒՍ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ

***Դավիթ Առաքելյան****

*Բանալի բառեր* ՝ ռազմավարական ընտրություն, ռուս-չինական հարաբերություններ, «ոչ ագահ» վարքագիծ, սեփական անվտանգության ապահովում:

## *«Ռազմավարական ընտրություն» տեսությունը. «ոչ ագահ» քաղաքականություն*

Ռուս-չինական հարաբերությունները Կենտրոնական Ասիայում ուսումնասիրելու համար փորձել ենք հենվել «ռազմավարական (ստրատեգիկ) ընտրություն» (*strategic choice theory*) տեսության վրա՝ այն սինթեզելով էներգետիկ անվտանգության նեոռեալիստական մոտեցումների հետ: «Ռազմավարական ընտրություն» տեսությունը պաշտպանողական ռեալիզմի (*defensive realism*) ճյուղ է և առնչվում է երկրների բնույթի, մյուս երկրներից ակնկալվող սպասելիքների հետ: Ըստ Չարլզ Գլանսերի՝ «ռազմավարական ընտրություն» տեսությունն արտաքին քաղաքական տեսություն է, այն գնահատում է պետության ընտրությունը միջազգային ասպարեզում որոշակի ձեռքբերումների հասնելու տարբերակների շուրջ: Այն նաև համաշխարհային քաղաքականության տեսություն է [1, p. 15]: «Ռազմավարական ընտրությունը» ռացիոնալ տեսություն է, որը մեկնաբանում է պետության արտաքին քաղաքականության հնարավոր գործողությունները, մասնավորապես դրանք կապելով որոշ նպատակների հասնելու համար պետության որդեգրած քայլերի հետ: Ուրեմն, ի՞նչ ռազմավարություն պետք է որդեգրի պետությունը, որպեսզի դիմակայի հնարավոր սպառնալիքներին ու մարտահրավերներին և մեղմացնի հնարավոր լարվածությունը: Հոդվածում ռուս-չինական հարաբերություններն ուսումնասիրվել են հիմնականում նեոլիբերալիստական մոտեցումների շրջանակներում: Այս տեսությունը հիմնված է մյուս պետությունների քաղաքականության մասին պետության պատկերացումների և դրանց համարժեք պատասխան տալու ճանապարհների վրա:

* ՉԺՀ Շանդոնգի համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ:

***Համագործակցության ակունքները.*** **ահաբեկչության դեմ համատեղ պայքարելու անհրաժեշտություն.** Կենտրոնական Ասիայի պետություններում առկա են անջատողական և ահաբեկչական կազմակերպություններ, որոնք համագործակցում են ՉԺՀ Սինցզյան-ույղուրական ինքնավար շրջանի ահաբեկչական մարմինների հետ: Տարածաշրջանում տնտեսական և քաղաքական կայունությունն ապահովելու համար ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Չինաստանի համար յուրաքանչյուր ահաբեկչական տարրի չեզոքացումը հրամայական է: Ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում Ռուսաստանի և Չինաստանի շահերը համընկնում են: Չինաստանի արևմտյան նահանգները բնակեցված են մեծաքանակ մահմեդական բնակչությամբ, և ցանկացած անջատողական շարժում կարող է հանգեցնել քաղաքական մեծ անկայունության: Ռուսաստանի պարագայում Մոսկվան 1991 թվականից ինտենսիվ պայքար է մղում ահաբեկչության դեմ, մասնավորապես հակաահաբեկչական ահռելի աշխատանք է տարել չեչենական ծայրահեղական շարժումների դեմ: Սահմանային անվտանգությունը դարձել է երկու երկրների ներքին և արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը:

**Քաղաքական և տնտեսական շահերի տարանջատումը.** Տնտեսական ներգրավվածությունը կամ տնտեսական էքսպանսիան իրականության մեջ չի նշանակում և չի պահանջում ռազմաքաղաքական էքսպանսիա: Այս երկու դրույթները հիմնականում կախված են պետությունների որդեգրած ռազմավարությունից: Պետություններն իրենց սեփական անվտանգության ապահովման, որոշակի շահերի հետապնդման ճանապարհին ամենևին էլ կարիք չունեն «ագահ» (*greedy*) վարքագիծ դրսևորելու՝ որպես արտաքին քաղաքականության լավագույն միջոց: Ինչ վերաբերում է Չինաստանին, Պեկինը բազմիցս ապացուցել է, որ իր տնտեսական ընդարձակումը քաղաքական նպատակների հետ ոչ մի կերպ չի առնչվում: Որպեսզի ճիշտ պատկերացում կազմենք Կենտրոնական Ասիայում Չինաստանի շահերի և Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների վերաբերյալ, անդրադառնանք մի քանի էական տարրերի մանրակրկիտ ուսումնասիրմանը:

**Անկախ փոփոխականներ.** «Ռազմավարական ընտրություն» տեսության շրջանակներում կարևոր է նախ հասկանալ, թե որոնք են ռուս-չինական հարաբերությունների անկախ փոփոխականները.

*1. Տեղեկացվածություն դիմացինի շարժառիթներից.* վերոնշյալ տեսությունը ներառում է երկու տեսակի շարժառիթ՝ «անվտանգություն» (*security*) և «ագահություն» (*greed*): Չինաստանը բացարձակ անվտանգություն հետապնդող պետություն է, նրա առաջնային նպատակը տարածքային ամբողջականության և սահմանային անվտանգության ապահովումն է: Չինաստանի պարագայում

շեշտը դրվում է սահմանային և տնտեսական անվտանգության վրա: Շարժառիթների համատեքստում «ագահ» պետությունները փորձում են էքսպանսիայի լրացուցիչ աղբյուրներ գտնել՝ ինչպես տարածքային, այնպես էլ գաղափարական: Նույնիսկ գաղափարական էքսպանսիան «ագահ» վարքագծի գործոն է դիտվում: Վերոնշյալ տեսության շրջանակներում կարելի է առանձնացնել չորս կատեգորիայի երկրներ՝ բացարձակ անվտանգություն հետապնդող (*pure security seeker*), «ագահ» անվտանգություն հետապնդող (*greedy security seeker*), «ագահ ոչ անվտանգություն» հետապնդող (*greedy non-security seeker*), «ոչ ագահ ոչ անվտանգություն հետապնդող» (*non-greedy non-security seeker*): Այս տեսության շրջանակներում Չինաստանը կարելի է դասել բացարձակ անվտանգություն հետապնդող երկրների շարքին: Անվտանգությունը Չինաստանի ազգային ռազմավարության առաջնային դրույթն է, որի ապահովումը հնարավորություն է տալիս հետապնդել այլ նպատակներ (մասնավորապես՝ ներքին առաջընթացի հետ կապված հիմնախնդիրներում): Կենտրոնական Ասիայում Չինաստանը մոտիվացված է որոշ հստակ շարժառիթներով, որոնք մեծապես կախված են երկրի սահմանային անվտանգության և սեփական տնտեսության առաջխաղացման համար անհրաժեշտ էներգետիկ ռեսուրսների պահանջից: Չինաստանը հնարավոր կլիներ բնորոշել որպես «ագահ» երկիր, եթե նրա արևմտյան սահմաններն ապահովագրված լինեին որևէ արտաքին սպառնալիքներից, և այն տարածքային ամբողջականությանը սպառնացող խնդիրներ չունենար: Բացի այդ, եթե Չինաստանը կարողանար սեփական ռեսուրսներով երաշխավորել տնտեսական առաջխաղացումը, որն առավելապես կախված է էներգետիկ պաշարներից և, այնուհանդերձ, շարունակեր դեպի Կենտրոնական Ասիա ծավալվելու իր քաղաքականությունը, այն կարող էր համարվել «ագահ» շարժառիթ: Որպես օրինակ կարելի է դիտարկել հիտլերյան Գերմանիայի ֆենոմենը, որի միակ նպատակը տարածքային էքսպանսիան և Եվրոպայի բնական ռեսուրսներին տիրանալն էր [2, pp. 50–51]: Երբ պետության արտաքին քաղաքականությունը պայմանավորված է բացառապես սեփական երկրում գոյություն ունեցող խնդիրներով, այլ ոչ թե ագրեսիվ միտումներով, նման պետությունը տարածաշրջանային ասպարեզում չի կարող «ագահ» երկիր դիտարկվել:

*2. Ռազմական կարողություն.* Երբ համեմատական ենք անցկացնում Ռուսաստանի և Չինաստանի ռազմական կարողությունների միջև, ապա կարելի է հստակ նշել, որ Ռուսաստանն իր միջուկային ներուժով գերազանցում է Չինաստանին: Ավելին, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հետսառըպատերազմյան շրջանում Չինաստանի շարժառիթներն ու ռազմավարությունը Ռուսաստանի համար սպառնալիք չեն դիտվում: Չինաստանի ազգային ռազմավարությունն

ու ներուժն ավելի շատ հակված են համարվել պաշտպանողական, քան հարձակողական: Արագ տեմպերով զարգացող Չինաստանը չունի բավարար հարձակողական ներուժ՝ սպառնալու Ռուսաստանի գոյությանը և վտանգի ենթարկելու Ռուսաստանի շահերը տարածաշրջանում: Խաղաղ, ոչ պատերազմական պայմաններում ռազմական արդիականացումը ևս որոշիչ գործոն է պետության շարժառիթները հասկանալու համատեքստում: Չինաստանը, լինելով տարածաշրջանային գերտերություն, իր ռազմական ներուժն ամրապնդում է բացառապես սեփական անվտանգության նկատառումներով: Տնտեսական կարողությունը ևս արժանի է հիշատակման: Չինաստանի արագ տնտեսական աճը պահանջում է հարևանությամբ գտնվող շրջաններում հնարավոր բոլոր սպառնալիքների բացառում: Չինաստանի ռազմական առաջընթացը փոխկապակցված է տնտեսական աճի հետ: Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների համատեքստում Չինաստանի շարժառիթները բխում են սեփական տնտեսական շահերից:

**Կախյալ փոփոխականներ.** Առանցքային կախյալ փոփոխական կարելի է դիտարկել պետության ռազմավարությունը և ներգործությունը տարածաշրջանային անվտանգության վրա: Չինաստանի տարածաշրջանային ռազմավարությունը մանրակրկիտ մեկնաբանված է «Սպիտակ թղթում» [3]: Չինաստանի համար Կենտրոնական Ասիան աշխարհագրական տարածք է, որտեղ նա փորձում է ձեռք բերել էներգետիկ ռեսուրսներ սեփական տնտեսության աճն ապահովելու նպատակով: Չինաստանը գլոբալ մակարդակում առաջարկում է նաև տարատեսակ նախագծեր տարածաշրջանի զարգացումը խթանելու համար: ՇՀԿ (Շանհայի համագործակցության կազմակերպություն) շրջանակներում այս երկիրը ձգտում է պահպանել տարածաշրջանային կայունությունը և աջակցել Կենտրոնական Ասիայի պետություններին՝ ներգրավվել տարածաշրջանային քաղաքականությունում որոշումներ կայացնելու գործընթացներում: Ինչ վերաբերում է «Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտի» նախագծին, ապա այն նոր քայլ է Կենտրոնական Ասիայի միջոցով դեպի Եվրոպա տնտեսական նոր ուղիներ հարթելու, նոր հնարավորություններ ստեղծելու և միջանցիկ երկրների տնտեսությունների զարգացմանն անհրաժեշտ ներդրումներ կատարելու համար: Չինաստանի պատմական փորձը և ներկայիս բազկավեկտոր միջազգային քաղաքականությունը թույլ են տալիս ենթադրել, որ Չինաստանի ազդեցությունը Կենտրոնական Ասիայի անվտանգության վրա ուրույն տեղ է զբաղեցնում վերջինիս որդեգրած տարածաշրջանային քաղաքականության մեջ:

«Ռազմավարական ընտրություն» տեսության շրջանակներում կարող ենք փաստել, որ Չինաստանի վերածվելը տարածաշրջանային գերտերության տնտեսական ներուժի համատեքստում խաղաղ գործընթաց է լինելու: Շատ մասնա-

գետներ պնդում են, որ երկրի առաջընթացը չի կարող խաղաղ լինել, և անվտանգության մրցավազքն անխուսափելի է: Որևէ համընդհանուր տեսակետ չկա այն հարցում թե Կենտրոնական Ասիայում վերելք ապրող Չինաստանը պետք է մրցակցություն ստեղծի անկում ապրող Ռուսաստանին: Եթե անկում ապրող պետությունը վերելք ապրող պետությունը համարում է քաղաքական մրցակից, ապա հետագա կանխարգելիչ պատերազմը տեսականորեն հնարավոր բնույթ պետք է կրի: Ռուս-չինական հարաբերությունների դեպքում Ռուսաստանը լավ իրազեկված է Չինաստանի շարժառիթների մասին, և Չինաստանի տնտեսական աճը Ռուսաստանի համար շահավետ է տարածաշրջանային կայունությունն ապահովելու համար: Հնարավոր չէ որևէ ակնհայտ գործոն առաջ բերել՝ ապացուցելու համար Չինաստանի էքսպանսիոնիստական նկրտումները: Ռուսաստանի՝ Չինաստանի հանդեպ քաղաքական երկմտանքի վարկածն ի հայտ եկավ միայն այն բանից հետո, երբ վերջինն սկսեց տնտեսական ներդրումներ անել Կենտրոնական Ասիայում: Եթե ուսումնասիրենք անցյալում Ռուսաստանի և Չինաստանի միջև սահմանային վեճերի լուծման դյուրին ընթացքը, ապա կարող ենք հասկանալ երկու երկրների փոխհարաբերությունների բնույթը:

Ռեալիստները պնդում են, որ Չիանաստանը հետապնդում է տարածաշրջանային հեգեմոնիա: Այնուհանդերձ, անհրաժեշտ է շեշտել, որ Չինաստանը կարող է ապահովել վերոնշյալ տարածքային և տնտեսական անվտանգությունը միայն այն դեպքում, եթե չհայտնվի Ռուսաստանի հետ տարածաշրջանային մրցակցության մեջ: Ավելին, միջազգային ասպարեզում Չինաստանն աջակցում է Ռուսաստանին շատ կարևոր հիմնախնդիրներում: Նախ, ԴԱԻՇ-ի (Իրաքի և ալ Շամի իսլամական պետություն) դեմ պայքարում Ռուսաստանի ներգրավվելուց հետո Չինաստանն առաջիններից էր, որ հավանություն տվեց Ռուսաստանի քայլերին և իր աջակցությունը հայտնեց՝ համատեղ պայքարելու ահաբեկիչների դեմ: Հաջորդ հիմնախնդիրը Ռուսաստանի կրիտիկական ներգրավումն էր Ուկրաինայում, մասնավորապես՝ Ղրիմի կցումը Ռուսաստանին: Չինաստանն այս դեպքում ևս փորձեց Ռուսաստանի գործողություններին քաղաքական աջակցություն դրսևորել:

**Տեսության տարբեր դպրոցների մոտեցումները.** Միջազգային համագործակցությունը երկրների արտաքին քաղաքականության կարևոր նախադրյալներից է: Փորձենք վերլուծել տարբեր տեսությունների ուղղությունների մասնագետների մոտեցումները:

***Ռեալիստների մոտեցումը.*** Ռեալիզմն ընդգրկում է հինգ հիմնավորում.

1. Միջազգային հարաբերություններում պետությունները գլխավոր դերակատարներն են [4, p. 10]:

2. Միջավայրը, որում հանդես են գալիս վերոնշյալ դերակատարները, դաժանորեն պատժում է պետություններին, եթե նրանք ձախողում են իրենց կենսական շահերի պաշտպանությունը կամ եթե նրանք հավակնում են իրենց կարիքներից վեր նպատակների: Այսպիսով, պետությունները զգայուն են արժեքների հանդեպ և դրսևորում են ունիտար ռացիոնալ գործակալների պահվածք [5, p. 31]:
3. Միջազգային անիշխանությունն այն հիմնական գործոններից է, որ ձևավորում է պետությունների շարժառիթներն ու վարվելակերպը [6, pp. 27, 54-87]:
4. Անիշխանության պայմաններում պետությունները մտահոգված են ուժով ու անվտանգությամբ և նախատրամադրված են պայքարի և մրցակցության: Ըստ այդմ՝ հաճախ ձախողում են համագործակցել նույնիսկ ընդհանուր շահերի առկայության դեպքում [7, p. 304]:
5. Եվ վերջապես, միջազգային հաստատությունները կարող են ազդել համագործակցության հեռանկարների վրա միայն մարգինալ կերպով [8, p. 50]:

Ռեալիստները՝ ի դեմս Ջոզեֆ Գրիեկոյի, պնդում են, որ պետությունները բնույթով դիրքային են, այլ ոչ թե տրոհված, և չեն շեշտում, որ դիրքայնությունը ստիպում է երկրներին որդեգրել հարձակողական դիրքորոշում՝ առավելագույնի հասցնելու իրենց ձեռքբերումների տարբերությունները, որոնք կարող են ձևափոխվել համագործակցությունից դեպի սեփական շահեր անցնելով [9, p. 505]: Ըստ Քենեթ Ուոլցի՝ ուժի քաղաքականությունը նոր դիվանագիտության ծնունդի է հանգեցնում, որով կարող է սկիզբ դրվել նոր համագործակցության, վերջինիս պահպանման, ընդհուպ մինչև քայքայման համար [10, p. 165]: Քենեթ Ուոլցը նաև պնդում է, որ պետություններն անորոշ պատկերացումներ ունեն միմյանց հետագա մտադրությունների վերաբերյալ, մեծ կարևորություն են տալիս այն հանգամանքին, թե ինչպես համագործակցությունը կարող է ազդել հարաբերական կարողությունների վրա: Ալասթեր Սմիթը պնդում է, որ պոտենցիալ ագրեսորը հավանաբար հարձակողական դիրքորոշում կստանձնի ոչ այնքան հուսալի միության, որքան փորձված, հուսալի միության դեմ [11, p. 499]: Ըստ նրա մոդելի՝ ծանրագին համագործակցությունն ազգերի մեջ կարող է կերտվել ընդհանուր շահեր ունենալու դեպքում:

***Նեոլիբերալիստների մոտեցումը.*** Համագործակցության համատեքստում նեոլիբերալիստները պնդում են, որ միջազգային հաստատությունները միակ հուսալի ձևաչափն են կայուն համագործակցություն հաստատելու համար, քանզի այն կրճատում է հարաբերությունների վավերացման գինը և առավել հեշտ լծակ-

ներ է ընդգրկում միջազգային հարաբերություններում օրինազանցներին պատժելու համար: Ըստ Քոհանի՝ համաշխարհային ռեժիմների հայեցակարգը նախապատվությունը տալիս է պետությունների կարողություններին, բայցևայնպես տարբերվում է պատերազմական իրադրության վերաբերյալ ռեալիստների առանցքային ենթադրություններից, այն է՝ պատերազմական իրավիճակում համագործակցել և հասնել փոխշահավետ ձեռքբերումների [12, p. 21]: Նա պնդում է, որ հեգեմոն ուժը երկրների միջև համագործակցություն թելադրելու մեծ կարողություն ունի, որը միջազգային հաստատությունների օգնության միջոցով ավելի բարդ խնդիր է հանդիսանում: Նա եզրափակում է. «Հեգեմոնիայից հետո ստեղծվելիք միջավայրում համագործակցության մասին մտորելիս պետք է նախապատվությունը տալ հաստատություններին»: Աքսելռոդը պնդում է, որ տարբեր երկրների միջև համագործակցություն քարոզելը հարաբերություններին ամրություն հաղորդելու լավագույն միջոցն է, իսկ սա նշանակում է, որ տարբեր ինստիտուցիոնալ մեխանիզմներ կարող են առաջարկել կայունության բազմապիսի բնույթներ, և պետությունները իրենց ապագան որոշելու հնարավորություն ունեն [13, p. 129]:

***Կոնստրուկտիվիստների մոտեցումը.*** Կոնստրուկտիվիստական դպրոցի հետևորդները համագործակցությունը դիտում են ինքնության շրջանակներում: Նրանք պնդում են, որ համագործակցությունը դառնում է ավելի հուսալի, եթե երկրներին միավորում են նույն կամ նմանատիպ ինքնությունը և մշակույթը: Հավաքական ինքնությունը կարևոր գործոն է համագործակցության համատեքստում, քանզի այն խթանում է դերակատարների, այս դեպքում՝ պետությունների շահերի ձևավորումը: Վենդտը պնդում է, որ ինքնությունը երկրներին ուղղորդում է որոշակի միություններ ստեղծելու գաղափարին, քանի որ պետության սպառնալիքները և շահերը սոցիալապես ուղիղ համեմատական են միմյանց [14, p. 397]: Նա նշում է, որ երկրների գործողությունները թշնամիների դեմ տարբերվում են բարեկամ երկրների դեմ որդեգրած նրանց քաղաքականությունից, քանզի թշնամի երկրները սպառնում են պետության անվտանգությանը, իսկ բարեկամ երկրները՝ ոչ:

## *Եզրակացություն*

Ակնկալվում է, որ ռուս-չինական դինամիկ փոխհարաբերությունները կընթանան դրական սցենարով: Մի կողմից՝ Չինաստանը կշարունակի աջակցել Ռուսաստանին միջազգային բոլոր հիմնախնդիրներում՝ ուղղակի, թե անուղղակի կերպով, մյուս կողմից՝ Ռուսաստանը փորձելու է ապացուցել, որ արժանի է տարածաշրջանում բարի համբավ ունեցող բարեկամ երկրի անվանը: Երկու երկրնե-

րի միջև կնքված բազմաբնույթ պայմանագրերը ևս կխթանեն նրանց հարաբերությունների դինամիկ զարգացումը[1]:

Այսուհանդերձ, նման հարաբերությունների արդյունավետությունը կախված է Ռուսաստանի տնտեսության դիվերսիֆիկացիայից՝ արդյունաբերական սեկտորի վերելքից և բացառապես էներգիայի ու ընդերքային ռեսուրսների վրա կենտրոնացած տնտեսությունից արդյունաբերական այլ ճյուղերի անցման հեռանկարներից: Փոխհարաբերությունների նման բնույթը, անկասկած, կամրապնդի Չինաստանի դիրքերը և՛ ռուս-չինական ճակատում, և՛ միջազգային ասպարեզում: Ինչպես քաղաքական վերլուծաբան Զ.Բժեզինսկին է ասում. «Եթե Չինաստանը և Ռուսաստանը դաշնակիցներ դառնան «ամբողջական ճակատի» երկայնքով, ապա սա այն նույն «Հրթլենդի» (*heartland*) սկիզբը կդնի, որի մասին ակնարկում էր Մաքինդերը, և ԱՄՆ-ը կդառնա միայնակ կղզի» [15]: Ավելին, նման համագործակցությունը Կենտրոնական Ասիայում հօդս կցնդեցնի որևէ հնարավոր հակամարտություն, քանզի, ըստ իս՝ Չինաստանը որևէ «հսկող» դեր չի պատրաստվում ստանձնել տարածաշրջանում, և միայն Ռուսաստանի տնտեսական անկումն է, որ որոշակի շրջանակներում ենթադրության պատճառ է դառնում, թե Չինաստանն իր տնտեսական առաջխաղացման հետևում քաղաքական հավակնություններ ունի: Չինաստանը և Ռուսաստանը ոչ միայն կարող են բարեկամ երկրներ, այլև հուսալի դաշնակիցներ լինել, քանզի պատմականորեն և աշխարհագրորեն նրանք բարիդրացիական երկխոսության ավելի մեծ հնարավորությունների են տիրապետում: Ամենաչնչին տարածքային վիճահարույց խնդիրների ժամանակ Ռուսաստանի նախկին վարչապետ Ե.Պրիմակովը բազմիցս նշել է, որ Ռուսաստանը նման հարցերում պետք է ապավինի Չինաստանի տարածաշրջանային ռազմավարությանը:

Երկու կողմերի շահերի տեսանկյունից համագործակցությունը լավագույն ձևաչափն է, իսկ մրցակցությունը՝ դիմացինին զսպելու տարաբնույթ փորձերով հանդերձ, միայն կվատթարացնի տարածաշրջանային կայունությունը: Երկու երկրների շահերից է բխում բարիդրացիական հարևան հարաբերություններ, կայուն տարածաշրջան, հուսալի հարևան և տնտեսական մտերիմ գործընկեր ունենալը: Պեկինն ու Մոսկվան պարտավոր են միավորել իրենց ջանքերը՝ ոչ արագ տեմպերով զարգացող տարածաշրջանի կայունությունը, անվտանգությունն ու առաջընթացն ապահովելու համար: Ըստ բազմաթիվ վերլուծաբանների՝ Կենտրոնական Ասիայում Չինաստանի տնտեսական ներգրավվածությունը

[1] 2014, 2015թթ. Շանհայում և Մոսկվայում Ռուսաստանի և Չինաստանի միջև բազմաթիվ պայմանագրեր կնքվեցին գազի, էներգետիկայի, տնտեսական, բանկային, ճանապարհահաղորդակցային, ռազմական արդյունաբերության և այլ ոլորտների վերաբերյալ:

Ռուսաստանին անհանգստանալու տեղիք է տալիս, որը հիմնավորվում է նրանով, որ Չինաստանի առաջ քաշած «Մետաքսի ճանապարհ» տնտեսական նախագիծը կարող է լուրջ մարտահրավեր լինել Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ): Մեր կարծիքով՝ Չինաստանը որևէ մտադրություն չունի ազդելու ԵՏՄ գործունեության վրա, որի հիմքում ընկած են Ռուսաստանի և հետխորհրդային երկրների պատմական կապն ու ներկայիս փոխկախվածությունը: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նշել է, որ «Մետաքսի ճանապարհ» տնտեսական նախագիծն ու ԵՏՄ-ն ներդաշնակորեն փոխլրացնում են միմյանց [16]:

ՉԺՀ արտգործնախարար Վանգ Յին վերջերս ունեցած ելույթում ասել է. «Չինաստանը և Ռուսաստանն ունեն տնտեսական փոխլրացման մեծ ներուժ և համատեղ աշխատելու խոր ցանկություն: Հենվելով մեր համագործակցության երկարաժամկետ և ռազմավարական բնույթի վրա՝ ես հավատացած եմ, որ մեր միջև ծագած ոչ մի ժամանակավոր խնդիր խոչընդոտ չի հանդիսանա մեր բազմակողմանի համագործակցությունը խորացնելու ճանապարհին» [17]:

***Հունիս, 2016թ.***

## Աղբյուրներ և գրականություն


1. *Glaser, CHarles L.,* Rational theory of international politics : the logic of competition and cooperation [M], Princeton University Press, 2010.
2. *Robert Jervis,* Perception and Misperception [M].
3. Government of the People's Republic of China, *White Paper on China's Peaceful Development* (2011), p. 3, http://www.gov.cn/english/official/2011-09/06/content_1941354_2.htm
4. *Morgenthau,* Politics Among Nations [M].
5. *Kenneth Waltz,* Reflections on Theory of International Politics: A Response to My Critics in Keohane, Neorealism and its critics [C].
6. *Stanley Hoffmann,* The State of War: Essays in the Theory and Practice of International Politics [J], (New York: Praeger, 1965).
7. *Robert Gilpin,* "Political Realism," [M].
8. *Stanley Hoffmann,* "International Organization and the International System," in Leland M. Goodrich and David A. Kay [J], eds., *International Organization: Politics and Process* (Madison: University of Wisconsin Press, 1973).
9. *Joseph M. Grieco,* Anarchy and the limits of cooperation [J], International Organization, 42.
10. *Kenneth N. Waltz*, Theory of International Politics [M], McGraw-Hill, USA, 1979.
11. *Alastair Smith,* Alliance Formation and War, Washington Univeristy, International studies Quarterly (1995).
12. *O.Keohane,* "International Institutions and State Power [M], Westview press, 1989.
13. *David M.Axelrod,* Evolution of Cooperation [M].
14. *Alexander Wendt,* Anarchy is what States Make of it: The Social Construction of Power Politics [J], International Organization, Vol. 46, No. 2 (Spring, 1992).

15. *Brzezinski Zbigniew,* Toward a Global Realignment". http://www.the-american-interest.com/2016/04/17/toward-a-global-realignment/
16. *Lexander Gabuev,* Eurasian Silk Road Union: Towards a Russia-China Consensus?, in The Diplomat, 5 June 2015, http://thediplomat. com/?p=57288
17. "China-Russia relations "mature" and "stable": FM " Xinhua Net, 8 March 2016. http://news.xinhuanet.com/english/2016-03/08/c_135166990.htm

## «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՒՍ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ

***Դավիթ Առաքելյան***

Ամփոփագիր

Ռուսաստանի և Չինաստանի հարաբերությունները ստացել են նոր ձևաչափեր, հատկապես 2014 և 2015թթ. նոր կարևոր պայմանագրերի ստորագրումից հետո: Տարածաշրջանային համագործակցության զարգացման համատեքստում պատժամիջոցներից տնտեսապես թուլացած Ռուսաստանի համար կարևոր էր ազդեցության պահպանումը Կենտրոնական Ասիայում: Չինաստանն իր հերթին ձգտում էր ապահովել իր էներգետիկ անվտանգությունը և հոգալ երկրի արևմտյան սահմանների անվտանգության մասին՝ ձևավորվող Չինաստան-Ռուսաստան-Կենտրոնական Ասիա եռանկյունում: Հոդվածի նպատակն է ցույց տալ, թե ինչպես գլխավոր ուժերը, միջազգային միջավայրից և քաղաքական փոփոխություններից կախված, պետք է կառուցեն արտաքին հարաբերությունները հարևան երկրների հետ: «Ռազմավարական ընտրության» տեսությունն օգտագործվում է որպես տեսական հիմք ռուս-չինական հարաբերությունների դիտարկման համար:

## ТЕОРИЯ «СТРАТЕГИЧЕСКОГО ВЫБОРА» И РОССИЙСКО-КИТАЙСКИЕ ОТНОШЕНИЯ В ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ

***Давид Аракелян***

Резюме

Отношения между Россией и Китаем приобрели новый формат, особенно после подписания новых важных контрактов в 2014 и 2015гг. Региональное сотрудничество между ними увеличилось, что особенно важно в контексте западных санкций, сказывающихся на экономике России. В такой ситуации Россия нуждалась в усилении своего присутствия в Центральной Азии, а Китай нуждался в обеспечении своих энергетиче-

ских потребностей и безопасности западных границ, что и заложило основу сотрудничества для треугольника Китай – Россия – Центральная Азия. Цель статьи – показать, как главные силы, зависящие от международной среды и политических изменений, смогут сформировать связи с соседними странами. Теория «Стратегического выбора» используется как основа для анализа китайско-российских отношений.

## STRATEGIC CHOICE THEORY AND THE SINO-RUSSIAN RELATIONS IN CENTRAL ASIA

*Davit Arakelyan*

Resume

Relations between China and Russia shape new patterns, especially after several important agreements signed in 2014 and 2015. With its economy weakened due to Western sanctions, Russia needs to keep under its influence in Central Asia in the context of regional cooperation. In turn, China needs to secure its energy demands, and take care of the security of the country's western boundaries in the emerging China-Russia-Central Asia triangle. The main objective of the article is to show how the major powers can design their foreign policy with neighboring countries depending on the global environment and international political shifts. "Strategic Choice Theory" is used as a theoretical framework to examine the Sino-Russian relations.

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

***Վաչիկ Բրուտյան****

*Բանալի բառեր* ՝ մանկավարժական մարդաբանություն, փիլիսոփայական մարդաբանություն, կրթության փիլիսոփայություն, մարդաբանական գիտություններ:

Մանկավարժական մարդաբանությունը կրթության փիլիսոփայական ուղղություն է, ծագել է հին դասական շրջանում և շարունակում է զարգանալ առ այսօր: Նրա տեղն ու դերը մանկավարժական գիտությունների համակարգում պատմական տարբեր ժամանակաշրջաններում եղել է տարբեր:

Մանկավարժական մարդաբանությունն ինտեգրված գիտակարգ է, ուսումնասիրում է մարդու դաստիարակությանը և ձևավորմանը նպատակամիտված գործունեության օրինաչափությունները, ուղիներն ու մեթոդները՝ մարդու բնույթի վերաբերյալ փիլիսոփայական պատկերացումներին, էվոլյուցիոն զարգացմանը համապատասխան:

Մանկավարժական մարդաբանության ժամանակակից գիտակարգն առանձնանում է ընդգրկունությամբ և բազմազանությամբ: Մարդը՝ որպես դաստիարակության օբյեկտ և սուբյեկտ, ուսումնասիրվում է տարբեր մշակույթների, տարբեր երկրների, պատմական զարգացման տարբեր ժամանակաշրջանների համատեքստում: Մանկավարժական մարդաբանության հիմքը մարդ–մարդ, մարդ–մարդկություն հարաբերությունների տիպերն են, ինչպես նաև փիլիսոփայական մարդաբանության և մանկավարժության անմիջական կապերը: Մանկավարժական մարդաբանությունը փիլիսոփայական մարդաբանության դիրքերից դիտարկում է կրթության տեղը մարդ սոցիալական երևույթի ձևավորման մեջ: Իսկ սոցիալական և մշակութային մարդաբանությունների տվյալները ներառում են երեխաների և դեռահասների ագրեսիվության հետազոտական խնդիրներ. ուսումնասիրվում է վտանգավոր խաղերի, խուզարկային և սարսափ ֆիլմերի բացասական ազդեցությունը երեխաների մեջ դաժանության հակվածության ձևավորման վրա: Մանկավարժական մարդաբանությունը նախազգուշացնում է

* «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր, մանկ.գիտ.թ., դոցենտ:

երեխաների վրա սպանությունների, մահվան պատմություններով խաղերի բացասական ազդեցության և նրանց մեջ չարության ու դաժանության որոմ սերմանելու անթույլատրելիության մասին:

Արդիական են մանկավարժական մարդաբանության առջև դրված հետևյալ խնդիրները.

ա) ի՞նչ տեղ ու դեր և իրավական կարգավիճակ ունի երեխան ժամանակակից հասարակության մեջ,

բ) ո՞վ և ի՞նչ միջոցներով կարող է ազդել երեխայի գիտակցության ձևավորման վրա,

գ) ի՞նչ պատասխանատվություն է կրում ժամանակակից հասարակությունը երեխայի իրավունքների ոտնահարման համար [1, էջ 7]:

Արդի մանկավարժական մարդաբանությունը ոչ միայն տեսական, այլ նաև կիրառական գիտակարգ է. նրա ուսումնասիրության նյութերն ու տեսական եզրահանգումները անմիջականորեն գործադրվում են պրակտիկ մանկավարժության մեջ:

Արդի մանկավարժական մարդաբանությունը՝ իբրև գիտակարգ, այնուամենայնիվ, դեռևս կազմավորման փուլում է: Այն ունի մեթոդաբանական և հետազոտական բնույթի բազմաթիվ խնդիրներ. դա և՛ մանկավարժական մարդաբանության առարկայի խնդիրն է, և՛ նրա կարգավիճակը մարդաբանական ու մանկավարժական այլ գիտակարգերի թվում, և՛ դաստիարակվող ու դաստիարակող մարդու հետազոտության մեթոդների խնդիրը:

Կյանքի իմաստի փիլիսոփայական խնդրի լուծումը պայմանավորում է մանկավարժական գաղափարի ձևավորումը և ներգործությունը. գաղափար, որի դերը չափազանց կարևոր է կրթության գործընթացի համար: Մարդաբանական պատկերացումները կարևոր դեր են խաղում մանկավարժության տեսություն ստեղծելիս և որոշում են նրա գաղափարները, սկզբունքները, առանցքային հասկացությունները և նպատակները: Մանկավարժության տեսությունն իր հերթին սահմանում է մանկավարժական պրակտիկայի սկզբունքներն ու ձևերը:

Որպես իմացության ինքնուրույն բնագավառ՝ զարգացման փուլում գտնվող մանկավարժական մարդաբանությունը բնութագրվում է գաղափարների և հայացքների բազմազանությամբ, հարացույցի բացակայությամբ, իսկ մեթոդաբանական խնդիրներ լուծելիս՝ տարակարծություններով:

Հարկ է պարզել՝ ինչպիսի՞ն է հետազոտությունների վիճակը մերօրյա մանկավարժական մարդաբանության մեջ. գոյություն ունի՞ այն որպես հատուկ հետազոտությունների գիտական բնագավառ, ո՞րն է նրա կարգավիճակը, առարկան, խնդիրների դաշտը մանկավարժական գիտությունների համակարգում:

Հնարավո՞ր է, արդյոք, հասնել մանկավարժական մարդաբանության զարգացման այնպիսի փուլի, երբ նրան բնորոշ կլինեն գիտականորեն ընդունելի սկզբունքներ, դրույթներ և տեսություններ:

Մանկավարժական մարդաբանության տեղի հարցը մանկավարժական գիտակարգերի մեջ և մարդաբանական գիտությունների համակարգում շարունակում է տարբմբռնումների և տարակարծությունների տեղիք տալ: Հատկացնո՞ւմ ենք, արդյոք, մանկավարժական մարդաբանությունը մարդաբանական գիտակարգերի թվին, որոնցից յուրաքանչյուրն ինքնաբավ է, թե՞ դասում ենք մանկավարժական գիտությունների համակարգին: Շեշտադրում ենք «մանկավարժակա՞ն» բառը՝ ընդգծելով նրա պատկանելությունը մանկավարժության ոլորտին, թե՞ «մարդաբանություն» բառը՝ համարելով, որ վերջինս անվանման մեջ իմաստային առավել շատ բեռնվածություն է կրում: Առաջին հայացքից ոչ էական թվացող այս օրինակ տերմինաբանական նրբությունները ցույց են տալիս մանկավարժական մարդաբանության կարգավիճակի խնդրի բարդությունն ու կարևորությունը:

Մանկավարժական մարդաբանությունը, ըստ մեր ընկալումների, մարդու մասին ամբողջական, ներքուստ փոխկապակցված պատկերացումների համակարգ է, որն ընկած է որոշակի մանկավարժական տեսության հիմքում և աշխարհայացքային, մեթոդաբանական ու համակարգակազմիչ դեր է կատարում այդ տեսության ստեղծման ու գործառության մեջ:

Մանկավարժական մարդաբանության ժամանակակից վիճակը, ըստ մեր գնահատման, բնորոշվում է հետազոտության առարկայի, սկզբունքների, մեթոդների և միջոցների անհստակ սահմանմամբ, հետազոտության նպատակների և խնդիրների չտարորոշվածությամբ: Այդ պատճառով էլ խնդիրները լուծելիս շահեկան կարող է լինել մարդաբանական այնպիսի պատկերացումների վերլուծությունը, որոնք կարևոր դեր են ունեցել անցյալի մանկավարժական տեսությունների ստեղծման գործում:

Հայաստանում ընդհանուր զարգացման մարդասիրական միտումները հետաքրքրություն են առաջ բերում մանկավարժական մարդաբանության՝ որպես համակողմանի գիտելիքների հիման վրա մարդու դաստիարակությանը վերաբերող գիտության, նկատմամբ: Դրա հետ կապված՝ ծագում են հարցեր, մասնավորապես՝ մանկավարժական մարդաբանությունն ընդհանուր առմամբ մարդուն հասկանալու ի՞նչ գիտական ներուժ է կրում, այդ առումով ի՞նչ մանկավարժական խնդիրներ են ծառացած նրա առջև, ինչպե՞ս պետք է համաձայնեցնել տարբեր գիտությունների հայեցակետերը մարդու խնդրի շուրջ:

Մարդաբանական տարբեր գիտությունների փոխկապակցված ուսումնասիրության համար դիմենք միջգիտակարգային մոտեցումներին՝ աղբյուրների և

հայեցակարգավորման համեմատական վերլուծության մեթոդներին. դրանք կօգնեն մարդու խնդիրը դիտարկել մարդաբանական գիտությունների հանգակետում: Աղբյուրների համեմատական վերլուծության մեթոդն ապահովում է մարդ երևույթի ըմբռնման ամբողջական օբյեկտիվ պատկերի վերականգնումը, իսկ հայեցակարգավորման մեթոդը նպաստում է հետազոտական դրույթների և մարդաբանական գիտության կառուցվածքի սկզբունքների բացահայտմանն ու մեկնաբանության տրամաբանական համակարգի որոշարկմանը:

«Մարդաբանություն» հասկացությունը հայտնի է XVI դարից՝ Մ.Հանդտի «Մարդաբանությունը մարդու արժանապատվության, բնույթի ու հատկությունների մասին և մարդու մարմնի տարրերի, մասերի, անդամների մասին» և Օ.Քասմանի «Մարդաբանական հոգեբանություն կամ ուսմունք մարդկային հոգու մասին: Մարդու մարմնի կառուցվածքի մասին՝ մեթոդական նկարագրությամբ» աշխատությունների ի հայտ գալուց ի վեր: Ելակետային առումով քիչ թե շատ մարդաբանական գիտություն էր կենսաբանությունը: Հետազոտողները հաստատում են, որ մարդաբանության նախնական նշանակությունը եղել է մարդու կազմաբանական, գոյասերման, ազգաբանական առանձնահատկությունների հետազոտությունը [2]:

XIX դարից մարդաբաններն սկսեցին ուսումնասիրել պարզունակ հասարակության և ցեղերի կյանքն Աֆրիկայում և Ավստրալիայում: Գիտության զարգացմանը զուգընթաց՝ մարդու ուսումնասիրության հարաչափերի թիվը նշանակալիորեն ավելացավ: XX դարում ի հայտ եկավ «տարածաշրջանային», «շեշտադրված», մարդուն տարբեր տեսանկյուններից զննող մարդաբանական գիտակարգերի բազմություն: Առանձնացվում են մարդաբանության մի շարք գիտակարգեր՝ փիլիսոփայա-կենսաբանական, մշակութային-փիլիսոփայական, փիլիսոփայա-կրոնական, հոգեվերլուծական, պատմական, քաղաքական, քրիստոնեական, հոգեբանական, մանկավարժական, փիլիսոփայական, մշակութային, հանրային, իրավաբանական, տնտեսագիտական, բնապահպանական, կիրառական, գործարարական, կիբեռնետիկական, դիտողական և այլն: Մարդաբանական տարաբնույթ տեսությունների առանձնացման գլխավոր սկզբունքը մարդու մտածողության, կամքի, վարքի հետազոտության պահանջն է:

Մանկավարժական մարդաբանության առարկա են դիտվում ձևավորվող ու զարգացող մարդը, մարդու մեջ մարդկայինի հաստատումը, մարդու երևույթը կրթության համատեքստում:

Արդի մանկավարժա-մարդաբանական հետազոտություններում առանձնացվում են մի շարք հիմնարար խնդիրներ.

ա) մարդու և մարդկայնության փոխազդեցությունը, որը դիտարկում է մար-

դուն որպես պատմական գործընթացի շարժիչ ուժի, որպես հասարակական գիտակցության և ճանաչողության սուբյեկտի՝ կապված պատմության ընթացքին, հանրային կարգին, տարատիպ հանրույթներին,

բ) մեթոդաբանական մոտեցումների առանձնացումը՝ փիլիսոփայա-մարդաբանական, մշակութաբանական, միջավայրային, ներհակական, ընտրանքային, համեմատական և այլն,

գ) մարդու դաստիարակության հիմնարար սկզբունքների սահմանումը, դաստիարակվողի էության մարդաբանական սահմանումը, մարդու մանկությունը, հիմքերը, արժեքները,

դ) մարդու կյանքի երևույթի ուսումնասիրությունը՝ մանկավարժական մարդաբանական տեսանկյունից,

ե) մանկավարժական մարդաբանության տեղի որոշումն իմացության այլ բնագավառների մեջ:

Ժամանակակից մանկավարժական մարդաբանությունը հարստանում է տարբեր գիտություններից, այդ թվում նաև մարդաբանական տարբեր ուղղություններից (փիլիսոփայական, կրոնական, մշակութային, սոցիալական, հոգեբանական և այլն):

Փիլիսոփայական մարդաբանությունը մարդուն ընդունում է որպես ամբողջական, ունիկալ երևույթ. դա ժամանակակից մանկավարժական մարդաբանության առաջատար սկզբունքն է:

Օ.Բոլնովի հայեցակարգը մարդուն ընդունում է որպես ի սկզբանե պահանջմունքներ, ընդունակություններ ունեցող էակ, որն ակտիվորեն ընդգրկվում է դաստիարակչական գործընթացում:

Ֆիզիկական մարդաբանությունը մարդուն ուսումնասիրում է որպես բանական մարդու՝ *Homo sapiens* տեսակի միակ ներկայացուցիչ, և առաջին հերթին նրան հետաքրքրում է մարդու օրգանիզմը:

Կրոնական մարդաբանությունը մարդուն դիտարկում է որպես Աստծո կողմից ստեղծված էակ, հետաքրքրվում է մարդու հոգեկան ոլորտով:

Մշակութային մարդաբանությունը մարդուն դիտարկում է նրան շրջապատող մշակութային, հասարակական-տնտեսական հարաբերությունների, ավանդույթների, ինչպես նաև դաստիարակչական համակարգերի, դաստիարակների հետ սերտ կապի մեջ:

Հոգեբանական մարդաբանությունը մարդուն ուսումնասիրում է որպես անհատ (հետաքրքրությունները, մարդու հոգեկան գործունեությունը) և որպես անձ (մարդը բնորոշվում է հոգեկանի այն գծերով, որոնք նրան թույլ են տալիս ապրել հասարակության մեջ):

Մանկավարժական մարդաբանությունը, ներառելով բնագիտական, փիլիսոփայական, հոգեբանական, սոցիալական, մանկավարժական, անատոմիական և այլ պատկերացումներ մարդու մասին, բացահայտում է ոչ միայն երեխայի, այլ նաև ողջ մանկավարժական գործընթացի ամբողջական կերպը, վերլուծում է դրա արդյունավետ ներդրման մանկավարժական-հոգեբանական պայմանները:

Կարևոր խնդիր է մանկավարժական մարդաբանության և մանկավարժության փոխհարաբերության որոշումը: Մանկավարժության և մանկավարժական մարդաբանության ընդհանուրը մարդու՝ որպես զարգացող էակի, ըմբռնումն է: Մանկավարժական մարդաբանությունը հանդես է գալիս նաև որպես ընդհանուր մարդաբանության և մանկավարժության միջնօղակ: Վ.Սլոբոդչիկովը մանկավարժական մարդաբանությանն է հատկացնում նաև կրթության մարդաբանությունը: Նրա հիմնական բնութագրերը որոշվում են իրապես գոյություն ունեցող, մշտապես թարմացման գործընթացում գտնվող կրթական պրակտիկայով: Կրթության մարդաբանությունը ցույց է տալիս, որ կրթության մեջ մարդաբանական հարացույցի ձևավորման ուղիներն ընկած են մարդաբանության նոր գիտական և արտագիտական իմացության ոլորտում: Այն ստիպում է գիտնականներին և քաղաքագետներին հիմնավորել կրթական գործունեության երևակումը մարդու բնույթի, հետաքրքրությունների և արժեքների վրա [3]:

Հոգեբաններն ընդգծում են Կ.Ուշինսկու հռչակած մարդաբանական սկզբունքի՝ մարդու ամբողջական՝ ֆիզիկական, մտավոր, բարոյական ուսումնասիրության իրողությունը: Դրա հետ կապված՝ հոգեբանական մարդաբանության մեջ արծարծվում է տարասեռ, խաչաձև կապերով պայմանավորված՝ դաստիարակության համեմատաբար երկար ազդեցության գաղափարը: Երեխայի զարգացման մեջ համասեռ և տարասեռ փոխադարձ կապերի բազմազանությունը Բ.Անանևը համարել է *առաջինը* հոգեբանական մարդաբանության խնդիրներից [4]: *Երկրորդ* նշանակալի խնդիրը մարդու՝ որպես սուբյեկտի, տարատեսակ գործունեությունն է՝ աշխատանքի, հաղորդակցման, ճանաչողության: Գործունեության այդ ձևերում մարդը ստեղծում է հարաբերությունների համակարգ առ ինքը և շրջապատող մարդիկ: *Երրորդ* խնդիրն աշխարհայացքային բաղադրիչների առանձնացումն է մարդու մտածողության և գործունեության ըմբռնման մեջ:

Ամենից հաճախ քննարկվում են փիլիսոփայական մարդաբանության և մանկավարժական մարդաբանության կապերը: Փիլիսոփայական մարդաբանության մեջ առանձնացնում են մարդու և նրա կենցաղի բազմաչափությունը [5, 6]: Դիտարկվում են հարցեր, թե ի՛նչ է մարդը, ո՛րն է նրա բնույթն ու էությունը, ի՛նչ օրինաչափություններ ու գործառման մեխանիզմներ են տրված նրան բնությունից, ի՛նչ ձեռքբերումներ կան մշակութային պատմության մեջ, որո՛նք են նրա

զարգացման բնութագրական առանձնահատկությունները և ուղղությունը, ո՛րն է նրա ժամանակակից կենցաղի անկրկնելի ինքնատիպությունը, ի՛նչ է մարդն այսօր և ի՛նչ կարող է լինել վաղը: Ընդգծվում է, որ մարդն ունի բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք արտացոլում են նրա յուրակերպությունը: Փիլիսոփայա-մարդաբանական կարգերի մեջ առանձնացվում են «ոգի», «հոգի», «մարմին», «գիտակցություն», «հաղորդակցություն», «կյանք», «մահ», «բարոյականություն» և այլ հասկացություններ: Մարդու առաջատար էական բնութագիրը նրա ոգեկանությունն է [7]:

Բ.Բիմ-Բադը հաստատում է, որ փիլիսոփայական մարդաբանությունը վերացնում և վանում է մանկավարժությունից մատերիալիզմի միակողմանիությունն ու ծայրահեղությունը՝ լրացնելով այն բնության փիլիսոփայությամբ և ոգու փիլիսոփայությամբ, մանկավարժությանը տալիս է համակարգային գիտելիք աշխարհի և մարդու մասին: Որոշ հետազոտողներ մանկավարժական մարդաբանությունը պարզապես հատկացնում են փիլիսոփայությանը՝ որպես նրա տրամաբանական լրացում (Լ.Լիպսկայա, Գ.Նովիչկովա): Մարդն ընկալվում է որպես ինքնորոշիչ էություն, և մարդաբանական փիլիսոփայությունն օգնում է մանկավարժորեն ըմբռնել մարդու գիտակցության և զգացմունքների միջև տեղի ունեցող գործընթացները:

Մանկավարժության մեջ փիլիսոփայական մարդաբանության փոխարկմանը զուգընթաց տեղի է ունենում մարդաբանության փոխարկում փիլիսոփայական մանկավարժության: Նրա նշանակությունն, ըստ հետազոտողների, փիլիսոփայական դիրքորոշումն է դաստիարակության նկատմամբ (Լ.Լուզինա, Բ.Կուլիկով): Փիլիսոփայա-մանկավարժական մարդաբանությունը դիտարկում է մարդու մեջ մարդկային հատկությունների հաստատման մանկավարժական միջոցներն ու եղանակները՝ արտահայտված կենցաղի տարբեր ձևերով՝ երկխոսություն, ըմբռնում, անդրադարձում, ապրում, մարդու՝ որպես դաստիարակող և դաստիարակվող էության, բացահայտում: Փիլիսոփայական մարդաբանությունը, փիլիսոփայա-մանկավարժական մարդաբանությունը և մանկավարժական մարդաբանությունը համեմատելիս աչքի է զարնում այն, որ դրանց փոխազդեցությունը նպաստում է նպատակային, բովանդակային, արժեքային նոր տարրերի ի հայտ գալուն, այսինքն՝ համակարգային նոր որակի ձևավորմանը: Փիլիսոփայական և մանկավարժական մարդաբանությունների փոխկապակցվածությունը կոչված է բացահայտելու իրական մանկավարժական հարաբերությունները և մարդու մեջ մարդկայինի հաստատման գործընթացները: Հարկ է նկատի առնել, որ կան փիլիսոփայական մարդաբանության տարբեր հոսանքներ՝ կրոնական, արժեբանական, գոյարկային (էկզիստենցիալ), երևութաբանական, երկխոսա-

կան, բնութենական, անհատական, անդրադարձ-տրամախոսական և այլն: Մանկավարժության առջև, եթե այն վերաբերում է փիլիսոփայա-մարդաբանական հիմքերին, խնդիր է դրված ստեղծելու կրթական փորձառության սեփական հայեցակարգ: Փիլիսոփայական և մանկավարժական մարդաբանությունների փոխկապակցվածությունը կարող է արտացոլվել միայն հայեցակարգորեն: Այսպիսի հայեցակարգի կառուցման առանցքային բաղադրիչ պետք է լինի այս կամ այն ձևով եռանդագին կենցաղ վարող մարդը, որ դրսևորվում է արժեքային, հոգևոր, հանրային, մշակութային և այլ բնութագրերով:

Մարդամետ կրթության հայեցակարգի կառուցման համար անհրաժեշտ է նաև դիտարկել մանկավարժական մարդաբանության և սոցիալական մարդաբանության կապերը: Սոցիալական մարդաբանությունը դիտարկվում է որպես փիլիսոփայական մարդաբանության մի ճյուղ և մշակութային մարդաբանության ինքնատիպ համարժեք: Այս առումով կարելի է խոսել սոցիալ-մշակութային մարդաբանության մասին, քանի որ այն դիտարկում է մարդու կապերի պատմամշակութային կաղապարները սոցիալական և մշակութային լայն շրջանակով՝ ըստ «մարդ-մշակույթ», «մշակույթ-հանրային կազմավորում» և այլ տիպերի: Մշակութային մարդաբանությունն ուսումնասիրում է մարդու և մշակույթի (սովորույթի, ավանդույթի) կապերի առանձնահատկությունները: Բացի այդ՝ մշակութային մարդաբանությունը դիտարկվում է որպես ընդհանուր մարդաբանության մի մաս, քանի որ օգտագործում է ազգագրության, բանահյուսության, լեզվաբանության, հոգեբանության տվյալները: Մարդը նրանում դիտարկվում է որպես մշակույթի երևույթ: Իսկ սոցիալական մարդաբանությունն ուսումնասիրում է մարդկանց փոխներգործությունը հանրային կառուցվածքներում: Վ.Բարուլինն առանձնացնում է սոցիալական մարդաբանության երեք առանցքային պահ՝ ա) ամբողջական հայացքի ձևավորումը հասարակական կյանքի, հասարակության և մարդու նկատմամբ, բ) հասարակական կյանքի և մարդու կյանքի կապերի վառ արտահայտված հայեցակարգայնությունը, գ) խնդրակարգի, կարգային-հասկացական պաշարի առանձնահատկությունն ու ինքնաբավությունը [8]:

Սոցիալական մարդաբանությունն իր հերթին կապված է սոցիալ-փիլիսոփայական մարդաբանության հետ, որն ուսումնասիրում է մարդու կողմից հասարակության ստեղծման միջոցներն ու եղանակները, քննում է, թե ինչպես է նպաստում մարդու գործունեությունը սեփական գոյության ու գործունեության միջոցների ու պայմանների ստեղծմանը, ինչպես է մարդկային էությունը թափանցում հասարակության բոլոր կառուցվածքները, ինչպես է հասարակությունն իր հերթին փոխազդում մարդու վրա: Այդպիսով սոցիալ-փիլիսոփայական մարդաբանությունն օգնում է բացահայտելու դպրոցի մարդաբանական առանձնա-

հատկությունները՝ ցույց տալով, թե ինչպես են մարդկային բնութագրերը դրսևորվում հանրույթում:

XXI դարի սկզբում ի հայտ եկան հայեցակարգեր՝ հիմնված մարդաբանական գաղափարների վրա: Դրանք ունեն արժեբանական, մշակութաբանական, անհատա-գործաբանական, սոցիոլոգիական, հերմենևտիկական ու մարդաբանական այլ բնութագրեր և մանկավարժություն են ներածում մեթոդաբանական և կարգային նոր միջոցներ՝ վերանայելով մանկավարժական գործընթացի բաղադրիչները մարդակազմավորման գործառույթի լույսի ներքո: Մանկավարժական մարդաբանությունը, լինելով մարդաբանական գիտությունների համակարգում, մանկավարժության համար բացում է իրազեկային լայն տարածություն, որի կենտրոնում մարդն է:

***Հունիս, 2016թ.***

## Աղբյուրներ և գրականություն


1. *Ронжина Н.В.,* Современные проблемы педагогической и юридической антропологии, Екатеринбург, 2006, 112 с.
2. *Добреньков В.И., Кравченко А.И.,* Социальная антропология: учебник, М., ИНФРА-М, 2008, 688 с.
3. *Слободчиков В.И.,* Антропология образования: ее возможность и действительность // Школьные технологии, 2008, №3, с. 3–8.
4. *Ананьев Б.Г.,* Избранные психологические труды: в 2 т., т.2 / под ред. А.А. Бодалева, М., Педагогика, 1980, 288 с.
5. *Куликов В.Б.,* Философско-педагогическая антропология: проблемы и тенденции // Вопросы философии, 1985, №6, с. 132–139.
6. *Лузина Л.М.,* Теория воспитания: философско-антропологический подход, Псков, ПГПИ, 2000, 186 с.
7. *Марков Б.В.,* Философская антропология: учеб. пособие, 2-е изд., СПб., Питер, 2008, 352 с.
8. *Барулин В.С.,* Основы социально-философской антропологии, М., ИКЦ «Академкнига», 2008, 455 с.


# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

***Վաչիկ Բրուտյան***

## Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում են արդի մանկավարժական մարդաբանության՝ որպես միջգիտական ուրույն բնագավառի, մի շարք խնդիրներ: Փորձ է արվում՝ որոշել մանկավարժական մարդաբանության տեղը մարդաբանական և մանկավարժական գիտությունների համակարգում:

## ПЕДАГОГИЧЕСКАЯ АНТРОПОЛОГИЯ В СИСТЕМЕ ПЕДАГОГИЧЕСКИХ И АНТРОПОЛОГИЧЕСКИХ НАУК

***Вачик Брутян***

Резюме

В статье обсужден ряд проблем современной педагогической антропологии как особой междисциплинарной области. Сделана попытка определения места педагогической антропологии в системе педагогических и антропологических наук.

## PEDAGOGICAL ANTHROPOLOGY IN THE SYSTEM OF PEDAGOGICAL AND ANTHROPOLOGICAL SCIENCES

***Vachik Brutyan***

Resume

The article discusses several problems of the modern pedagogical anthropology as a unique inter-disciplinary field. An attempt is made to specify the place of pedagogical anthropology in the system of anthropological and pedagogical sciences.

**«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես**
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 19.07.2016թ.
Թիվ 4 (68), 2016թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում